

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ  
ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Գ Ո Ր Ծ Ա Ռ Ն Ա Կ Ա Ն Ձ Ե Ռ Ն Ա Ր Կ

*Ն ո թ ի ս մ բ ա գ թ ու թ յ ա մ բ*

**Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

<b>Բովանդակություն</b> .....	<b>2</b>
<b>Հասպատումներ</b> .....	<b>36</b>
<b>Նախաբան</b> .....	<b>4</b>
<b>1. Հիմնադրամը</b> .....	<b>5</b>
1.1 Հիմնարար նպատակները.....	5
1.2 Գործունեության հիմնական սկզբունքները.....	
1.3 Ֆինանսավորման աղբյուրներ.....	5
1.4 Հիմնադրամի կառավարումը.....	5
1.4.1 Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը.....	6
1.4.2 Հիմնադրամի տնօրենը.....	7
1.5 Հիմնադրամի անձնակազմը և կազմակերպչական կառուցվածքը.....	8
1.6 Հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերը.....	9
Ընդհանուր.....	9
<b>2 ՀԲ ֆինանսավորմամբ Քաղաքային ջեռուցման ծրագիր</b> .....	<b>10</b>
2.1 ԶԾՆ նպատակներն ու բաղադրիչները.....	10
2.2 Տեխնիկական աջակցություն.....	13
2.3 Ենթավարկավորում.....	15
2.4 Կապիտալ դրամաշնորհի անապահով ընտանիքներին.....	21
2.5 ԱՀՕԳԳ ֆինանսավորմամբ գազի և ջեռուցման ծրագիր.....	21
2.6 Դպրոցների ջերմամատակարարման վերականգնում.....	37
2.7 Հաշվետվություններ և մոնիտորինգ.....	38
2.8 Բնապահպանական ուսումնասիրություն և գնահատումներ.....	41
3 ՀԲ ֆինանսավորմամբ Վերականգնվող Էներգետիկայի ծրագիր.....	46
3.1 Կազմակերպչական կառուցվածքը.....	47
3.2 Ծրագրի նպատակը և բաղադրիչները.....	48
3.3 ՎԷԾ բնապահպանական գնահատումը.....	61
3.4 Գնումների ընթացակարգը.....	63
4 Ֆինանսական կառավարման համակարգ.....	66
5 Համագործակցություն այլ ծրագրերի հետ.....	67
6 Հայաստանի երկրաջերմային ծրագիր.....	67
Հավելված 1 - ՀՀ կառավարության որոշում.....	72
Հավելված 2 - Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կանոնադրություն.....	74
Հավելված 3 - Հիմնադրամի ՀԽ կազմ.....	81
Հավելված 4 - Հիմնադրամի ՀԽ աշխատակարգ.....	82
Հավելված 5 - Հիմնադրամի կազմակերպչական կառուցվածք.....	86
Հավելված 6 - Հիմնադրամի անձնակազմի ընտրության կարգ.....	87
Հավելված 7 - Հիմնադրամի պաշտոնների նկարագրություններ.....	89
Հավելված 8 - Գործակալական պայմանագիր.....	111
Հավելված 9 - Լրացուցիչ համաձայնագիր.....	121
Հավելված 10 - Ենթավարկի օրինակելի պայմանագիր.....	128
Հավելված 11 - Դպրոցի և Հիմնադրամի միջև օրինակելի համաձայնագիր.....	140
Հավելված 12 - Բնապահպանական կառավարման պլան.....	142
Հավելված 13 - Առևտրային պրակտիկայի կիրառմամբ գնումների ընթացակարգեր.....	160
Հավելված 14 - Գործակալության համաձայնագիր.....	162
Հավելված 15 - Դրամաշնորհի տրամադրման համաձայնագիր.....	168
Հավելված 16 - Լրացուցիչ փոխառության համաձայնագիր.....	171
Հավելված 16 Ա - Համաձայնագիր պայմանագրային կողմի փոփոխության մասին.....	246

Հավելված 17 - Ենթավարկի համաձայնագրի օրինակելի ձև.....	248
Հավելված 18 - Ֆինանսական կառավարման ձեռնարկ.....	257
Հավելված 19 - Փոխառության համաձայնագիր.....	282

## Հապավումներ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՄԶԸ	Միջազգային զարգացման ընկերակցություն
ԶՎՀ	Զարգացման վարկի համաձայնագիր
ԳՁ	Գործառնական ձեռնարկ
ՀԽ	Հոգաբարձուների խորհուրդ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ԷԽ	Էներգախնայողություն
ՎԷ	Վերականգնվող էներգետիկա
ՎԷԾ	Վերականգնվող էներգետիկայի ծրագիր
ՀՏ	Հիմնադրամի տնօրեն
ՖՂ	Ֆինանսական դեկավար
ԾՀ	Ծրագրի համակարգող
ԱՀՕԳԳ	Արդյունքահեն Օգնության Գլոբալ Գործընկերություն
ՔԶԾ	Քաղաքային ջեռուցման ծրագիր
ԲՇԿՄ	Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմին
ԽԾ	Խորհրդատվական ծառայություններ
ԼՓՀ	Լրացուցիչ փոխառության համաձայնագիր
ԵՊ	Ենթավարկի պայմանագիր
ԱԸՆԾ	Անապահով ընտանիքների նպաստի ծրագիր
ԲԿՊ	Բնապահպանական կառավարման պլան
ԲԱԳ	Բնապահպանական ազդեցության գնահատում

## Նախաբան

Հայաստանն այսօր գտնվում է անցումային շրջանում, երբ կապիտալի սղության և ֆինանսական հաստատությունների թույլ կապիտալիզացիայի պատճառով դժվար է ֆինանսավորել էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ծրագրերն՝ օգտագործելով այնպիսի մեխանիզմներ, որոնք կիրառվում են ավելի զարգացած ֆինանսական շուկաներում:

Հայաստանի Հանրապետության «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» օրենքը, որն ընդունվել է 2004թ. նոյեմբերին, նպատակ ունի ստեղծել պետական քաղաքականության մեխանիզմներ՝ ապահովելու էներգախնայողությունն ու զարգացնելու վերականգնվող էներգիայի օգտագործումը՝ բարձրացնելով երկրի տնտեսական և էներգետիկ անվտանգության ստանդարտները և կրճատելով շրջակա միջավայրի վրա տեխնադին ազդեցությունը: Օրենքը կանոնակարգում է էներգախնայողության ու վերականգնվող էներգիայի ոլորտում գործունեություն իրականացնող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց միջև փոխհարաբերությունները: Համաձայն օրենքի Գլուխ II, Հոդված 6-ի, ստեղծվում է Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ (այսուհետ՝ Հիմնադրամ), որպես ֆինանսավորման մեխանիզմ՝ Օրենքի նպատակների իրականացման համար:

Այս Գործառնական ձեռնարկը (ԳՁ) սահմանում է սկզբունքներ և իրականացման կանոններ, որոնցով առաջնորդվում է Հիմնադրամը: Այդպիսով, այն ուղեցույց է էներգախնայողության ու վերականգնվող էներգետիկայի ծրագրերի կառավարման, իրականացման և վերահսկման գործառնություններում ընդգրկված հիմնական դերակատարների համար: ԳՁ նպատակ ունի ստեղծել ծրագրի սկզբունքների և կիրառման համընդհանուր ըմբռնում բոլոր շահագրգիռ կողմերի համար և հիմք ստեղծել բոլորի համագործակցության համար:

ԳՁ սահմանում է Հիմնադրամի գործառնությունների հիմնական շրջանակը, ներառյալ գործունեության մանրամասները, ֆինանսական գործիքները, կառավարման կառուցվածքը, գնումների և ֆինանսական կառավարման համակարգը: Այն նախատեսում է վերոնշյալ գործառնությունների ընդհանրական ուղեցույց և չի հավակնում լինել ընդգրկում կանոնակարգ:

ԳՁ բովանդակությունը, ներառյալ նրա հավելվածները, չեն կարող փոփոխվել կամ կրճատվել առանց Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի (ՀԽ) որոշման և հիմնական դոնորների համաձայնության:

## 1. Հիմնադրամը

Հիմնադրամը, որպես ոչ առևտրային հանրօգուտ նպատակներով գործող կազմակերպություն, ինքնուրույն իրավաբանական անձ է՝ անկախ որևէ պետական մարմնից կամ հաստատությունից, որն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի օրենսդրության և հիմնական դոնորների հետ կնքված համաձայնագրերի համաձայն:

Հիմնադրամը ստեղծվել է ՀՀ կառավարության 2005թվականի ապրիլի 28-ի թիվ 799-Ն որոշմամբ (Հավելված 1), իսկ իրավաբանական գրանցումը կատարվել է 2005թ. նոյեմբերի 21-ին:

Հիմնադրամի հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը: Պետական կառավարման լիազոր մարմինն է հանդիսանում ՀՀ վարչապետը:

### ***1.1 Հիմնարար նպատակները***

Հիմնադրամի հիմնական նպատակներն են դյուրիմացնել ներդրումներն Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտներում և նպաստել Հայաստանում Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի շուկաների զարգացմանը:

Հիմնադրամն այդ նպատակներին կհասնի մասնակցելով այդ ոլորտներում քաղաքականության մշակմանը, խոչընդոտների վերացմանը, ֆինանսական հաստատությունների, էներգետիկ ծառայություն մատուցողների, բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների համար հնարավորությունների ստեղծմանն ու զարգացմանը, և իրականացնելով այլ գործողություններ՝ նպատակ ունենալով բարձրացնել ազգային էներգետիկ անվտանգությունը, կրճատել ներմուծվող վառելիքից կախվածությունը և նվազեցնել տնտեսությունում էներգասպառումը:

Հիմնադրամի նպատակներն ու հիմնական գործողություններն ավելի մանրամասն ներկայացված են Հիմնադրամի կանոնադրության մեջ (Հավելված 2):

### ***1.2 Գործունեության հիմնական սկզբունքները***

Իր գործունեության ընթացքում Հիմնադրամն առաջնորդվում է հետևյալ հիմնական սկզբունքներով՝

- Համագործակցություն պետական և մասնավոր հատվածների միջև,
- Գործունեության կազմակերպում որպես անկախ և ինքնավար իրավաբանական անձ,
- Ֆինանսական կայունություն երկարաժամկետ հեռանկարում,
- Անվտանգ և բնապահպանական առումով ընդունելի տեխնոլոգիաների խթանում,
- Ֆինանսական միջոցների կառավարման թափանցիկություն,
- Բոլոր հայտատուների համար ֆինանսավորման հավասար հնարավորությունների ապահովում:

### ***1.3 Ֆինանսավորման աղբյուրներ***

Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է հետևյալ ֆինանսական աղբյուրների միջոցով.

- Նվիրատվություններ/դրամաշնորհներ միջազգային ֆինանսական կառույցների կողմից,
- Ֆինանսավորում երկկողմ և բազմակողմ դոնորներից,
- Ֆինանսավորում ՀՀ կառավարության կողմից,
- Սեփական եկամուտներ,
- Այլ աղբյուրներ:

Իր կանոնադրական խնդիրների իրականացման նպատակով Հիմնադրամը կարող է լրացուցիչ միջոցներ ներգրավել ցանկացած ֆինանսավորող կառույցից կամ կառավարությունից:

### ***1.4 Հիմնադրամի կառավարումը***

Հիմնադրամի կառավարման մարմիններն են Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը և Հիմնադրամի տնօրենը:

#### 1.4.1 Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը

Հիմնադրամի ՀԽ-ը նրա բարձրագույն կառավարման մարմինն է՝ օժտված Հիմնադրամի ընդհանուր ռազմավարական կառավարման իրավասությամբ՝ սահմանված նպատակներին և գործունեության սկզբունքներին համապատասխան:

ՀԽ-ը կազմված է պետական կառավարման մարմինների ներկայացուցիչներից և որակավորված փորձագետներից՝ պետական, մասնավոր և հասարակական հատվածներից, որոնք ունեն համապատասխան գիտելիքներ և փորձ: Հոգաբարձուների խորհրդի ներկայացուցչական կազմը սահմանվում է Հիմնադրամի կանոնադրությամբ: Հոգաբարձուների խորհրդի կազմը ներկայացված է սույն ԳՁ Հավելված 3-ում: ՀԽ-ի անվանական կազմը հաստատվում է ՀՀ վարչապետի որոշմամբ:

Մասնավոր հատվածը և ՀԿ ներկայացնող ՀԽ-ի անդամները համաձայնեցվում են դոնորների հետ: Հոգաբարձուների խորհրդի անդամները նշանակվում են երկու տարի ժամկետով՝ հետագա երկարաձգման հնարավորությամբ: ՀԽ անդամակցությունը դադարում է Կանոնադրությամբ սահմանված դեպքերում (Հավելված 2): Նշված դեպքերից մեկը շահերի բախումն է:

«**Շահերի բախում**» նշանակում է, բայց չի սահմանափակվում հետևյալով. Խորհրդի անդամի անցյալ, ներկա կամ հեռանկարում հնարավոր տնտեսական, ֆինանսական և անձնական ուղղակի և/կամ անուղղակի (ազգականների կամ գործընկերների միջոցով) շահի, ինչպես նաև սեփականության կամ այլ կապի առկայությունը Հիմնադրամի անձնակազմի կամ Հիմնադրամի կողմից ուղղակիորեն կամ ՄՖՀ միջոցով ֆինանսավորվող ԷԽ և ՎԷ ծրագրերում ներգրավված ընկերությունների, ծրագիր նախապատրաստողների և անհատների հետ:

Ի լրումն, ՀԽ անդամները կարող են ետ կանչվել իրենց նշանակած կազմակերպության կողմից, եթե այն հմտությունները, որոնք հիմք են ծառայել իրենց առաջադրման համար, այլևս նշանակալից չեն դիտվում:

ՀԽ ոչ պետական հատվածի անդամները պետք է ներկայացնեն հասարակությունը, ինչպես օրինակ, գիտական խոհուրդներ, հասարակական կազմակերպություններ, տնտեսության մասնավոր հատված, և բավարարեն որակավորման, կրթության և անձնական բնույթի հետևյալ պահանջները.

- Առնվազն հինգ տարվա մասնագիտական փորձ համապատասխան ոլորտում,
- Օրենսդրական դաշտի և գործարար միջավայրի խոր իմացություն և լավ մասնագիտական հարաբերություններ շուկայի հիմնական մասնակիցների հետ,
- Հնարավորություն և ցանկություն անհրաժեշտ ժամանակ տրամադրելու Հիմնադրամին,
- Միջանձնային լավ հարաբերություններ պահպանելու ունակություն և բարձր մասնագիտական հեղինակություն,
- Հիմնադրամի հետ շահերի բախման բացակայություն:

Նույն կազմակերպությունից առաջադրվում է միայն մեկ ներկայացուցիչ:

ՀԽ նախագահը ընտրվում է ՀԽ կողմից: ՀԽ նախագահի հիմնական իրավասությունները մանրամասն նկարագրված են Հիմնադրամի կանոնադրության մեջ, որը ներկայացված է սույն ԳՁ Հավելված 2-ում:

Նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները կատարում է ՀԽ անդամներից մեկը՝ խորհրդի որոշմամբ:

ՀԽ սահմանում է Հիմնադրամի ռազմավարությունը և գործառնական կանոնները, նշանակում է Հիմնադրամի ղեկավար անձնակազմին, հաստատում Հիմնադրամի բյուջեն և առանձնահատուկ ներդրումները: ՀԽ հիմնական իրավունքներն ու պարտականությունները սահմանված են Հիմնադրամի կանոնադրությամբ՝ Հավելված 2, և սույն ԳՁ-ով:

ՀԽ իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: ՀԽ նիստերը գումարվում են պարբերաբար՝ առնվազն ամիսը մեկ անգամ: Նիստերը նշանակում և նախագահում է ՀԽ նախագահը: Ըստ անհրաժեշտության կարող են գումարվել արտահերթ նիստեր: Նիստերը գումարվում են անհրաժեշտ քվորումի առկայության դեպքում: *ՀԽ-ի որոշումները, որոնք վերաբերվում են Հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի սույն ԳՁ-ում նկարագրված դրույթներին, համարվում են ԳՁ-ի փոփոխություններ և դառնում են ԳՁ-ի անբաժանելի մաս: Այդ փոփոխությունները Համաշխարհային բանկի հետ համաձայնեցնելուց հետո արտացոլվում են ԳՁ-ում:*

Հիմնադրամի տնօրենը մասնակցում է ՀԽ նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով: Տնօրենը պատասխանատու է ՀԽ նիստերը կազմակերպելու, օրակարգի նյութերը պատրաստելու և անհրաժեշտ փաստաթղթերը շրջանառելու համար: ՀԽ նիստի ընթացակարգերը նկարագրված են Հիմնադրամի կանոնադրության մեջ (Հավելված 2) և ՀԽ աշխատակարգում (Հավելված 4):

#### 1.4.2 Հիմնադրամի տնօրենը

Հիմնադրամի տնօրենն առաջին անգամ պաշտոնում նշանակվում է Հիմնադրի կողմից: ՀՏ նշանակվում է 4 տարի ժամկետով, որը կարող է երկարաձգվել: Հիմնադրամի տնօրենը՝

- ղեկավարում է Հիմնադրամի գործունեությունը,
- տնօրինում է Հիմնադրամի գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, Հիմնադրամի անունից կնքում է պայմանագրեր,
- ներկայացնում է Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,
- գործում է առանց լիազորագրի և Հիմնադրամի անունից տալիս է լիազորագրեր,
- սահմանված կարգով կնքում է պայմանագրեր /այդ թվում, բայց չսահմանափակվելով՝ դրամաշնորհի, գնումների, ենթավարկի, աշխատանքային, ծառայությունների մատուցման և այլն/,
- բանկերում բացում է հատուկ, հաշվարկային և այլ հաշիվներ՝ ՀՀ դրամով և արտարժույթով,
- ՀԽ հաստատմանն է ներկայացնում Հիմնադրամի ներքին աշխատանքային կանոնակարգը, հիմնադրամի վարչակազմակերպչական կառուցվածքը և հաստիքացուցակը.

- իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
- աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Հիմնադրամի աշխատակիցներին.
- Հիմնադրամի աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.
- կառավարում է վարկային և դրամաշնորհային ծրագրերը,
- իրականացնում է օրենքով, Հիմնադրամի կանոնադրությամբ և հիմնադրի հանձնարարականներով նախատեսված այլ լիազորություններ:

Տնօրենն այլ կազմակերպությունում կարող է վճարովի պաշտոն զբաղեցնել միայն ՀԽ համաձայնությամբ:

### **1.5 Հիմնադրամի անձնակազմը և կազմակերպչական կառուցվածքը**

Հիմնադրամի կազմակերպչական կառուցվածքը ներկայացված է Հավելված 5-ում: Կառուցվածքում իրականացվող փոփոխությունները ենթակա են հաստատման ՀԽ կողմից՝ համապատասխան դոկումենտի հետ համաձայնեցումից հետո:

Հիմնադրամի աշխատակիցները բաժանվում են ղեկավար անձնակազմի, որտեղ ընդգրկվում են Հիմնադրամի տնօրենը, ֆինանսական ղեկավարը, ծրագրերի համակարգողները, և մասնագետների ու սպասարկող անձնակազմի:

Հիմնադրամի ղեկավար անձնակազմը և մասնագետները հիմնադրամի կանոնադրությամբ և հաստիքացուցակով նախատեսված պաշտոններ զբաղեցնող անձինք են, ովքեր իրենց գործունեությամբ ապահովում են հիմնադրամի կանոնադրական խնդիրների իրագործումը:

Հիմնադրամի սպասարկող անձնակազմը ներառում է Հիմնադրամի այն աշխատակիցներին, որոնց պարտականություններն ուղղակիորեն չեն առնչվում Հիմնադրամի կանոնադրական խնդիրների կատարման հետ: Սպասարկող անձնակազմի համալրման նպատակով մրցույթ չի անցկացվում: Սպասարկող անձնակազմի ընտրությունն իրականացվում է ՀՏ-ի կողմից:

Հիմնադրամի ղեկավար անձնակազմի և մասնագետների թափուր տեղերի համալրումը իրականացվում է մրցութային եղանակով՝ այդ նպատակով կազմավորված մրցութային հանձնաժողովի կողմից (Հավելված 6): Մրցութային հանձնաժողովը ձևավորվում է Հոգաբարձուների խորհրդի կողմից: Մրցութային հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Հիմնադրամի, համապատասխան գերատեսչությունների և շահագրգիռ այլ մարմինների կողմից առաջադրված ներկայացուցիչները:

Մրցույթի վերաբերյալ հայտարարությունը տրվում է հիմնադրամի կողմից՝ նշելով առկա թափուր հաստիքի անվանումը, տվյալ հաստիքով նախատեսվող պարտականությունների հակիրճ նկարագիրը, մրցույթին մասնակցելու համար թեկնածուներին առաջադրվող մասնագիտական և աշխատանքային որակավորման չափանիշները, պահանջվող փաստաթղթերի ցանկն ու դրանց ներկայացման ժամկետը:

Ներկայացված փաստաթղթերի հիման վրա Հիմնադրամն անցկացնում է թեկնածուների նախաորակավորում, որի արդյունքում կազմվում է տվյալ պաշտոնին առաջադրվող

չափանիշներին առավելագույնը բավարարող թեկնածուների կարճ ցանկ՝ ընդգրկելով առավելագույնը 4 թեկնածու:

Թեկնածուների տվյալները՝ գնահատման թերթիկների հետ միատեղ, ներկայացվում են մրցութային հանձնաժողովին: Յուրաքանչյուր թեկնածուի գնահատումն իրականացվում է մրցութային հանձնաժողովի կողմից տրված ընդհանուր միավորների հիման վրա: Մրցույթի հաղթող է ճանաչվում առավել բարձր միավոր ստացած թեկնածուն:

Հիմնադրամի ղեկավար պաշտոնների համար մրցույթում հաղթող ճանաչված թեկնածուները ներկայացվում են Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հաստատմանը:

Մրցութային հանձնաժողովի, ինչպես նաև սույն կարգով նախատեսված դեպքերում՝ Հոգաբարձուների խորհրդի որոշումների հիման վրա, Հիմնադրամի տնօրենի կողմից իրականացվում է թեկնածուների աշխատանքի ընդունումը ՀՀ աշխատանքային օրենսդրությանը համապատասխան:

Հիմնադրամի գործունեության ամենօրյա կառավարման համար պատասխանատու է Հիմնադրամի ղեկավար անձնակազմը: Այն կազմված է փոքր մասնագիտացված թիմից.

1. Հիմնադրամի տնօրեն (ՀՏ), որն իրականացնում է Հիմնադրամի ներկայացուցչական և վարչական գործառույթներ,
2. Ֆինանսական ղեկավար (ՖՂ), որը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման, հաշվապահական հաշվառման, ֆինանսական կառավարման, ներքին վերահսկման և վճարային գործառնությունների համար,
3. Ծրագրի համակարգող, որը պատասխանատու է Քաղաքային ջեռուցման ծրագրի և Էներգախնայողության ոլորտին առնչվող գործունեության համար,
4. Ծրագրի համակարգող, որը պատասխանատու է վերականգնվող էներգետիկայի ոլորտին առնչվող գործունեության համար:

Հիմնադրամի անձնակազմի գործառույթները և իրավասությունների շրջանակը սահմանված են սույն ԳՁ Հավելված 7-ում:

Բացի հաստիքացուցակով նախատեսված աշխատակազմից Հիմնադրամը կարող է ներգրավել նաև անհատ փորձագետների և խորհրդատուների՝ ծրագրերի իրականացման ընթացքում տեխնիկական/ինժեներական, տնտեսագիտական, բնապահպանական և այլ մասնագիտական կարողությունների լրացուցիչ ներդրման նպատակով: Այդպիսի արտաքին փորձագետների և խորհրդատուների ընտրությունը իրականացվում է դոկորների կողմից սահմանված գնումների քաղաքականությունների և ընթացակարգերի համաձայն՝ ըստ հաստատված գնումների պլանի:

## 1.6 Հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերը

### *Ընդհանուր*

Հիմնադրամն իրականացնում է ծրագրեր ԷԽ և ՎԷ ոլորտներում՝ համաձայն իր կանոնադրության, հիմնադրի որոշումների և միջազգային պայմանագրերի:

Նշված ծրագրերը կարող են ֆինանսավորվել ՀՀ պետական բյուջեի և/կամ միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը կամ ուղղակիորեն Հիմնադրամին տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին:

Ծրագրերն իրականացնելիս՝ Հիմնադրամն առաջնորդվում է ՀՀ օրենսդրությամբ, համապատասխան ֆինանսավորող կազմակերպության կանոններով և ընթացակարգերով, ինչպես նաև սույն ԳՁ-ով:

Յուրաքանչյուր նոր ծրագրի իրականացման դեպքում ԳՁ-ը պետք է լրացվի կամ փոփոխվի այնպես, որպեսզի լիարժեքորեն նկարագրի համապատասխան ծրագրի իրականացման ընթացակարգերը և հիմնադրույթները: ԳՁ-ում կատարվող ցանկացած փոփոխություն և/կամ լրացում ենթակա է համաձայնեցման ՀԲ-ի և համապատասխան դոնորի հետ, և հաստատման ՀԽ կողմից:

Ծրագրերի իրականացման ընթացքում Հիմնադրամը պետք է ապահովի դրանց առանձնացված հաշվառումը և ապահովի ծրագրերի բյուջեների կազմման, մոնիտորինգի և հաշվետվությունների ներկայացման առանձնացված գործընթաց յուրաքանչյուր առանձին ծրագրի համար:

## 2 ՀԲ ֆինանսավորմամբ Քաղաքային ջեռուցման ծրագիր

### 2.1 ՔՁԾ նպատակներն ու բաղադրիչները

ՀՀ քաղաքային բնակավայրերի ջերմամատակարարման ոլորտը կենսունակ դարձնելու, սպառողներին որակով և մատչելի ծառայություններ մատուցելու նպատակով ՀՀ կառավարության 2002թ. սեպտեմբերի 5-ի թիվ 1384-Ն որոշմամբ հաստատվել է Քաղաքային ջերմամատակարարման ռազմավարությունը (ՔՁՌ), որը սահմանում է Հայաստանում քաղաքային ջեռուցման ոլորտի զարգացման կարճաժամկետ, միջնաժամկետ ու երկարաժամկետ ռազմավարական նպատակների շրջանակը:

2005թ. հուլիսի 20-ին ՀՀ կառավարության և ՄՁԸ-ի միջև ստորագրվել է Քաղաքային ջեռուցման ծրագրի զարգացման վարկի (4102-AM) համաձայնագիրը: 2005թ. հոկտեմբերի 3-ին համաձայնագիրը հաստատվել է ՀՀ Սահմանադրական դատարանի և 2005թ. նոյեմբերի 11-ին վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից:

Զարգացման վարկի համաձայնագրի համաձայն ՄՁԸ-ն Հայաստանի Հանրապետությանը տրամադրել է 15 000 000 ԱՄՆ դոլար՝ որպես վարկ:

Ծրագրի նպատակը մաքուր, արդյունավետ, ապահով ու մատչելի ջեռուցման տեխնոլոգիաների կիրառման ընդլայնումն է ՀՀ բազմաբնակարան շենքերում: Ծրագիրը կազմած է հետևյալ հինգ բաղադրիչներից.

**Բաղադրիչ Ա. 1.0 միլիոն ԱՄՆ դոլար** Արդյունավետ ու ապահով ջեռուցման ծառայությունների մատուցման համար նպաստավոր միջավայրի ստեղծում, այդ թվում.

- կանոնակարգերի, անվտանգության նորմերի ու ստանդարտների մշակում և մատակարարների ու սարքավորումների հաստատագրում, այդ թվում բնական գազի մատակարարման համար,

- օրենսդրական և ենթօրենսդրական դաշտի կատարելագործում՝ համատիրություններն առավել գործունակ դարձնելու և շուկայական պայմաններով ջեռուցման ծառայությունների մատուցումը խթանելու նպատակով,
- ջեռուցման ծառայություններ մատուցողների, տեղի ֆինանսական կազմակերպությունների և համատիրությունների կարողությունների զարգացում,
- լայնամասշտաբ տեղեկատվական արշավների և հանրային իրազեկման ծրագրերի իրականացում,
- հատուկ խորհրդատվական կենտրոն(ներ)ի ստեղծում,
- ենթավարկավորման ծրագրերի նախապատրաստական աշխատանքներին օժանդակում:

**Բաղադրիչ Բ. Բնակելի շենքերի ջեռուցման նպատակով նախատեսված 7.2 միլիոն ԱՄՆ դոլար ներդրումային ֆինանսավորումը կտրամադրվի հետևյալ երկու ենթաբաղադրիչի շրջանակներում.**

**Բ1. Ծրագրի շահառուների վարկավորում՝ 4.2 միլիոն ԱՄՆ դոլար.**

Նախատեսվածի համաձայն՝ սույն ենթաբաղադրիչի ներքո իրականացվող ներդրումից կօգտվեն բազմաբնակարան շենքերում բնակվող մոտ 7.000 ընտանիքներ, որոնք չեն օգտվում գործող ջեռուցման ծառայություններից:

**Բ2. Կապիտալ դրամաշնորհների տրամադրում անապահով ընտանիքներին՝ 3.0 միլիոն ԱՄՆ դոլար.**

Ֆինանսավորումից օգտվելու իրավասություն ունեցող ընտանիքները կորոշվեն ներկայումս գործող ԱԸՆԾ-ի հիման վրա: Նախատեսվածի համաձայն՝ մոտ 10.000 անապահով ընտանիք կօգտվի սույն ենթաբաղադրիչի ներքո առաջարկվող ֆինանսավորումից:

**Բաղադրիչ Գ. Դպրոցների ջեռուցում՝ 5.0 միլիոն ԱՄՆ դոլար.**

Սույն ենթաբաղադրիչի շրջանակներում նախատեսվում է իրականացնել ջեռուցման համակարգերի տեղադրում և վերականգնում մոտ 100 քաղաքային դպրոցներում:

**Բաղադրիչ Դ. Աջակցություն ծրագրի իրականացմանը՝ 0.8 միլիոն ԱՄՆ դոլար:**

**Բաղադրիչ Ե. Ծրագրի նախապատրաստում՝ 1.0 միլիոն ԱՄՆ դոլար.**

Այս բաղադրիչը Ծրագրի նախապատրաստման կանխավճարի մարումն է:

Սույն բաժնով սահմանվում են այն հիմնադրույթներն ու ընթացակարգերը, որոնցով իրականացվում է ՀԲ ֆինանսավորմամբ Բաղաքային ջեռուցման ծրագիրը, ինչպես նաև վերջինիս կազմակերպչական կառուցվածքը



հնարավոր կրկնություններից: Դոնորների կոմիտեն գումարում է պարբերական նիստեր, որոնց կարող են հրավիրվել նաև ծրագրի ղեկավարներ, ՀՀ ներկայացուցիչներ կամ այլ անձինք:

## 2.2 Տեխնիկական աջակցություն

Տեխնիկական աջակցության (ՏԱ) նպատակն է նպաստել ներդրումների իրականացմանը ջեռուցման ոլորտում՝ կիրառելով տարբեր եղանակներ, մասնավորապես.

- օրենսդրական դաշտի բարելավում,
- հանրային քարոզարշավ,
- ուղղակի խորհրդատվական աջակցություն,
- վերապատրաստում:

ՏԱ բաղադրիչի ներքո բոլոր խորհրդատվական ծառայությունների ձեռքբերումն իրականացվում է **«Համաշխարհային բանկի Վարկառուների կողմից խորհրդատուների ընտրություն և վարձում» Ուղեցույցների** (թվագրված 2004թ. մայիս) և **ԶՎՀ** համաձայն:

ԽԾ ձեռքբերման ժամանակ օգտագործվում են ՀԲ ստանդարտ փաստաթղթերն ու պայմանագրերի ձևերը: Խորհրդատուների կարճ ցանկը կարող է կազմված լինել միայն տեղական կազմակերպություններից, եթե մեկ պայմանագրի գծով ծառայությունների գնահատված արժեքը փոքր է 100,000 ԱՄՆ դոլարից:

100,000 ԱՄՆ դոլարից ավել արժողությամբ ԽԾ և մեկ աղբյուրից գնման համար 15,000 ԱՄՆ դոլարից ավել արժողությամբ ԽԾ պայմանագրերը ենթակա են նախնական վերանայման ՀԲ կողմից:

### 2.2.1 Օրենսդրական դաշտի բարելավում

Սույն ենթաբաղադրիչը կնպաստի օրենսդրական դաշտում առկա բացերի վերացմանը, որոնք խոչընդոտում են արդյունավետ ու ապահով ջեռուցման համակարգի ձևավորմանը: Մասնավորապես, ծրագրի նախապատրաստական փուլում (հատկապես առաջնեկային

ծրագրերի իրագործման ժամանակ) ի հայտ է եկել իրավաօրենսդրական դաշտում առկա որոշակի բացերը լրացնելու անհրաժեշտություն, այդ թվում.

- բնական գազի մատակարարմանը, գազի ու ջեռուցման ենթակառուցվածքների ապահով տեղադրմանն ու ծառայությունների մատուցմանը, ինչպես նաև ջեռուցման սարքերի հաստատագրմանն ուղղված քաղաքականության, նորմերի և ստանդարտների մշակման միջոցով, որոնք կկարգավորեն փոխհարաբերությունները ՀՌԳԱ-ի և ծառայություն մատուցողների, ինչպես նաև ՀՌԳԱ-ի և սպառողների միջև, և կսահմանեն ծառայությունների պատշաճ որակի ապահովման չափորոշիչներն ու գազամատակարարման ոլորտի կարգավորումից բխող այլ հարցեր: Ի թիվս վերոնշյալի, կսահմանվեն նաև համապատասխան չափորոշիչները հաստատող, այդ չափորոշիչների կիրարկման վերահսկողությունն ու ջեռուցման և չափիչ սարքերի հաստատագրումն ապահովող մարմինները, ինչպես նաև տարբեր շենքերին համապատասխանեցված լուծումների վրա հիմնված չափանիշները.
- իրավաօրենսդրական դաշտի կատարելագործման միջոցով՝ համայնատիրություններն ավելի գործունակ դարձնելու և շուկայական պայմաններով ջեռուցման ծառայությունների մատուցումը խթանելու համար, այդ թվում՝ շենքերի ընդհանուր սեփականության փոխանցում տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությունից համատիրությունների ենթակայության տակ, համատիրությունների ներկայացուցիչների անկաշկանդ մուտքի իրավունքի ապահովում բնակարաններ՝ ծառայություններից սխալ օգտվելու դեպքերը կանխելու և ծառայությունների դիմաց չվճարող բնակիչներին համակարգից անջատելու նպատակով, որոշումների կայացման գործընթացի պարզեցում և ռացիոնալացում, քվեարկության մեխանիզմների գործարկում՝ բնակարանատերերի դերի բարձրացմամբ:

Օրենսդրական դաշտի անկատարությունից բխող խոչընդոտների վերացմանն ուղղված լրացուցիչ առաջարկները հիմնավորվում և ներկայացվում են ՀԽ քննարկմանը:

ՀԽ-ը քննարկում է առաջարկը և դիտարկում դրա համապատասխանությունը ԲԶԾ դրույթներին, ֆինանսավորման աղբյուրների առկայությունը, որից հետո որոշում է կայացնում առաջարկվող փոփոխությունների նպատակահարմարության և դրանց իրականացման հնարավորության վերաբերյալ: Դրական որոշում կայացվելու դեպքում հանձնարարվում է շահագրգիռ պետական կառավարման մարմինն Հիմնադրամի հետ համատեղ կազմել և ՀԽ իրավասության շրջանակներում ՀԽ քննարկմանը ներկայացնել համապատասխան տեխնիկական առաջադրանքը, նախահաշիվը, մրցութային փաստաթղթերը՝ անհրաժեշտության դեպքում համապատասխան փոփոխություններ կատարելով գնումների պլանում՝ համաձայնեցնելով ՀԲ հետ:

## 2.2.2 Հանրային քարոզարշավ

Հիմնադրամը նախապատրաստում է հանրային քարոզարշավի ծրագիրը և ներկայացնում ՀԽ քննարկմանը: Ծրագիրը հետամուտ է հասարակության իրազեկության բարձրացմանը ջեռուցման նոր տեխնոլոգիաների ներդրման հնարավորության ու դրանց առավելությունների, շրջակա միջավայրի առումով մաքուր ու ապահով ջեռուցման տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտության ու առավելությունների, ապահովության նորմերի ու ստանդարտների, համայնքների առաջատար դերակատարությամբ կոմունալ ծառայությունների մատուցման նոր

մոտեցումների, կառավարման ինստիտուցիոնալ կառույցների, հավաքական կազմակերպությունների անդամների իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև իրավական բնույթի այլ հարցերում: Որպես հանրային իրազեկման ծրագրի բաղկացուցիչ՝ կկազմակերպվեն ջեռուցման և էներգասարքյունավետության ապահով ու էկոլոգիապես մաքուր սարքավորումների և տեխնոլոգիաների տարեկան ցուցահանդեսներ:

Յուրաքանչյուր տարվա ծրագիր վերանայվում է՝ հաշվի առնելով նախորդ տարվա միջոցառումների արդյունքները: Կայուն և չընդհատվող քարոզարշավ և կրթական-տեղեկատվական լայնածավալ գործընթաց իրականացնելու նպատակով՝ Հիմնադրամը կարող է ներգրավել համապատասխան մասնագիտացված կազմակերպություն:

Հիմնադրամը պետք է միջոցներ ձեռնարկի իր տեղեկատվական միջոցառումները այլ կազմակերպությունների կողմից նույն ոլորտում իրականացվող միջոցառումների հետ համահարթեցնելու ուղղությամբ:

### **2.2.3 Ուղղակի խորհրդատվությանը աջակցություն**

Ծրագրի շահառուներին աջակցություն է ցուցաբերվում մի շարք հարցերում, ինչպիսիք են՝ գործարար ծրագրերի կազմումը, ջեռուցման արդյունավետ և նվազ ծախսատար տեխնիկական լուծումների ներդրումն ու խթանումը (մասնավորապես՝ ընդհանուր օգտագործման տարածքներում և այլն), ինչն անհրաժեշտ է «վարկունակ» ներդրումային ծրագրերի մշակման, ծրագրերի ֆինանսական հոսքերի կազմման, իսկ անհրաժեշտության դեպքում նաև, ջերմամատակարարման համակարգի առևտրային առումով կայուն գործարկման համար:

Այս բաղադրիչի շրջանակում անհրաժեշտ միջոցառումները Հիմնադրամի կողմից նախատեսվում և ներկայացվում են գնումների պլանում:

### **2.2.4 Ուսուցում և վերապատրաստում**

Որակավորման բարձրացմանն ուղղված ուսուցում և/կամ վերապատրաստում կարող է առաջարկվել Հիմնադրամի անձնակազմին, կառավարության պաշտոնյաներին, տեղի ֆինանսական հաստատությունների և ծրագրի ենթավարկառուների համապատասխան մասնագետներին: Ուսուցումը և/կամ վերապատրաստումը կարող է ուղղվել նաև համատիրությունների կայացմանը:

Ուսուցման և/կամ վերապատրաստման նպատակային ոլորտներն են ծրագրերի կառավարումը, ներդրումային ծրագրերի կազմումը և գնահատումը, նորագույն տեխնոլոգիաների կիրառումը, բնապահպանական խնդիրները և այլն:

Հիմնադրամը պետք է կազմի և ՀԽ ներկայացնի ուսուցման/վերապատրաստման պլան:

Ուսուցման/վերապատրաստման պլանով չնախատեսված հրավերքների դեպքում՝ դրանց մասնակցության վճարները վարկային միջոցներից կարող են իրականացվել միայն ՀԽ հավանությամբ:

## **2.3 Ենթավարկավորում**

Սույն բաղադրիչի նպատակը Բաղաքային ջեռուցման ծրագրի շրջանակներում փոխառության տրամադրումն է ՄՖՀ-ին՝ վերջինիս կողմից ԲԶԾ շահառուներին վարկավորելու համար:

Հիմնադրամի ֆինանսական աղբյուրները ՄՖՀ-ների կողմից կօգտագործվեն ֆինանսական առումով կենսունակ այն ծրագրերի համար, որոնք առնչվում են քաղաքային բնակավայրերի բազմաբնակարան շենքերի համար ջերմային էներգիայի արտադրության և բաշխման, սպառողական նպատակով ջեռուցման համակարգերի ձեռք բերման և տեղադրման, ինչպես նաև ջեռուցման նպատակով գազաֆիկացման աշխատանքների հետ: Ֆինանսավորման ենթակա ծրագրերում ներդրումների տեսակները դասակարգվում են հետևյալ կերպ.

ա/ Անհատական ջեռուցման դեպքում

- գազային վառարանի կամ կաթսայի ձեռք բերում և տեղակայում,
- չափիչ և սպառումը վերահսկող սարքերի ձեռք բերում և տեղակայում,
- գազաֆիկացում ջեռուցման նպատակով,
- բնակարաններում և շենքերում էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված այլ ներդրումներ:

բ/ Կենտրոնացված և առանձնացված ջեռուցում.

- կաթսաների արտադրություն, ձեռք բերում, տեղակայում,
- արտաքին և ներքին բաշխիչ համակարգերի վերականգնում և կառուցում,
- չափիչ և կարգավորիչ սարքերի ձեռք բերում և տեղակայում՝ ջերմային էներգիայի չափման և վերահսկման նպատակով,
- բնակարաններում և շենքերում էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված այլ ներդրումներ, ներառյալ տանիքների, պատուհանների և ընդհանուր օգտագործման տարածքների ջերմամեկուսացումը,
- էլեկտրական և ջերմային էներգիաների համակցված արտադրություն:

Բոլոր սարքերը պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված անվտանգության և ապահովության պահանջներին, ինչպես նաև Հիմնադրամի կողմից առաջարկված լրացուցիչ տեխնիկական մասնագրերին:

Ծրագրի Շահառու կարող է լինել ցանկացած ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ, այդ թվում համատիրություն, , որը ներգրավված է կամ ցանկություն ունի ներգրավվել Հայաստանի քաղաքների բազմաբնակարան շենքերում ջերմամատակարարման գործունեության մեջ, ներառյալ ջերմային էներգիայի արտադրությունը, տեղափոխումը, բաշխումը, ջեռուցման համակարգերի և սարքավորումների տեղադրումը, ինչպես նաև ջեռուցման նպատակով գազաֆիկացման աշխատանքները:

Ֆինանսավորման միջոցները Հայաստանի Հանրապետությունը տրամադրում է Հիմնադրամին որպես փոխառություն՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և Հիմնադրամի միջև կնքվող Լրացուցիչ համաձայնագրի համաձայն, որը ներկայացված է Հավելված 9-ում:

Հիմնադրամը շահառուների ֆինանսավորումն իրականացնում է ՄՖՀ-ներին վերավարկավորելու միջոցով: Ներդրումային ծրագրեր ֆինանսավորելու նպատակով վարկային միջոցների տեղաբաշխումն իրականացնում է ՄՖՀ-ն՝ ամբողջ ծավալով կրելով վարկային ռիսկը:

Հիմնադրամի կողմից ծրագրի շահառուների ուղղակի վարկավորումը նախատեսվում է որպես պահեստային տարբերակ՝ ՄՖՀ-ների կողմից ծրագրի նկատմամբ բավարար չափով հետաքրքրություն չցուցաբերվելու կամ ՀԽ և ՀԲ կողմից համաձայնեցված որոշում կայացվելու

դեպքում շահառուների ուղղակի ֆինանսավորումը Հիմնադրամի կողմից իրականացվելու վերաբերյալ:

Սույն բաղադրիչի ներքո գնումներն իրականացվում են ենթավարկառուների կողմից՝ ՀԲ համար ընդունելի գործող առևտրային պրակտիկայի հիման վրա, որի դրույթները շարադրված են սույն ԳՁ-ի Հավելված 13-ում: 5000 ԱՄՆ դոլարը գերազանցող ծրագրերի դեպքում ՄՖՀ-ն պետք է ապահովի, որ վարկի միջոցների հաշվին գնվող ապրանքների և աշխատանքների համար շահառուները ներկայացնեն. ա) առնվազն երկու գնառաջարկ, եթե գումարը կազմում է 5,000-ից մինչև 100,000 ԱՄՆ դոլար, բ) առնվազն երեք գնառաջարկ, եթե գումարը գերազանցում է 100,000 ԱՄՆ դոլարը:

Անհատական բնակարանային ջեռուցման սարքերի և դրանց տեղակայման համար անհրաժեշտ դետալների ձեռքբերումը վարկավորվելու դեպքում՝ գնումներն իրականացվում են հետևյալ պահանջները բավարարող մատակարարներից.

- Խանութ – ցուցասրահի առկայություն հանրության համար մատչելի և ընդունելի վայրում,
- Մասնագիտական անձնակազմ՝ առաջարկվող սարքավորումների տեխնիկական բնութագրերը ներկայացնելու համար,
- Հետվաճառքային սպասարկման ծառայությունների մատուցում:

### 2.3.1 ՄՖՀ ընտրության չափանիշները

*Որպես ՄՖՀ կարող են հանդես գալ առևտրային բանկերը և/կամ բանկ չհանդիսացող ֆինանսական միջնորդները (վարկային կազմակերպություններ):*

*ՄՖՀ-ների ընտրության համար գործում են գնահատման հետևյալ չափանիշները.*

*Ընդունելի բանկ և ոչ-բանկ ՄՖՀ-ն պետք է.*

- 1) բաժնետոմսերի առնվազն 75 տոկոսով հանդիսանա մասնավոր սեփականություն,
- 2) դրսևորի հետաքրքրվածություն և պատրաստակամություն սպասարկելու բազմաթիվ հաճախորդների և ծրագրի շահառուներին,
- 3) բավարարի ԿԲ կողմից սահմանված նորմատիվային պահանջները, մասնավորապես ա) ընդհանուր և կանոնադրական կապիտալի համարժեքության նորմատիվը, բ) մեկ փոխառուի, փոխկապակցված, բանկի հետ կապված անձի և/կամ անձանց գծով ռիսկի առավելագույն չափը, գ) իրացվելիության նորմատիվը/միայն բանկերի համար/
- 4) վերջին երկու տարիների ակտիվների շահութաբերության ցուցանիշը լինի առնվազն 2%
- 5) վերջին երկու տարիների կապիտալի շահութաբերության ցուցանիշը լինի առնվազն 10%
- 6) չաշխատող ակտիվների և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը չպետք է գերազանցի 3 %
- 7) վերջին երկու եռամսյակներում չաշխատող և ընդհանուր վարկերի հարաբերակցությունը չգերազանցի 4%
- 8) անցած լինի տարեկան աուդիտ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (IFRS) և Աուդիտի միջազգային ստանդարտների (ISA) և ունենա աուդիտի եզրակացություն առանց վերապահումների վերջին երկու տարվա համար, եթե գոյություն ունեն
- 9) ունենա ներքին վերահսկողության և աուդիտի բավարար կարգեր, ներառյալ հիմնավոր վարկային քաղաքականություն և մեխանիզմներ, որոնք առնչվում են վարկավորման ամբողջ ցիկլին,

*խնդրահարույց վարկերի կառավարմանը, ակտիվների դուրսգրմանը, վարկերի հաստատման լիազորություններին և այլն:*

### 2.3.2 ՄՖՀ ընտրության ընթացակարգը

Ծրագրին մասնակցելու նպատակով ՄՖՀ-երը հետաքրքրության հայտ են ներկայացնում Հիմնադրամին՝ ներկայացնելով անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում նաև տարեկան հաշվետվություն և աուդիտի եզրակացություն վերջին երկու ֆինանսական տարվա համար, ինչպես նաև այլ տեղեկատվություն՝ նորմատիվային և կանոնակարգման պահանջներին համապատասխանելիության վերաբերյալ:

ՄՖՀ-ն պետք է Հիմնադրամին ներկայացնի նաև գրություն, որով ԿԲ-ին կլիազորի տրամադրել նորմատիվային և կանոնակարգման պահանջները ՄՖՀ կողմից բավարարելու վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն Հիմնադրամին՝ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը չխախտելու նկատառումով: Տեղեկատվությունը կտրամադրվի նաև Համաշխարհային բանկի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության պատասխանատու պաշտոնյաներին: Տեղեկատվության շրջանակները պետք է լինեն այնպիսին, որ Հիմնադրամին և Համաշխարհային բանկին հնարավորություն տան գնահատելու ՄՖՀ ի համապատասխանելիությունը վերը նշված չափանիշներին:

Հետաքրքրության հայտին կից ներկայացված փաստաթղթերը մանրամասնորեն ուսումնասիրվում են Հիմնադրամի կողմից՝ հատուկ ուշադրություն դարձնելով ընդհանուր վարկունակության և ֆինանսական պորտֆելի վիճակի վրա: ՄՖՀ կողմից ներկայացված հայտերը Հիմնադրամի մասնագետների եզրակացությունների հետ միասին քննարկվում են ՄՖՀ ընտրության նպատակով ՀԽ որոշմամբ կազմավորված մրցութային հանձնաժողովի կողմից: Մրցութային հանձնաժողովի որոշմամբ ըստ համապատասխանելիության չափանիշների ընտրված ՄՖՀ-ները ներկայացվում են ՀԽ-ի հաստատմանը: ՀԽ հաստատումից հետո Հիմնադրամի և ընտրված ՄՖՀ-ի միջև կնքվում է Փոխառության պայմանագիր (Հավելված 10): Ընտրության գործընթացը Հիմնադրամի կողմից կարող է իրականացվել տարեկան երկու անգամ:

ՓՊ-ի կնքումից տասնութ ամիս հետո Հիմնադրամն, իր հայեցողությամբ, վարկային գծից նոր հատկացում կատարելու համար կարող է սահմանել ծրագրի համաֆինանսավորման այլ պայման:

### 2.3.3 Ենթավարկի տրամադրման կարգը

Ֆինանսավորման մեխանիզմի համաձայն՝ ՄՖՀ-ները փոխառությունը Հիմնադրամից ստանում են վարկային գծի ձևով: Վարկային գծի ընդհանուր գումարը կազմում է՝ 4,200,000 (չորս միլիոն երկու հարյուր հազար) ԱՄՆ դոլար, իսկ յուրաքանչյուր ծրագրի գծով տրամադրվող վարկի ընդհանուր գումարը չի կարող գերազանցել 500,000 (հինգ հարյուր հազար) ԱՄՆ դոլարը:

Վարկային գիծը ՄՖՀ-ի համար մատչելի է ՓՊ-ի ուժի մեջ մտնելու օրվանից՝ մինչև 7 (յոթ) տարի ժամկետով: Վարկային գիծը չի սահմանափակվում ընտրված ՄՖՀ-ների համար:

Հաշվի առնելով ՄՖՀ-ների կողմից ֆինանսավորվող շահառուների և ծրագրերի առանձնահատկությունները՝ տրամադրվող ենթավարկերը դասակարգվում են հետևյալ երկու խմբի.

- մինչև 5000 ԱՄՆ դոլար գումարով ենթավարկեր՝ անհատական ներբնակարանային ջեռուցման համակարգերի վերականգնման աշխատանքները և /կամ անհատական ջեռուցող սարքավորումների ձեռքբերումը, ներբնակարանային գազաֆիկացման աշխատանքները ֆինանսավորելու նպատակով,
- 5000 ԱՄՆ դոլարից ավելի գումարով ենթավարկեր, որոնք կօգտագործվեն ջեռուցման համակարգերի տեղադրման կամ վերականգնման լայնածավալ ծրագրեր իրականացնելու համար:

Ենթավարկավորումն ըստ ՄՖՀ-ի պահանջի կարող է իրականացվել ՀՀ դրամով կամ ԱՄՆ դոլարով: Ենթավարկի մայր գումարի մարումը կատարվում է սկզբնական տրամադրման արժույթով: ՄՖՀ-ների ենթավարկավորման պայմանները սահմանվում են ֆինանսական կազմակերպությունների ֆինանսավորման համար շուկայում գործող տոկոսադրույքների հիման վրա՝ հետևյալ չափերով.

- ԱՄՆ դոլարով տրամադրվող ենթավարկերի համար՝ 6 ամսվա ԼԻԲՈՐ (Լոնդոնի միջբանկային առաջարկության դրույք) գումարած 1%,
- ՀՀ դրամով տրամադրվող ենթավարկերի համար՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաշվարկված Հայաստանյան բանկերի համար ֆիզիկական անձանցից ներգրավված 91-180-օրյա ավանդների միջին կշռված տոկոսադրույքը: Որպես հիմք ընդունվում է վերջին 6 ամիսների միջին տոկոսադրույքը, որը չպետք է լինի ԱՄՆ դոլարի համար սահմանված 6 ամսվա ԼԻԲՈՐ-ի դրույքաչափից ցածր:

Տոկոսադրույքները սահմանվում են յուրաքանչյուր 6 ամիսը մեկ՝ սկսած տվյալ տարվա հունվարի 15-ից կամ դրան հաջորդող աշխատանքային օրվանից: Տոկոսադրույքը ֆիքսվում է յուրաքանչյուր մասնաբաժնի համար: Վարկային գծի շրջանակներում փոխառության գումարներ ստանալու նպատակով Հիմնադրամի կողմից ընտրված և փոխառության պայմանագիր կնքած ՄՖՀ-ները պետք է սահմանված ձևով դիմում ներկայացնեն Հիմնադրամին:

### 2.3.3.1 Մինչև 5000 ԱՄՆ դոլար գնահատված ծրագրերի վարկավորումը

Ենթավարկի յուրաքանչյուր մասնաբաժնի հատկացման համար ՄՖՀ պետք է ներկայացնի դիմում Հիմնադրամին, որը ՖԳԼ-ը մասնագիտական եզրակացության հետ միասին ներկայացնում է Հիմնադրամի ղեկավարության քննարկմանը: ՄՖՀ-ի դիմումը ստանալուց երեք աշխատանքային օրվա ընթացքում դրական որոշում կայացվելու դեպքում Հիմնադրամի և ՄՖՀ միջև ստորագրվում է Փոխառության հատկացման արձանագրություն, որում պարտադիր կերպով նշվում են կողմերի անվանումները, փոխառության գումարի չափը, տոկոսադրույքը և մարման ժամկետը: Արձանագրությունը ստորագրվելուց հետո երեք բանկային օրվա ընթացքում փոխառության գումարը փոխանցվում է ՄՖՀ թղթակցային հաշվին: Փոխառության համար սահմանվում է տրամադրման օրվանից սկսած մինչև 84 (ութսունչորս) ամիս մարման ժամկետ: Փոխառության հիմնական գումարի հետ վճարումը կատարվում է ժամկետի ավարտին: Մինչև այդ ժամկետի ավարտը ՄՖՀ-ն կարող է իրականացնել բազմակի վարկավորում՝ հատկացված միջոցները ծառայեցնելով բացառապես ծրագրի նպատակներին:

Հիմնադրամն իրավասու է ՄՖՀ-ից պահանջել հատկացված գումարի վաղաժամկետ մարում, որի հիմքերն ու պայմանները ներկայացված են սույն ԳՁ-ին կից Հավելված 10-ում:

Հաշվի առնելով ծրագրի միջոցների նպատակայնությունը, ՄՖՀ-ին հատկացված, սակայն չտեղաբաշխված գումարի նկատմամբ հաշվարկվում է լրացուցիչ վճար տարեկան 2% դրույքաչափով, որը ենթակա է վճարման յուրաքանչյուր օրացուցային ամսվա վերջին օրը, իսկ եթե երեք ամիս շարունակ մնացորդը գերազանցում է հատկացված ընդհանուր միջոցների 20 տոկոսը կամ ավելին, ապա Հիմնադրամն իրավասու է պահանջել վերադարձնել չտեղաբաշխված գումարը:

Որպես ՓՊ-ով սահմանված պարտավորությունների կատարման ապահովում, ՄՖՀ-ները յուրաքանչյուր Շահառուին վարկ տրամադրելուց հետո մեկամսյա ժամկետում Հիմնադրամի օգտին պետք է գրավադրեն տվյալ վարկառուի (Ծրագրի Շահառուի) նկատմամբ ունեցած պահանջի իրավունքն ամբողջ ծավալով՝ ներառյալ պարտավորության կատարումն ապահովող և չվճարված տոկոսների նկատմամբ իրավունքները՝ իրականացնելով գրավադրման հետ կապված բոլոր տեսակի ծախսերը: Որպես լրացուցիչ ապահովման միջոց ՄՖՀ-ն պետք է Հիմնադրամին տրամադրի հավաստում, որ ՀՀ կենտրոնական բանկում ապասարկվող իր թղթակցային հաշիվների միջոցներից դրամական պարտավորությունն անակցեպտ գանձելու վերաբերյալ գրությունը ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաշվառվել է, որի հիման վրա Հիմնադրամը իրավունք կունենա ՄՖՀ-ի կետանցված պարտքը անակցեպտ կարգով գանձել վերջինիս՝ ՀՀ կենտրոնական բանկում ունեցած թղթակցային բոլոր հաշիվներից:

Փոխառուն ամբողջությամբ և ինքնուրույն կրում է իր կողմից վարկավորված որևէ շահառուի կողմից փոխառության ամբողջական կամ մասնակի չվերադարձման ռիսկը և նման դեպքի վրա հասնելը ինքնին Փոխառուին չի ազատում Հիմնադրամի առջև փոխառության պայմանագրով ծագած պարտավորության կատարումից:

### 2.3.3.2 5000 ԱՄՆ դոլար և ավել վարկերի համար տրվող փոխառություն

5000 ԱՄՆ դոլար և ավել գումարով ծրագրերի վարկավորման համար շահառուի կողմից պետք է կատարվի առնվազն 30 % համաֆինանսավորում:

Վարկային գծի շրջանակներում Փոխառության գումարներ ստանալու նպատակով Հիմնադրամի կողմից ընտրված և փոխառության պայմանագիր կնքած ՄՖՀ-ները պետք է սահմանված ձևով դիմում ներկայացնեն Հիմնադրամին (դիմումի ձևը կցվում է): Յուրաքանչյուր շահառուին վարկ տրամադրելու համար ՄՖՀ պետք է ներկայացնի առանձին դիմում, որի մեջ նշվում է պահանջվող գումարը, ժամկետը, շահառուի անվանումը (անուն, ազգանունը), գտնվելու (բնակության) վայրը, ծրագրի իրականացման վայրը, վարկի նպատակը, ապահովման միջոցը՝ գնահատված անկախ, լիցենզավորված գնահատողի կողմից՝ համեմատական եղանակով: Դիմումը ՖՂ-ի մասնագիտական եզրակացության հետ միասին ներկայացվում է Հիմնադրամի ղեկավարությանը:

Հիմնադրամը ՄՖՀ դիմումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում պետք է հայտնի դիմումը պայմանագրի պահանջներին համապատասխանելու կամ անհամապատասխանության մասին: Դրական պատասխանի դեպքում Հիմնադրամի և ՄՖՀ միջև ստորագրվում է Փոխառության հատկացման արձանագրություն, որում նշվում են կողմերի անվանումները, փոխառության գումարի չափը, արժույթը, տոկոսադրույքը, մարման ժամկետը և շահառուի անվանումը:

Արձանագրության հիման վրա երեք բանկային օրվա ընթացքում փոխառության գումարը փոխանցվում է ՄՖՀ թղթակցային հաշվին, եթե իրականացվել են հետևյալ գործողությունները.

ա) ՄՖՀ-ն Շահառուի հետ պատշաճ կարգով կնքել է վարկային պայմանագիր,

բ) Շահառուն կնքել է իր վարկային պարտավորությունն ապահովող միջոցի մասին պայմանագիր (գրավի, երաշխավորության, բանկային երաշխիքի) և

գ) Փոխառուի և փոխառուի Հիմնադրամի և ՄՖՀ միջև պատշաճ կերպով կնքվել է Շահառուի նկատմամբ փոխառուի պահանջի իրավունքի և ապահովման միջոցների նկատմամբ իրավունքի մասին գրավի պայմանագիր:

Փոխառության մարման ժամկետը համապատասխանում է շահառուին տրամադրվող վարկի մարման ժամկետի հետ, բայց ոչ ավել քան 84 ամիս: Փոխառության հիմնական գումարը հետ է վճարվում հավասար մասերով տարեկան երկու անգամ՝ յուրաքանչյուր օրացուցային տարվա մայիսի 5-ին և նոյեմբերի 5-ին: Ընդ որում, հիմնական գումարի մարման համար սահմանվում է արտոնյալ ժամկետ, որի ընթացքում հիմնական գումարի հետ վճարում չի իրականացվում, վճարվում են միայն պայմանագրով սահմանված տոկոսագումարները: Մինչև երկու տարի մարման ժամկետով վարկերի համար որպես արտոնյալ ժամկետ սահմանվում է 6 ամիս, իսկ երկու տարի և ավել ժամկետայնությամբ վարկերի համար՝ 1 տարի: Սույն դրույթով նախատեսված արտոնյալ ժամկետը կիրառվում է նաև ՄՖՀ կողմից շահառուի հետ կնքվող ենթավարկային պայմանագրում:

Հիմնադրամը կարող է փոխառուից պահանջել փոխառության վաղաժամկետ մարում, որի հիմքերն ու պայմանները ներկայացված են ՓՊ-ում (Հավելված 10):

Որպես լրացուցիչ ապահովման միջոց ՄՖՀ-ն պետք է Հիմնադրամին տրամադրի հավաստում, որ ՀՀ կենտրոնական բանկում սպասարկվող իր թղթակցային հաշիվների միջոցներից դրամական պարտավորությունն անակցեպտ գանձելու վերաբերյալ գրությունը ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաշվառվել է, որի հիման վրա Հիմնադրամը իրավունք կունենա ՄՖՀ-ի կետանցված պարտքը անակցեպտ կարգով գանձել վերջինիս՝ ՀՀ կենտրոնական բանկում ունեցած թղթակցային բոլոր հաշիվներից:

Փոխառության մարված գումարներով ՄՖՀ-ները կարող են Ծրագրի նպատակների համար վերավարկավորվել շրջանառելիության սկզբունքով՝ կիրառելով ԳՁ-ի 2.3.3. կետում սահմանված՝ սկզբնական վարկի տրամադրման ժամկետներ և պայմանները:

## ***2.4 Կապիտալ դրամաշնորհ անապահով ընտանիքներին***

Ի լրումն Քաղաքային ջեռուցման ծրագրի Բ2 բաղադրիչի, «Արդյունքահեն Օգնության Գլոբալ Գործընկերություն» ծրագիրը (ԱՀՕԳԳ) հաստատել է 3.1 միլիոն ԱՄՆ դոլարի չափով ուղղակի դրամաշնորհի տրամադրումը Հիմնադրամին՝ գազամատակարարման և ջերմամատակարարման համակարգերին անապահով ընտանիքների բնակարանների միացումն ապահովելու համար: ԲԶԾ բաղադրիչները և ԱՀՕԳԳ դրամաշնորհային ծրագիրն իրագործելիս՝ վարկի և դրամաշնորհի միջոցների օգտագործման համար կիրառվում է միևնույն մոտեցումը: Բացառիկ դեպքերում, երբ շուկայական պայմաններից ելնելով հնարավոր չէ իրականացնել մրցույթներ, Հիմնադրամը կարող է նախապես համաձայնեցնելով ՀԲ հետ պայմանագիր կնքել «ՀայՌ-ուսագարդ» ՓԲԸ-ի հետ ներբնակարանային գազի անցկացման աշխատանքներ իրականացնելու նպատակով՝ կիրառելով «Ուղղակի պայմանագիր» գնման մեթոդը:

## 2.5 ԱՀՕԳԳ ֆինանսավորմամբ գազի և ջեռուցման ծրագիր

### Ընդհանուր տեղեկություններ

**Արդյունքահեն Օգնության Գլոբալ Գործընկերությունը (ԱՀՕԳԳ)** բազմադոնորային ֆինանսավորմամբ և Համաշխարհային Բանկի վերահսկողության ներքո գործող հիմնադրամ է, որը 3.1 մլն. ԱՄՆ դոլար է հատկացրել քաղաքային բազմաբնակարան շենքերում բնակվող մոտ 4500 կարիքավոր ընտանիքներին կապիտալ դրամաշնորհ տրամադրելու նպատակով, ինչը գազի և ջեռուցման որակյալ ծառայությունները հասու կդարձնի անապահով ընտանիքներին: ԱՀՕԳԳ-ի առանցքային նպատակն է զարգացող երկրների կարիքավոր ընտանիքներին հնարավորություն ընձեռնելը օգտվելու հիմնական ենթակառուցվածքային և սոցիալական վստահելի ծառայություններից՝ Արդյունքահեն օժանդակության (ԱՀՕ) մոտեցումների լայնածավալ կիրառմամբ:

Ի հավելումն՝ Քաղաքային ջեռուցման ծրագրի (ՔՁԾ) Բաղադրիչ Բ-ով նախատեսված է 3 մլն. ԱՄՆ դոլարի հատկացում և 530,000 ԱՄՆ դոլարի չափով համաֆինանսավորում կառավարության կողմից, ինչը կուղղվի ևս 5500 անապահով ընտանիքների ներգրավմանը ծրագրում: ԱՀՕԳԳ-ի և ՔՁԾ շրջանակներում հատկացված միջոցները կբաշխվեն ստորև առավել մանրամասն նկարագրված ծրագրի համաձայն, որը մշակվել է համապատասխան նախարարություններից, «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ից (ՀՌ-ԳԱ) և հասարակությունից ստացված կարծիքների և նկատառումների արդյունքում:

### Ծրագրի բնութագիրը

Առաջարկվող ԱՀՕ ծրագրի շրջանակներում իրականացվում է դրամատվություն՝ հայաստանաբնակ կարիքավոր ընտանիքների համար կապիտալ դրամաշնորհներ հատկացնելու միջոցով, անապահով ընտանիքների բնակարաններում զազամատակարարումն ու ջերմամատակարարումը ապահովելու նպատակով՝ հետևյալ տարբերակների ֆինանսավորմամբ.

ա) **անհատական վառարանային լուծուման տարբերակ**, որը նախատեսում է անապահով ընտանիքների բնակարանների միացում զազամատակարարման համակարգին և/կամ անհատական գազային վառարանի տեղակայում:

բ) **տեղային (լոկալ) ջեռուցմամբ լուծուման տարբերակ**, այդ թվում անապահով ընտանիքների բնակարանների միացում շենքի կամ թաղամասի մակարդակով տեղակայված կաթսայատներին:

Վերոնշյալ երկու տարբերակներում դրամատվության չափը որոշվում է փաստացի միացման ծախսերի հիման վրա: Դրամատվության գումարին հավելագրվում է նաև սահմանված չափով պարտադիր ներդրումային գումարը: Դրամաշնորհային միջոցների հաշվին վճարվում են միայն միացման այն ծախսերը, որոնք ապահովում են հարմարավետության անհրաժեշտ մակարդակ, պահանջարկի վրա հիմնված մոտեցման կիրառմամբ, ելնելով նրանից, թե ով է դիմել դրամատվության համար՝ անապահով ընտանիքն անձամբ, թե նրա անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձինք:

**Շահառուների ընտրության չափանիշները**

ԱՀՕԳԳ ծրագրի համար որպես հիմք է ընդունվում Հայաստանում ցածր եկամուտ ունեցող ընտանիքների գրանցման սոցիալական ապահովության ներկայիս հիմնական ծրագիրը՝ **Աղքատության ընտանեկան նպաստի ծրագիրը (ԱԸՆԾ)**: Ֆինանսավորումից օգտվելու իրավասություն ունեցող ընտանիքները պետք է ապահովեն հետևյալ պայմանները.

- բնակվեն քաղաքային բազմաբնակարան շենքի իրենց սեփականությունը հանդիսացող բնակարանում կամ մինչև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի ուժի մեջ մտնելը՝ 1999թ հունվարի 1-ը, նախկին ՀՀ բնակարանային օրենսգրքի համաձայն բնակելի տարածության օրդերի հիման վրա ստացած լինեն այն բնակարանը որտեղ գրանցված են ու շարունակում են բնակվել (այսինքն ունեն բնակելի տարածությունից օգտվելու իրավունք),
- Ներառված լինեն ԱԸՆԾ-ում
- Դրամաշնորհի տրամադրման պայման է հանդիսանում նաև սահմանված չափով պարտադիր համաֆինանսավորման իրականացումը, որը կազմում է 15 000 դրամ գումար՝ բնակարանը գազի ցանցին միացնելու և անհատական գազի վառարան տրամադրելու (գազօգտագործման երկու կետի տրամադրում) դեպքում, ինչպես նաև տեղային լոկալ ջեռուցման տարբերակի դեպքում, 7500 դրամ գումար՝ միայն գազի վառարան տրամադրելու դեպքում, ներառյալ գազօգտագործման մեկ հավելյալ կետի տրամադրումը կամ վերադասավորումը բնակարանում:

Ընտանիքների կողմից Ծրագրից հրաժարվելու և համաֆինանսավորման գումարը ետ պահանջելու դեպքում Հիմնադրամը կարող է.

- ա) ետ վերադարձնել ամբողջ գումարը, եթե իրականացվել է միայն նախագծման և/կամ ծխաօդատար ուղիների հավաստման աշխատանքները,
- բ) բնակարանը գազի ցանցին միացնելու և անհատական գազի վառարան տրամադրելու (գազօգտագործման երկու կետի տրամադրում) դեպքում, եթե կատարվել են գազի միացման շինմոնտաժային աշխատանքներն ամբողջապես կամ մասամբ, իսկ վառարանը դեռևս չի հատկացվել/տեղակայվել, վերադարձվում է գումարի կեսը (7500 դրամ),
- գ) միայն գազի վառարան տրամադրելու դեպքում, վառարանի ետ վերադարձնելու դեպքում 7500 դրամ համաֆինանսավորման գումարը վերադարձվում է ընտանիքին:

**Անհատական վառարանային լուծման տարբերակում** կիրառվում են նաև համապատասխանության հետևյալ չափանիշները.

- շենքը միացված է գործող գազի ցանցին, որը նախատեսված է նաև ջեռուցման համար,
- ընտանիքը պետք է ներառված լինի ԱԸՆԾ-ում և դիմելու տարվա հունվարի 1-ի դրությամբ ունենա 34.01 և ավելի միավոր: Կախված ծրագրի իրականացման ընթացքից՝ ՀԽ որոշմամբ և ՀԲ համաձայնությամբ կարող է վերանայվել միավորի նշված մեծությունը , ինչպես նաև դրա հաշվարկման ամսաթիվը:

**Տեղային ջեռուցմամբ լուծման տարբերակում** կիրառվում են նաև համապատասխանության հետևյալ չափանիշը.

հիմնավոր ապացույցներ առ այն, որ տվյալ շենքում բնակվող սեփականատերերի 50%-ից ավելին համաձայնել են օգտվել տեղային ջեռուցմամբ տարբերակից:

ԱԸՆԾ-ում ներգրավված անապահով ընտանիքների ցանկը տարեկան կտրվածքով ենթակա է ճշգրտման յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ի դրությամբ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրված տվյալների հետ: Դիմողը պետք է դիմելու տարվա հունվարի 1-ի դրությամբ ընդգրկված լինի ԱԸՆԾ-ում:

Նախարարության կողմից ներկայացված տվյալների և Հիմնադրամ դիմած ընտանիքների ներկայացրած փաստաթղթերի անհամապատասխանության դեպքում Հիմնադրամը տվյալ ընտանիքը ծրագրում ընդգրկելու համար կարող է հիմք ընդունել Սոցիալական ծառայության տարածքային մարմինների կողմից տրված տեղեկանքները:

### **Շահառուների սահմանափակումը**

Դրամաշնորհային ծրագրից օգտվելու իրավասություն չի կարող տրամադրվել ներքոհիշյալ դեպքերում.

- Երևան քաղաքի կենտրոնական հատվածում բնակվող ընտանիքներին, անկախ ԱԸՆԾ-ին իրենց մասնակցության հանգամանքից (քաղաքի այս հատվածում գտնվող տների գներն անշարժ գույքի շուկայում ամենբարձրն են),
- Բնակարանի սեփականատեր չհանդիսացող կամ վարձակալական հիմունքներով բնակվող ընտանիքներին (բացառությամբ այն ընտանիքների, որոնք մինչև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի ուժի մեջ մտնելը՝ 1999թ հունվարի 1-ը, նախկին ՀՀ բնակարանային օրենսգրքի համաձայն բնակելի տարածության օրդերի հիման վրա ստացել են բնակարան (բնակելի տարածությունից օգտվելու իրավունք) և գրանցված են ու շարունակում են բնակվել այդ բնակարաններում)
- Կենտրոնացված ջեռուցման գործող համակարգ ունեցող շենքերի բնակիչներին, բացառությամբ այն ընտանիքների, որոնք գործող համակարգի առկայության պայմաններում ջեռուցումից չեն օգտվում,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին համապատասխանող, գործող և ապահով գազի վառարան ունեցող ընտանիքներին: Հիմնադրամը կարող է անապահով ընտանիքների գազային վառարանը փոխարինել նորով, եթե այն չի համապատասխանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին, պայմանով որ կապալառուն պարտավորվում է հանել և ոչնչացնել սահմանված չափանիշներին չհամապատասխանող վառարանը:
- Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում մեկ անգամ դրամաշնորհ ստացած ընտանիքը չի կարող երկրորդ անգամ ընդգրկվել ծրագրում:

### **Ծրագրի կառավարումը**

Ծրագրի կառավարումն իրականացնում է Հիմնադրամը: Հիմնադրամը պարտավոր է համապատասխան կադրային ռեսուրսներ կենտրոնացնել այս նպատակի իրագործման համար: Հանձնառուի կարգավիճակով ծրագրի կառավարման հետ չառչնվող խնդիրներում Հիմնադրամը կարող է աջակցություն ստանալ արտաքին աղբյուրներից: Ծրագրի վարչական ծախսերի ֆինանսավորումը իրականացվում է դրամաշնորհի և ՄՁԸ վարկային միջոցների հաշվին:

Հիմնադրամի վարչական դերը նախատեսում է.

- հանրության իրազեկում դրամաշնորհային ծրագրի առկայության մասին, այդ թվում՝ առանձին ընտանիքներին, համատիրություններին, տեղական ինքնակառավարման մարմիններին և հնարավոր կապալառուներին,

- հայտերի ընդունում,
- համաֆինանսավորման համար նախատեսված բանկային հաշվի բացում և կառավարում,
- համաֆինանսավորման ստացում,
- կատարողական փաստաթղթերի ձևակերպում,
- մրցույթների անցկացում և կապալառուների ընտրություն,
- «ՀայՌուսԳազԱրդ» ՓԲԸ՝ հետայսու «ՀՌ-ԳԱ», և մրցութային կարգով ընտրված ջեռուցում մատակարարող ընկերությունների հետ պայմանագրերի կնքում և իրագործում,
- միացման աշխատանքների հաստատում,
- վճարումների իրականացում ՀՌ-ԳԱ-ին ու մրցութային կարգով ընտրված ջեռուցում մատակարարող ընկերություններին,
- արդյունքների, ցուցանիշների և ծրագրի ազդեցության նկատմամբ հսկողություն:

Հիմնադրամը հսկողություն է իրականացնում ծրագրին առնչվող ֆինանսական գործընթացների նկատմամբ: Մատուցված բոլոր ծառայությունների դիմաց վճարումները Հիմնադրամի կողմից իրականացվում են կապալառուին ՀՌ-ԳԱ-ի կամ ջերմամատակարարողների միջոցով: Հիմնադրամը ծրագրի չափանիշներին համապատասխանող որևէ ընտանիքի ուղղակիորեն գումարներ չի տրամադրում:

Գազի մատակարարման և օգտագործման կանոնների համաձայն՝ գործընթացի հսկողությունն ու հաստատագրումն իրականացնում է ՀՌ-ԳԱ-ն: Ի հավելումն, ծրագրի համաձայն՝ կատարողական ռիսկերը կրում է ծառայություն մատուցողը (իսկ անհատական վառարանային լուծման տարբերակում՝ գազամատակարարող ընկերությունը): Արդյունքում, ՀՌ-ԳԱ-ն կարևոր դերակատարություն է ստանձնում անհատական վառարանային լուծման տարբերակի իրագործման դեպքում, մասնավորապես.

- մոնտաժման աշխատանքներ իրականացնող կապալառուի հաստատագրում, որի ընտրությունն իրականացվում է Գազի մատակարարման և օգտագործման կանոնների ուղեցույցների համաձայն,
- նախքան գազի միացումը, բնակարանների նախնական հետազոտում՝ ի հավաստիացումն նրա, որ տվյալ բնակարանի տեխնիկական պայմանները համապատասխանում են գազատարի անցկացման համար, ինչպես նաև համապատասխան տեխնիկական լուծումների դիտարկում (օդափոխության համակարգ, վառարանի տեսակ, և այլն): Այս տվյալները պետք է ընդգրկվեն մրցութային փաստաթղթերի փաթեթում,

- մասնակցություն մրցութային փաստաթղթերի նախապատրաստմանը և գազային վառարանների, նախագծման ու մոնտաժային աշխատանքների գնումների համար նախատեսված մրցութային հայտերի գնահատում,
- գազային վառարաններ մատակարարող, նախագծման և մոնտաժային աշխատանքներ իրականացնող կապալառուների հետ պայմանագրերի կնքում և կատարում,
- կապալառուների կողմից իրականացվող ներքնակարանային նախագծման և մոնտաժային աշխատանքների հսկողություն և հաստատագրում,
- վճարումների իրականացում գազային վառարաններ մատակարարող, նախագծման և մոնտաժային աշխատանքներ իրականացնող կապալառուներին,
- Հիմնադրամին պարբերական հաշվետվությունների ներկայացում:

## **Գործողությունների իրականացման հաջորդականությունը**

### **Անհատական վառարանային լուծման տարրերակ**

1. Հիմնադրամը ՀՌԳԱ-ի հետ ստորագրում է Ծրագրի իրագործման համաձայնագիր, որը սահմանում է ծրագրի կառավարման մասով կողմերի ստանձնած դերերն ու պարտականությունները:
2. Հիմնադրամը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացած անապահով ընտանիքների ցանկը ներկայացնում է ՀՌԳԱ-ին՝ գազամատակարարման ցանցին արդեն իսկ միացված բնակարանները բացահայտելու և ծրագրում դրանց ներգրավումը բացատրելու նպատակով:
3. Հիմնադրամը հասարակության իրազեկմանն ուղղված լայնածավալ գործունեություն է ծավալում՝ խրախուսելով համատիրություններին և տեղական ինքնակառավարման մարմիններին ներկայացնել համապատասխան հայտ ծրագրից օգտվելու համար:
4. Առանձին ընտանիքները կամ նրանց անունից հանդես եկող համատիրությունները և/կամ տեղական ինքնակառավարման մարմինները ներկայացնում են հայտը Հիմնադրամ: Առանձին ընտանիքների անունից հանդես գալու դեպքում՝ համատիրությունները կամ տեղական ինքնակառավարման մարմինները կազմում են հայտային փաթեթը, ստորագրությամբ ձեռք բերում առանձին ընտանիքների համաձայնությունը, որից հետո փաթեթը ներկայացվում է Հիմնադրամ:
5. Բնակարանների համապատասխանությունը սահմանված չափանիշներին հաստատվելու դեպքում՝ հայտատուին ներկայացվում է պարտադիր համաֆինանսավորում իրականացնելու պահանջ՝ գումարը մուտքագրելով Հիմնադրամի կողմից հատուկ բացված բանկային հաշվին:
6. Ծրագրից օգտվելու իրավասություն ստացած ընտանիքների կողմից պարտադիր համաֆինանսավորման կատարումը հաստատող փաստաթուղթը ստանալուց հետո,

Հիմնադրամը յուրաքանչյուր եռամսյակի վերջում ընդունում է դիմումներն ի կատարում և այդ մասին համապատասխան ծանուցագիր է ուղարկում ընտանիքներին:

7. Հիմնադրամը միակ աղբյուրի մեթոդով պայմանագիր է կնքում ՀՌ-ԳԱ-ի հետ՝ Ծրագրից օգտվելու իրավասություն ստացած Ընդունելի ընտանիքների բնակարանների տեխնիկական պայմանների տրամադրման, համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման, նախագծերի համաձայնեցման, տեխնիկական վերահսկողության ապահովման մասին: Պայմանագրի արժեքը սահմանվում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատած մեթոդիկայի համաձայն հաշվարկված և Կողմերի միջև փոխադարձ համաձայնեցված գնով:
8. Եռամսյակային կամ կիսամյակային ժամանակահատվածի ավարտին Հիմնադրամը ՀՌ-ԳԱ-ի հետ կազմակերպում է ծրագրի շահառու հանդիսացող բնակարաններում խողովակաշարի նախագծման և մոնտաժային աշխատանքների, ինչպես նաև գազային վառարանների մատակարարման և տեղադրման աշխատանքների կատարման մրցույթներ: ՀՌ-ԳԱ-ի կողմից ներկայացված տեխնիկական պայմանների նկարագիրը ընդգրկվում է մրցութային փաստաթղթերում:
9. Ծրագրից օգտվելու իրավասություն ստացած բնակարանների ցանկի համաձայն մրցութային կարգով ընտրված ներբնակարանային նախագծման և մոնտաժային աշխատանքներ իրականացնող կապալառուն անցնում է նախատեսված աշխատանքի կատարմանը: Մոնտաժային աշխատանքներն ավարտելուց հետո, կապալառուն ծանուցում է ՀՌ-ԳԱ-ին աշխատանքների հաստատման և հանձնման մասին:
10. Աշխատանքներն ընդունելուց հետո ՀՌ-ԳԱ-ն համապատասխան ծանուցում է ուղարկում մրցութային կարգով ընտրված գազային վառարանների մատակարարման և տեղադրման աշխատանքներ իրականացնող կապալառուին այն մասին, որ տվյալ բնակարանը պատրաստ է գազային վառարանների մատակարարման և տեղադրման աշխատանքներ կատարելու համար:
11. Գազային վառարանը տեղադրվելուց հետո, Հիմնադրամն անհատական կարգով հավաստիանում է նրանում, որ խողովակաշարի մոնտաժման և վառարանի տեղադրման աշխատանքներն իրականացվել են պաշաճ կերպով:

**Տեղային ջեռուցմամբ լուծման տարրերակ**

1. ԱՀՕ ծրագրով առաջարկվում է տեղային (լոկալ) կաթսայի տեղադրմամբ լուծման մի քանի տարբերակ կախված նրանից, թե արդյոք բնակարանների սեփականատերերի մեծամասնությունը որոշել է օգտվել ջեռուցում ապահովող ընկերության ծառայություններից, որը կարող է լինել էներգետիկ ծառայություններ մատուցող ընկերություն կամ տվյալ շենքի համատիրությունը, թե նախապատվությունը տրվել է տեղային ջեռուցմամբ լուծման տարբերակին, սակայն մատակարարողը չի ընտրվել: Ձեռուցման մատակարարողն ընտրված չլինելու դեպքում կիրառվում է հետևյալ ընթացակարգը. Հիմնադրամը հասարակության իրազեկմանն ուղղված լայնածավալ գործունեություն է ծավալում՝ խրախուսելով համատիրություններին ներկայացնել համապատասխան հայտ ծրագրից օգտվելու համար:
2. Համատիրությունը, կամ վերջինիս բացակայության պարագայում տվյալ բնակարանային համալիրը ներկայացնող ցանկացած այլ խմբավորում, ստորագրություններ հավաքագրելու միջոցով ստանում է բնակիչների համաձայնությունն օգտվելու ծրագրի տեղային ջեռուցմամբ լուծման տարբերակից: Բնակիչներից բավարար քանակով ստորագրություններ (առնվազն 50 տոկոս) հավաքագրվելու դեպքում համատիրությունը, կամ վերջինիս բացակայության պարագայում տվյալ բնակարանային համալիրը ներկայացնող ցանկացած այլ խմբավորում, դիմում է Հիմնադրամին դրամատվություն ստանալու խնդրանքով՝ տվյալ շենքի կարիքավոր ընտանիքների բնակարանների միացումը համակարգին ապահովելու նպատակով:
3. Սահմանված չափանշներին համապատասխանող բնակարանների համար ներկայացված դիմումները հաստատվելուց հետո, դիմողին ներկայացվում է դրամատվության իրավասություն ունեցող բնակարանների մասով պարտադիր համաֆինանսաֆորում իրականացնելու պահանջ՝ համապատասխան գումարների մուտքագրումով Հիմնադրամի բանկային հաշվին:
4. Ծրագրից օգտվելու իրավասություն ստացած բնակարանների մասով կատարված պարտադիր համաֆինանսավորումը հաստատող փաստաթուղթը ստանալուց հետո, Հիմնադրամը բնակարանների սեփականատերերին համապատասխան ծանուցագիր է ուղարկում դիմումն ի կատարում ընդունելու մասին:
5. Էներգետիկ ծառայություններ մատուցող ընկերության ընտրության նպատակով Հիմնադրամի կողմից հայտարարվում է մրցույթ:
6. Տեղային ջեռուցման համակարգի մոնտաժային աշխատանքներն ավարտելուց և ջերմամատակարարումն ապահովելուց հետո մրցութային եղանակով ընտրված էներգետիկ ծառայություններ մատուցող ընկերությունը համապատասխան ծանուցագիր է ներկայացնում Հիմնադրամին:
7. Հիմնադրամն անհատական կարգով հավաստիանում է նրանում, որ ջերմամատակարարումն ապահովված է: Հիմնադրամը դիտարկման է ենթարկում բնակարանների սեփականատերերի և էներգետիկ ծառայություններ մատուցող ընկերության միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագիրը՝ հավաստիանալու առ այն, որ միացման ծախսերը ջեռուցման սակագնի մեջ չեն ներառվել:

Ձեռուցման մատակարարողն ընտրված լինելու դեպքում կիրառվում է հետևյալ ընթացակարգը.

1. Հիմնադրամը հասարակության իրազեկմանն ուղղված լայնածավալ գործունեություն է ծավալում՝ խրախուսելով համատիրություններին ներկայացնել համապատասխան հայտ ծրագրից օգտվելու նպատակով:
2. Համատիրությունը, կամ վերջինիս բացակայության պարագայում տվյալ բնակարանային համալիրը ներկայացնող ցանկացած այլ խմբավորում, որը կարողացել է տվյալ բնակարանային համալիրի բնակիչներից բավարար չափով (առնվազն 50 տոկոս) ձայներ հավաքագրել, դիմում է Հիմնադրամին դրամատվություն ստանալու խնդրանքով՝ տվյալ շենքի կարիքավոր ընտանիքների բնակարանների միացումը համակարգին ապահովելու նպատակով:
3. Սահմանված չափանշներին համապատասխանող բնակարանների համար ներկայացված դիմումները հաստատվելուց հետո, դիմողին ներկայացվում է պարտադիր համաֆինանսաֆորում իրականացնելու պահանջ՝ համապատասխան գումարների մուտքագրումով Հիմնադրամի բանկային հաշվին:
4. Ծրագրից օգտվելու իրավասություն ստացած բնակարանների մասով կատարված պարտադիր համաֆինանսավորումը հաստատող փաստաթուղթը ստանալուց հետո, Հիմնադրամը բնակարանների սեփականատերերին և ջերմամատակարարող ընկերությանը համապատասխան ծանուցագիր է ուղարկում դիմումն ի կատարում ընդունելու մասին:
5. Ջերմամատակարարող ընկերությունը ընտրում է կապալառուին, որը պետք է ապահովի կարիքավոր ընտանիքների բնակարանների միացումը տեղի ջեռուցման համակարգին կամ, այդպիսի համակարգի բացակայության պարագայում, ապահովի ջեռուցման համակարգի տեղադրումը սահմանված առևտրային պրակտիկայի կիրառմամբ:
6. Տեղային ջեռուցման համակարգի մոնտաժային աշխատանքներն ավարտելուց և ջերմամատակարարումն ապահովելուց հետո ջերմամատակարարող ընկերությունն այդ մասին ծանուցում է Հիմնադրամին:
7. Հիմնադրամն անհատական կարգով հավաստիանում է նրանում, որ ջերմամատակարարումն ապահովված է: Հիմնադրամը դիտարկման է ենթարկում բնակարանների սեփականատերերի և ջերմամատակարարող ընկերության միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագիրը՝ հավաստիանալու առ այն, որ միացման ծախսերը ջեռուցման սակագնի մեջ չեն ներառվել:

## **Ֆինանսական կառավարումն ու վճարումների իրականացման կարգը**

**Գրամական հոսքերը.** ԱՀՕԳԳ դրամաշնորհի ֆինանսավորումն իրականացվում է Համաշխարհային բանկի կողմից.

ա/ Առանձնացված հաշվի համալրման միջոցով՝ մասհանման հայտի հիման վրա,  
բ/ մասհանման հայտի հիման վրա իրականացված ուղղակի վճարման միջոցով:

Հետագա դրամական հոսքերը Հիմնադրամից իրականացվում են. ա/ ՀՈԳԱ-ի միջոցով՝ անհատական վառարանային լուծման տարբերակով անապահով ընտանիքների

բնակարանները գազամատակարարման ցանցին միացնելու նպատակով, ք/ տեղային ջեռուցման մատակարարողների միջոցով՝ տեղային ջեռուցմամբ լուծման տարբերակով անապահով ընտանիքների բնակարանները համապատասխան ցանցին միացնելու նպատակով: ՀՌ-ԳԱ-ն իրականացնում է գումարների վճարումը կապալառուներին, որոնք կապահովեն ծրագրի չափանիշներին համապատասխանող անապահով ընտանիքների բնակարանների միացումը գազամատակարարման համակարգին և կապահովեն գազային վառարանի տեղակայումը, իսկ ջերմամատակարարողները կվճարեն այն կապալառուներին, որոնք կապահովեն բնակարանների միացումը տեղային կաթսայատանը: ՀՌ-ԳԱ-ն և ջերմամատակարարողները կարող են լիազորել Հիմնադրամին վճարումն անմիջականորեն իրականացնելու կապալառուին: Վճարումների իրականացման հիմքերն ավելի մանրամասն նկարագրված են ստորև:

**Հաշվապահական քաղաքականությունն ու ընթացակարգերը.** Հիմնադրամի հաշվապահության վարումն իրականացվում է հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքով, իսկ ֆինանսական հաշվետվությունները, այդ թվում եռամսյակային Ֆինանսական մոնիթորինգի հաշվետվություններում առկա տվյալներն արտացոլվում են ԱՄՆ դոլարով:

**Արտաքին աուդիտ.** Ծրագրի աուդիտը իրականացվում է ՀԲ-ի հավանությանն արժանացած անկախ աուդիտորական ընկերության կողմից՝ ՀԲ-ի համար ընդունելի տեխնիկական առաջադրանքների հիման վրա: Գոյություն ունի ԱՊՀ-ում Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի աուդիտն իրականացնելու իրավասություն ունեցող աուդիտորական ընկերությունների ցանկ, որը պարբերաբար վերանայվում է: Ծրագրի տարեկան հաշվետուզման ենթարկված ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են ՀԲ-ին յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում, ինչպես նաև ծրագրի փակման ժամանակ: Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները կազմվում են եռամսյակային կտրվածքով ներկայացվող Ֆինանսական մոնիթորինգի հաշվետվությունների հիման վրա և ներառում.

- ա/ հաշվապահական հաշվեկշիռը,
- բ/ աղբյուրների և օգտագործված միջոցների ամփոփագիրը,
- գ/ ծրագրի բաղադրիչների մասով օգտագործված միջոցների ամփոփագիրը,
- դ/ ծախսումների մասին հաշվետվությունը,
- ե/ Առանձնացված հաշվի մասով հաշվետվությունը,
- զ/ ֆինանսական հաշվետվություններին առդիր գրառումները:

**Հաշվետվություն և մոնիտորինգ.** Ծրագրի կառավարմանն ուղղված Ֆինանսական մոնիթորինգի հաշվետվությունները կիրառվում են ծրագրի մոնիթորինգի և վերահսկողության նպատակով: ՀՌ-ԳԱ-ն եռամսյակային պարբերականությամբ հաշվատվություն է ներկայացնում Հիմնադրամին՝ տվյալ եռամսյակում իրականացված միացումների վերաբերյալ տեղեկատվության արտացոլմամբ՝ ըստ քաղաքների:

**Վճարումների կարգը.** Գրամաշնորհային միջոցների բաշխումն իրականացվում է երեք տարվա ընթացքում: Համապատասխան վճարումներն իրականացվում են Վճարումների վերաբերյալ գրության և Հայաստանի Հանրապետության համար կազմված ֆինանսավորման նոր չափանիշների հիման վրա՝ Համաշխարհային Բանկի կողմից ընդունված ընթացակարգերի պահպանմամբ (փոխհատուցում ամբողջական փաստաթղթային փաթեթի հիման վրա, ծախսումների մասին հաշվետվություններ, երրորդ անձանց կատարված ուղղակի վճարումներ և հատուկ պարտավորություններ):

**Առանձնացված հաշիվ.** Հիմնադրամը բացում է Առանձնացված հաշիվ, իսկ անհրաժեշտության դեպքում նաև Առանձնացված հաշիվներին կից ենթահաշիվ (տարանցիկ հաշիվ) ՀԲ-ի կողմից ընդունելի առևտրային բանկերից մեկում, որի միջոցով իրականացվում է ԱՀՕԳ- դրամաշնորհային միջոցների ֆինանսավորումը: Առանձնացված հաշիվներից իրականացվող միանվագ հատկացման չափը սահմանվում է 200,000 ԱՄՆ դոլար, որը առաջնահերթորեն կուղղվի Հիմնադրամի գործառնական ծախսերի ծածկմանը և տեղային ջեռուցմամբ լուծման տարբերակում դրամատվության գծով վճարումներին: Փոխատուցման և ուղղակի վճարման հայտերի նվազագույն արժեքը կազմում է 40,000 ԱՄՆ դոլար:

**Այլ օժանդակ փաստաթղթեր.** Պահանջվող օժանդակ փաստաթղթերի փաթեթը պետք է ներառի ՀՌ-ԳԱ-ի և ջերմամատակարարողների կողմից փաստացի իրականացված միացումների քանակի հիման վրա ներկայացված հաշիվ-ապրանքագրերը, անկախ ստուգումների հավաստագրերը՝ առ այն, որ մոնտաժային աշխատանքներն իրականացվել են և կատարողական փաստաթղթերը՝ ի հավաստումն նրա, որ գազամատակարարումն ու ջերմամատակարարումն ընտանիքների համար համապատասխան ծառայություններ մատուցողների կողմից պատշաճ կերպով ապահովվել է: Օժանդակ փաստաթղթերը Հիմնադրամում պահպանվում են ՀԲ-ի կողմից աուդիտի հաշվետվությունը (այն ֆինանսական տարվա համար, որի ընթացքում կատարվել է վերջին մասհանումը Գրամաշնորհային հաշվից) ստանալուց հետո առնվազն մեկ տարի: Պահանջվելու դեպքում փաստաթղթային փաթեթը պետք է տրամադրվի աուդիտորներին և Համաշխարհային բանկի աշխատակիցներին Հիմնադրամ կատարած այցելության ժամանակ:

**Հարկային վճարումները.** Համաշխարհային Բանկի կողմից մշակված Հայաստանի ֆինանսավորման չափանիշների համաձայն ՀԲ-ն կարող է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ողջամիտ բոլոր հարկերի և տուրքերի վճարումը:

**Արտարժույթային ռիսկը.** Պայմանագրերից բխող արտարժույթային ռիսկը կրում է Հիմնադրամը:

## Գնումների ընթացակարգը

Ծրագրով նախատեսված բոլոր ապրանքները, աշխատանքները և ծառայությունները գնվում են 2004թ. մայիս ամսով թվագրված «Ուղեցույց. ՎՋՄԲ-ի փոխառությունների և ՄՋԳ-ի վարկերի շրջանակներում գնումները» և «Ուղեցույց. Համաշխարհային բանկի վարկառուների կողմից խորհրդատուների ընտրությունն ու վարձումը» փաստաթղթերի, ինչպես նաև Գրամաշնորհային համաձայնագրի և Չարգացման վարկային համաձայնագրի դրույթների համաձայն: Ծրագրով նախատեսված գնումների գործընթացը կազմակերպում է Հիմնադրամը՝ ՀՌ-ԳԱ-ի հետ համատեղ: Հիմնադրամը նախապատրաստում է ՀԲ-ի հետ համաձայնեցված և Հոգաբարձուների Խորհրդի կողմից հաստատված գնումների պլանը, որն իր մեջ ներառում է յուրաքանչյուր պայմանագրի մասով կատարվելիք գնումների տարբեր մեթոդները, նախնական որակավորման անհրաժեշտությունը, գնահատված արժեքը, նախնական վերանայման պահանջներն ու ժամանակահատվածը: Գնումների պլանը ենթակա է վերանայման տարեկան առնվազն մեկ անգամ կամ ըստ անհրաժեշտության՝ ծրագրի իրագործման փաստացի կարիքներն ու ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումն արտացոլելու իմաստով:

Աշխատանքների և սարքավորումների ձեռքբերումն իրականացվում է Համաշխարհային բանկի կողմից հաստատված Մրցութային ստանդարտ փաստաթղթերի հիման վրա (միջազգային

մրցակցային սակարկություն, ազգային մրցակցային սակարկություն, փոքրածավալ շինարարական աշխատանքներ, գնանշման հարցումներ), կամ միավոր արժեքի վրա հիմնված պայմանագրերի կնքման միջոցով՝ ապահովելով ճկունության դրսևորում ծրագրի բազմաթիվ առանձին շահառուների նկատմամբ:

**Անհատական գազային վառարանով լուծման տարբերակ.** Հիմնադրամը մրցութային գործընթացներն իրականացնում է «Հայրուսգազարդ» ՓԲԸ հետ համատեղ, հետևյալ երկու առանձին ծառայությունների համար.

**ա) ներքնակարանային գազատարի (հաշվիչից մինչև վառարան) նախագծման և մոնտաժման աշխատանքներ.** Նախագծման և մոնտաժման աշխատանքների պայմանագրերը շնորհվում են մրցակցային տեղերի հիմունքներով՝ շրջանային կամ տեղական ինքնակառավարման մարմինների մակարդակով: Յուրաքանչյուր ընկերություն կարող է առանց սահմանափակման սակարակել մեկ և ավելի պայմանագրերի համար: Մրցութային փաստաթղթերի փաթեթը պետք է պարունակի ՀՀ օրենքներով և իրավական ակտերով սահմանված կարգով շինարարական կազմակերպություններին առաջադրվող պահանջներն ու չափանիշները, ինչպես նաև աշխատանքների տեխնիկական նկարագիրը (ՀՌ-ԳԱ կողմից սահմանված տեխնիկական պայմանների հիման վրա): Տեխնիկական պահանջներն ամենից զատ նախատեսում են նաև մոնտաժային աշխատանքների համապատասխանեցում ՀՀ օրսենդրությամբ սահմանված շրջակա միջավայրի պահպանման չափանիշներին, ինչպես նաև ՔԶԾ Բնապահպանության կառավարման պլանով ամրագրված պահանջներին: Մրցույթի մասնակիցներին առաջադրվում է սակարակել մեկ բնակարանի մասով նախատեսվող միացման ծախսերի շուրջ:

**բ) գազային վառարանների մատակարարում և տեղադրում.** Տվյալ աշխատանքների շուրջ ծավալվող սակարկությունն ուղղված է ՀՌ-ԳԱ կողմից սահմանված տեխնիկական պայմաններին համապատասխանող գազային վառարանների մատակարարմանը՝ գազի անվտանգ օգտագործմանն առնչվող ՀՀ օրենսդրությամբ, միջազգային կամ դրանց հավասարեցված այլ ստանդարտների պահպանմամբ:

Հիմնադրամը գազային վառարանների և նախագծման ու մոնտաժային աշխատանքների դիմաց ՀՌ-ԳԱ-ին վճարում է հետևյալ ժամանակացույցի համաձայն.

ա) գազամատարարարող ընկերության և աշխատանքներն իրականացնող կապալառուի միջև համապատասխան պայմանագրի ստորագրումից հետո կատարվում է կանխավճար սահմանված արժեքի 20 տոկոսի չափով,

բ) սահմանված գումարի 70 տոկոսը վճարվում է շահառուի բնակարանում գազամատարակարարումը փաստացի ապահովվելու դեպքում, ինչը պետք է հաստատի Հիմնադրամն անձամբ կան նրա կողմից նշանակված անկախ անձը,

գ) սահմանված գումարի 10 տոկոսը վճարվում է ծառայությունները 12 ամիս անընդմեջ բավարար որակով մատուցվելու դեպքում, ինչը հաստատում է Հիմնադրամն անձամբ կամ նրա կողմից նշանակված անկախ անձը: Ծառայության որակը գնահատվում է բավարար (հետևապես և վճարվում է գումարի մնացյալ 10 տոկոսը), եթե օգտագործված գազի դիմաց բաժանորդի կողմից պարտաճանաչ վճարվելու դեպքում, գազամատակարարումն անխափան կերպով իրականացվել է և գազի արտահոսք չի գրանցվել: Ծառայության որակը գնահատվում է բավարար նաև, եթե ներքնակարանային գազատարի միջոցով հնարավոր է եղել ապահովել գազամատակարարումը, սակայն ծառայությունը կասեցվել է բաժանորդի կողմից վճարում

չկատարվելու պատճառով: Սահմանված գումարի 10 տոկոսը կարող է վճարվել նաև ավելի վաղ (երկրորդ մասնակի վճարման հետ միատեղ), եթե ՀՌ-ԳԱ-ն համապատասխան գումարի չափով ձեռք է բերում բանկային երաշխիք Հիմնադրամի կողմից ընդունելի առևտրային բանկից:

ՀՌ-ԳԱ-ն ինքնուրույնաբար է սահմանում կապալառուներին իրականացվող վճարումների ժամանակացույցը, որը սակայն չպետք է նախատեսի Հիմնադրամի կողմից իրականացվող վճարումների ժամանակացույցի համեմատ ավելի կոշտ պայմաններ (այն է՝ ՀՌ-ԳԱ-ն չի վճարում 12 ամսվա համար նախատեսված գումարի ավելի քան 10 տոկոսը կամ ավելի քան 12 ամիս չի վճարում սահմանված գումարի մնացյալ 10 տոկոսը):

**Տեղային ջեռուցմանը լուծման տարրերակ.** Ջեռուցման մատակարարողն ընտրված չլինելու դեպքում, Հիմնադրամը հայտարարում է շենքի կամ մի քանի շենքերի մակարդակով ջեռուցման ծառայությունների մատուցման մրցույթ: Մրցութային փաստաթղթերը նախատեսում են մոնտաժային աշխատանքների համապատասխանեցում ՀՀ օրսենդրությամբ սահմանված շրջակա միջավայրի պահպանման չափանիշներին, ինչպես նաև ԶՁԾ Բնապահպանության կառավարման պլանով ամրագրված պահանջներին: Ջեռուցման ծառայությունների մատուցման մրցույթի մասնակիցներին առաջադրվում է սակարկել մեկ բնակարանի մասով նախատեսվող միացման ծախսերի շուրջ: Բացի այդ, մրցութային փաստաթղթերում ջեռուցման սակագինը չի կարող գերազանցել Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից լայնամասշտաբ ջեռուցման ծրագրերի (թաղամասային ջեռուցում) համար նախատեսված սակագինը: Մրցույթում որպես անցումային շեն է դիտվում մեկ բնակարանի մասով նվազագույն միացման ծախսերի առաջարկը: Ջեռուցման մատակարարողը կարող է միացման ծախսերը ներառել ջեռուցման սակագնի մեջ ոչ կարիքավոր ընտանիքների համար:

Բնակարանների սեփականատերերի կողմից ջեռուցման մատակարարողն ընտրված լինելու դեպքում, շենքում առկա տեղային ջեռուցման համակարգին ծրագրի շահառուների միացումն ապահովվելու նպատակով տրամադրվող կապիտալ դրամաշնորհային միջոցների չափը պետք է համապատասխանի ջեռուցման համակարգին միացման, ներբնակարանային ենթակառուցվածքի շինարարության և վերականգնման փաստացի արժեքին և չի կարող գերազանցել 500 ԱՄՆ դոլար գումարի չափը մեկ բնակարանի համար: Այս աշխատանքներն իրականացնող կապալառուների ընտրությունն իրականացնում է ջեռուցման մատակարարողը՝ ընդունված առևտրային պրակտիկայի կիրառմամբ: Պահանջվելու դեպքում կապալառուն պետք է ներկայացնի միացման ծախսերի դասակարգումը:

Վերոնշյալ երկու դեպքում էլ Հիմնադրամը վճարում է ջեռուցման մատակարարողին ծրագրի շահառուների բնակարանները համակարգին միացնելու համար մասնակի վճարումների հետևյալ ժամանակացույցով.

ա) սահմանված գումարի 90 տոկոսը վճարվում է շահառուների բնակարանները ջեռուցման համակարգին միացվելու և ջերմամատարակարարումն ապահովվելու դեպքում, ինչում պետք է հավաստիանա Հիմնադրամն անձամբ կան նրա կողմից նշանակված անկախ անձը,

բ) սահմանված գումարի 10 տոկոսը վճարվում է ծառայությունները 12 ամիս անընդմեջ բավարար որակով մատուցվելու դեպքում, ինչը հաստատում է Հիմնադրամն անձամբ կան նրա կողմից նշանակված անկախ անձը: Ծառայության որակը գնահատվում է բավարար (հետևապես և վճարվում է գումարի մնացյալ 10 տոկոսը), եթե, օգտագործված ջեռուցման դիմաց բաժանորդի կողմից պարտաճանաչ վճարվելու դեպքում, ջերմամատակարարումը պատշաճ կերպով իրականացվել է: Ծառայության որակը գնահատվում է բավարար նաև, եթե առկա են եղել ջերմամատարակարարումն ապահովելու համար բոլոր անհարժեշտ պայմանները,

սակայն ծառայությունը դադարեցվել է բաժանորդի կողմից վճարում չկատարվելու պատճառով:

***Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումը (բացառությամբ խոհրդատվական ծառայությունների)***

**Ա. Միջազգային մրցակցային սակարկություն:** Սույն հոդվածի Բ ենթաբաժնով այլ պայմաններ նախատեսված չլինելու դեպքում, պայմանագրերը շնորհվում են Միջազգային մրցակցային սակարկությունների հիման վրա:

**Բ. Գնումների այլ ընթացակարգեր**

**1. Ազգային մրցակցային սակարկություն.** Մեկ պայմանագրի արժեքը 300,000 ԱՄՆ դոլարից պակաս գնահատված ապրանքների և 2,000,000 ԱՄՆ դոլարից պակաս գնահատված աշխատանքների գնման համար գործում է Ազգային մրցակցային սակարկության մեթոդը՝ հետևյալ լրացուցիչ դրույթների համաձայն.

(ա) և ոչ մի նախապատվություն չպետք է տրվի՝ հիմք ընդունելով մրցույթի մասնակցի ազդությունը և/կամ ապրանքների ծագումը: Համապատասխան ոլորտը կարգավորող նախարարության կողմից հրապարակված որևէ կանոնակարգ, տարածքային կամ տեղական կանոնակարգումներ, որոնք սահմանափակում են Ազգային մրցակցային սակարկության կիրառումը մի շարք կապալառուների կամ մատակարարների և/կամ ապրանքների ծագման նկատմամբ, սույն ծրագրի շրջանակներում իրականացվող գնումների ընթացակարգերի վրա չեն տարածվում,

(բ) այն ընկերությունները, որոնց բաժնետոմսերի մեծամասնությունը պատկանում է Հայաստանի Հանրապետությանը, չեն կարող հրավիրվել Կառավարության համար իրականացվող մրցույթներին, բացառությամբ այն դեպքերի, եթե նրանք գործում են կամ բավարար ապացույցներ են ներկայացնում առ այն, որ կարող են գործունեություն ծավալել որպես իրավական և ֆինանսական առումով ինքնավար իրավաբանական անձ և գործել առևտրային օրենքներին համապատասխան,

(գ) իրականացվում է հետորակավորում,

(դ) հետորակավորման չափանիշները միայն տարածվում են մրցույթի մասնակցի անցյալ պայմանագրային կատարողականի, մրցույթի մասնակցի ֆինանսական, կառավարման և տեխնիկական կարողությունների վրա,

(ե) համատեղ ձեռնարկությունները կրում են յուրաքանչյուրն իր մասով առանձին և համապարտ պատասխանատվություն,

(զ) պայմանագրի գնահատված արժեքը հրապարակման ենթակա չէ,

(է) մրցութային սակարկությունների գործընթացում՝  
1. գնառաջարկները հայտարարվում են սակարկության բացման ժամանակ: Երկու ծրարների համակարգը օգտագործվելու դեպքում, ծրարներից երկուսն էլ բացվում են և գնառաջարկները հայտարարվում են սակարկության բացման ժամանակ,

2. սակարկության բացման ժամանակ ոչ մի գնառաջարկ չի կարող մերժվել,
3. գնառաջարկները չեն կարող մերժվել միայն այն հիմքով, որ դրանք գերազանցում են գնահատված գինը,
4. գնառաջարկները կարող են չեղյալ հայտարարվել և նոր սակարկություն կարող է հրավիրվել միայն Ուղեցույցների 2.61 դրույթի պայմանների պահպանմամբ,
5. գնառաջարկի գնահատման ցանկացած չափանիշ քանակավորվում է դրամական արտահայտությամբ կամ գրանցվում որպես անցումային կամ ձախողման չափանիշ:

**2. Գնանշման հարցումներ.** Մեկ պայմանագրի արժեքը 100,000 ԱՄՆ դոլարից պակաս գնահատված ապրանքներն ու աշխատանքները կարող են ձեռքբերվել գնանշման հարցումների հիման վրա շնորհվող պայմանագրերի կնքմամբ:

**3. Պայմանագրերի ուղղակի կնքում.** Այն ապրանքներն ու աշխատանքները, որոնք, ըստ Համաշխարհային Բանկի, համապատասխանում են Գնումների Ուղեցույցների 3.6-3.7 դրույթներով պայմանագրերի ուղղակի կնքման համար սահմանված պահանջներին, կարող են ձեռքբերվել նշված գնումների մեթոդի համաձայն:

**4. Առևտրային պրակտիկա:** Յուրաքանչյուր պայմանագրի արժեքը 300,000 ԱՄՆ դոլարին համարժեք գումարից պակաս գնահատված առարկաները, որոնց ֆինանսավորումը պետք է իրականացնի ջեռուցման մատակարարողը, կարող են գնվել ըստ ՀԲ-ի կողմից ընդունելի առևտրային պրակտիկայի Գործառնական Ձեռնարկի Հավելված 13-ով սահմանված կարգով:

### **Խորհրդատվական ծառայությունների գնումը**

**Ա. Որակի և գնի վրա հիմնված ընտրություն.** Սույն հոդվածի Բ ենթաբաժնով այլ պայմաններ նախատեսված չլինելու դեպքում, խորհրդատվական ծառայությունները գնվում են Որակի և գնի վրա հիմնված ընտրության պայմանագրերի շնորհմամբ: «Խորհրդատուների ուղեցույցներ» փաստաթղթի 2.7 պարբերության նպատակներով մեկ պայմանագրի արժեքը 100,000 ԱՄՆ դոլարի գումարից պակաս գնահատված ծառայությունների համար խորհրդատուների կարճ ցանկը կարող է ամբողջապես ներկայացված լինել ազգային խորհրդատուներով:

### **Բ. Այլ ընթացակարգեր**

**1. Ֆիքսված բյուջեի շրջանակներում ընտրություն.** ՀԲ-ի դիտարկմամբ «Խորհրդատուների ուղեցույցներ» փաստաթղթի 3.5 պարբերության պահանջները բավարարող առաջադրանքների կատարմանն ուղղված ծառայությունները կարող են գնվել Ֆիքսված բյուջեի հիման վրա շնորհվող պայմանագրերով՝ համաձայն «Խորհրդատուների ուղեցույցներ» փաստաթղթի 3.1 և 3.5 պարբերություններով ամրագրված դրույթների:

**2. Նվազագույն գնի ընտրություն.** ՀԲ-ի դիտարկմամբ «Խորհրդատուների ուղեցույցներ» փաստաթղթի 3.6 պարբերության պահանջները բավարարող առաջադրանքների կատարմանն ուղղված ծառայությունները կարող են գնվել Նվազագույն գնի ընտրության հիման վրա շնորհվող պայմանագրերով՝ համաձայն «Խորհրդատուների ուղեցույցներ» փաստաթղթի 3.1 և 3.6 պարբերություններով ամրագրված դրույթների:

3. **Խորհրդատուների որակավորումների վրա հիմնված ընտրություն.** Մեկ պայմանագրի արժեքը 100,000 ԱՄՆ դոլարին համարժեք գումարից պակաս գնահատված ծառայությունները կարող են գնվել այն պայմանագրերով, որոնք շնորհվել են «Խորհրդատուների ուղեցույցներ» փաստաթղթի 3.1, 3.7 և 3.8 պարբերություններով ամրագրված դրույթների համաձայն:

4. **Մեկ աղբյուրի ընտրություն.** Ծառայությունները, որոնք ուղղված են առաջադրանքների կատարմանը «Խորհրդատուների ուղեցույցներ» փաստաթղթի 3.10 պարբերությամբ ամրագրված Մեկ աղբյուրի ընտրության պահանջները հավարարող հանգամանքներում, Ընկերակցության նախնական համաձայնությամբ, կարող են գնվել «Խորհրդատուների ուղեցույցներ» փաստաթղթի 3.9-3.13 պարբերությունների դրույթներին համաձայն:

5. **Անհատ խորհրդատուներ.** «Խորհրդատուների ուղեցույցներ» փաստաթղթի 5.1 պարբերության առաջին նախադասությամբ սահմանված պահանջները բավարարող առաջադրանքների կատարմանն ուղղված ծառայությունները կարող են գնվել անհատ խորհրդատուներին շնորհվող պայմանագրերով՝ «Խորհրդատուների ուղեցույցներ» փաստաթղթի 5.2-5.3 պարբերություններով ամրագրված դրույթների համաձայն: «Խորհրդատուների ուղեցույցներ» փաստաթղթի 5.4 պարբերությամբ նախատեսված հանգամանքներում սույն կետում նշված պայմանագրերը անհատ խորհրդատուներին կարող են շնորհվել մեկ աղբյուրի ընտրությամբ մեթոդի հիման վրա:

## **Ծրագրի մոնիթորինգ և գնահատում**

Հիմնադրամը ամբողջ ծավալով ստանձնում է ծրագրի ղեկավարման և արդյունքների մոնիթորինգի հետ կապված պատասխանատվությունը:

Սույն ծրագրի իմաստով պահանջվում է երկու տեսակի մոնիթորինգի անցկացում.

- Տեղադրման և շահագործման մոնիթորինգ՝ ի սպառնալիս, ամենից գատ, նաև այն արդյունքի, որ վառարանների և կաթսաների տեղադրումը շահառուների բնակարաններում կկատարվի պատշաճ որակով: Մոնիթորինգը իրականացնելու է Հիմնադրամը ՀՌ-ԳԱ կողմից տրամադրված առաջընթացի հաշվետվությունների հիման վրա:
- Ծրագրի արդյունքների, հետևանքների և ազդեցությունների մոնիթորինգ, մասնավորապես ԱՀՕԳԳ մոնիթորինգի և արդյունքների, հասանելիության, նպատակայնության, գնողունակության ու կայունության, ծառայությունների որակի և օժանդակության արդյունավետության գնահատման մեխանիզմներով:

Հարցաթերթիկներ են ուղարկվում ընտրված շահառուների, ամենից գատ, նաև ծրագրի արդյունքները, հետևանքները և ազդեցությունները գնահատելու համար՝ ստորև նկարագրված ուղղվածությամբ.

**Արդյունքներ (տարեկան երկու անգամ)՝ ինչպիսիք են.**

- վառարանի կամ կաթսայի համար կապիտալ դրամաշնորհներ ստանալու հայտներ կայացրած անձանց թիվը (անհատական ջեռուցման և տեղային կաթսաների տեղադրմամբ լուծումների տարբերակների համար առանձին),
- վառարանի կամ կաթսայի համար կապիտալ դրամաշնորհներ ստանալու հաստատված հայտերի թիվը (անհատական ջեռուցման և տեղային կաթսաների տեղադրմամբ լուծումների տարբերակների համար առանձին),
- անհատական ընտանիքների միացումների քանակը (անհատական ջեռուցման և տեղային կաթսաների տեղադրմամբ լուծումների տարբերակների համար առանձին),
- 12 ամիս ծառայություններից օգտված անապահով ընտանիքների թիվը,
- վառարանի չափսի, տեղի, արտաքին տեսքի համարժեքությունը,
- դրամատվություն մեկ միացման գծով՝ անհատական ջեռուցման դեպքում (դրամատվության չափը և միջին ծավալը բոլոր միացումների գծով),
- դրամատվություն մեկ միացման գծով՝ տեղային կաթսայով ջեռուցման դեպքում (դրամատվության չափը և միջին ծավալը),
- ծրագրի միջին ծախսը մեկ միացման հաշվարկով այն ընտանիքների համար, որոնք 12 ամիս օգտվել են ծառայությունից,
- նպատակային շահառուների շրջանում դժգոհության դեպքերի քանակը,
- ծրագրի շահառու չհաղիսացող անձանց շրջանում դժգոհության դեպքերի քանակը՝ կապված մոտեցման արդարացի չլինելու կամ այլ մտահոգությունների հետ,
- միացումների սահմանված ժամանակացույցի հետևողական պահպանման մակարդակը:

Այս տեղեկությունները հավաքագրվելու են նաև Հիմնադրամի կողմից՝ Սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների հետ միատեղ (գլխավորապես Աշխատանքի և Սոցիալական Հարցերի նախարարություն միջոցով):

#### **Հետևանքներ (տարեկան մեկ անգամ)**

- ընտանիքների բավարարվածությունը կատարված աշխատանքից,
- օգտագործվող ջեռուցման աղբյուրի փոփոխությունը,
- օգտագործվող սարքավորման փոփոխությունը,
- արդյոք ընտանիքներն իրականում օգտագործում են տեղադրված գազի վառարանները ջեռուցման նպատակով,
- բնակարանների միջին ջերմաստիճանը տեղադրումից առաջ և հետո (տարբերությունը), օրինակ՝ հունվար ամսվա դրությամբ,

- ընտանիքների բավարարվածությունը մատակարարվող ջեռուցումից՝ հաշվի առնելով նախազիծը և ստացված վառարանները,
- ջեռուցվող տարածքը (քառակուսի մետր),
- ջեռուցման այլ տարբերակին տրված նախապատվությունը դրամաշնորհից հետո,
- ընթացիկ վճարումների կատարման հետևողականությունը:

**Ազդեցություններ (ծրագրի ավարտից հետո), օրինակ.**

- առողջական վիճակի բարելավում,
- ջեռուցմանն առնչվող ծախսերի փոփոխություն և գնողունակություն,
- շահառուների խմբում գազի և CO թունավորումների, հրդեհների ու պայթյունների հետևանքով գրանցված մահացության, վնասվածքների ու շենքերին հասցված վնասի դեպքերի քանակը (տարբերությունը),
- ծրագրում գործուն մասնացություն ունեցող համատիրությունների թիվը,
- ոչ միտումնավոր հետևանքներ (դրական և բացասական, սա կարող է առաջադրվել որպես ծավալուն պատասխան պահանջող հարց),
- ընդհանուր շահառուների տոկոսը, որոնց ծառայությունները հասու են դարձվել ի շնորհիվ ԱՀՕ շրջանակներում տրամադրվող կապիտալ դրամաշնորհների («հասու դարձվել» պետք է մեկնաբանվի որպես բնակարանների միացում համակարգին),
- ընդհանուր ազգաբնակչության տոկոսը, որն ընդգրկված է կապիտալ դրամաշնորհային ծրագրում:

Հետևանքների և ազդեցության մոնիթորինգի իրականացումը հանձնարարվում է անկախ ՀԿ-ի: Ծրագիրը մեկնարկելուց 18 ամիս հետո հավաքագրված տեղեկատվության հիման վրա կատարվում է կիսամյակային ուսումնասիրություն՝ ծրագրի արդյունավետությունը գնահատելու և, անհրաժեշտության դեպքում, ծրագրի առանձին մեխանիզմները վերանայելու նպատակով:

***2.6 Դպրոցների ջերմամատակարարման վերականգնում***

ԲԶԾ շրջանակներում Հիմնադրամն՝ ի դեմս պետության, իրականացնում է ներդրումային ծրագրերի ֆինանսավորում՝ դրամաշնորհ տրամադրելու միջոցով, որը նախատեսվում է դպրոցներում գազով աշխատող տեղային ջեռուցման համակարգերի տեղադրման ու վերականգնման, ինչպես նաև դպրոցների շենքերի ջերմամեկուսացման համար (վերջինիս գծով ծախսերը չպետք է գերազանցեն ընդհանուր ներդրումների գումարի 10 տոկոսը):

Այս բաղադրիչի ներքո առաջարկվող ֆինանսավորումից օգտվելու իրավասություն ունեն Երևանից դուրս գտնվող բոլոր այն քաղաքային դպրոցները, որոնցում առկա են բավարար

տեխնիկական և նախագծային պայմաններ, այդ թվում նաև՝ տվյալ տարածքում գազի, ջրի և էլեկտրաէներգիայի մատակարարման հնարավորություն:

Դպրոցներն ընտրվում են՝ հիմք ընդունելով մեկ աշակերտի հաշվով ներդրումների ծախսային արդյունավետության չափանիշը, ինչպես նաև աղքատության, բնակլիմայական և աշխարհագրական պայմաններից բխող առաջնահերթությունը: Առաջադրված չափանիշներին համապատասխանող քաղաքային բոլոր դպրոցներում ներդրումներ կատարելուց հետո, բաղադրիչի մնացորդային միջոցների առկայության դեպքում, դրանք կհատկացվեն Երևան քաղաքի դպրոցներին:

Տվյալ տարվա դպրոցների ցանկը ձևավորելու նպատակով Հիմնադրամի կողմից իրականացվում է դպրոցների նախնական գնահատում՝ ըստ հետևյալ դասակարգման չափանիշների.

- **Դպրոցի շենքի գտնվելու վայրը.** Ըստ այս չափանիշի, առաջնահերթությունը տրվում է աղքատ և/կամ բնակլիմայական խիստ պայմաններ ունեցող աշխարհագրական տարածքներում գտնվող քաղաքներին,
- **Դպրոցի շենքի տեխնիկական վիճակը.** Ըստ այս չափանիշի ընտրվում են վթարայնության 2-րդ աստիճանից ոչ բարձր դպրոցները,
- **Գազամատակարարման համակարգի առկայություն.** Մինչև 150 մ հեռավորության վրա գտնվող գործող գազատարի առկայություն:

Դասակարգման չափանիշները բավարարող դպրոցների ընտրության ժամանակ նախապատվությունը տրվում է մեկ աշակերտին ընկնող առավել փոքր ներդրում պահանջող դպրոցին:

Նախնական գնահատում անցած դպրոցների ցանկը ներկայացվում է Հիմնադրամի ՀԽ-ի հաստատմանը: Հաստատումից հետո դպրոցների և Հիմնադրամի միջև կնքվում է Փոխադարձ պարտավորությունների մասին համաձայնագիր (Հավելված 11), որով սահմանվում են դպրոցի և Հիմնադրամի պարտականությունները:

Այս բաղադրիչի ներքո գնումներին իրականացվում են ՀԲ ուղեցույցների, մասնավորապես «Ուղեցույց. ՎՁՄԲ-ի փոխառությունների և ՄՁԳ-ան վարկերի շրջանակներում գնումները» և «Ուղեցույց. Համաշխարհային բանկի վարկառուների կողմից խորհրդատուների ընտրությունն ու վարձումը» փաստաթղթերի (երկուսն էլ թվագրված 2004թ. մայիսին), ինչպես նաև ՉՎՀ դրույթների համաձայն: Մրցութային պայմանները սահմանվում են ելնելով պայմանագրի գնահատված արժեքից ու տեսակից և նշվում ՀԲ հետ համաձայնեցված և ՀԽ կողմից հաստատված գնումների պլանում:

Հիմնադրամի կողմից մրցութային կարգով ընտրվում են դպրոցների ջեռուցման համակարգերի վերականգնման աշխատանքներ իրականացնող կապալառու կազմակերպությունները: Կապալի պայմանագրի շրջանակներում ապահովվում է նախագծային աշխատանքների իրականացումը, անհրաժեշտ սարքավորումների մատակարարումն ու տեղադրումը, ջեռուցման համակարգի ձեռքբերումը:

Աշխատանքներն ավարտվելուց հետո Հիմնադրամի կողմից դպրոցներին է հանձնվում աշխատանքների արդյունքը, որը ձևակերպվում է համապատասխան փաստաթղթով:

## 2.7 Հաշվետվություններ և մոնիտորինգ<sup>1</sup>

Ներքին հաշվետվությունների և փաստաթղթերի նախապատրաստումը և ներկայացումը Հիմնադրամի կառավարման և ծրագրերի իրականացման գործընթացի անբակտելի մասն է, որի համար պատասխանատու է ՖԳ-ը: Ստորև նշված փաստաթղթերը ներկայացվում են ՀԽ և ՀԲ՝ ըստ հետևյալ ժամանակացույցի.

Հաշվետվություն	Ժամանակացույց	Ուղղված
Հինգ տարվա գործարար ռազմավարություն	Վերանայվում է երեք տարին մեկ	ՀԽ-ին՝ վերանայումից հետո  ՀԲ-ի
Գործարար պլան	Տարեկան, մինչև հոկտեմբերի 31-ը	ՀԽ-ին՝ վերանայումից հետո  ՀԲ-ի
Առողիտի հաշվետվություն	Տարեկան, յուրաքանչյուր տարվա վերջին հաջորդող 6 ամիսների ընթացքում	ՀԽ-ին՝ հաստատումից հետո  ՀԲ-ի
Գործառնական բյուջե	Տարեկան, մինչև հոկտեմբերի 31-ը	ՀԽ-ին՝ վերանայումից հետո  ՀԲ-ին
Իրականացման առաջընթացի հաշվետվություն	Եռամսյակային, յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող 45 օրվա ընթացքում	ՀԲ-ին
Ֆինանսական մոնիտորինգի հաշվետվություններ (ՖՄՀ)	Եռամսյակային, յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող 45 օրվա ընթացքում	ՀԲ-ին և ՀԽ-ին

Յուրաքանչյուր տարվա ավարտին ՖԳ-ը նախապատրաստում է տարեկան հաշվետվություն և վերոնշյալ աղյուսակի համաձայն ներկայացնում համապատասխան մարմիններին սահմանված ժամկետներում: Տարեկան հաշվետվությունը հիմնված է հաշվետու տարվա ֆինանսական և գործառնական փաստացի արդյունքների վրա: Այս փաստաթուղթը ներառում է նաև ֆինանսական վիճակի գնահատումն՝ ըստ *Գործարար պլանի* և *Գործառնական բյուջեի*:

### Գործարար ռազմավարություն

ՖԳ-ը նախապատրաստում է Հիմնադրամի հինգ տարվա գործարար ռազմավարություն/ԳՈ-/: ԳՈ- սահմանում է առաջարկված ռազմավարական մոտեցումը կապված Հիմնադրամի աշխատանքների կազմակերպման և զարգացման հետ՝ հիմքում ունենալով նախապես սահմանված ռազմավարական նպատակներն ու սկզբունքները:

Հիմնադրամի ռազմավարական նպատակներն են.

- նպաստել ՎԷ և ԷԽ ոլորտներում ներդրումների իրականացմանը,
- խթանել Հայաստանի ԷԽ և ՎԷ ոլորտներում շուկաների զարգացմանը,
- նվազեցնել արտանետումների ախտածին ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա

<sup>1</sup> Սույն բաժինը տարածվում է ոչ միայն ջեռուցման ծրագրի, այլև բոլոր ծրագրերի վրա

- ծավալել գործունեություն՝ ուղղված էներգիայի անվտանգ օգտագործմանն ու էներգետիկ համակարգի վստահելիության մակարդակի բարձրացմանը:

ԳՌ-ն ներառում է բյուջեն, որը նախատեսում է Հիմնադրամի առաջին հինգ տարիների գործունեության ծախսածածկումը: Հինգ տարվա բյուջեն նախապատրաստվում է ըստ նախապես սահմանված չափանիշների (իրականացման ցուցանիշների մաս)՝ ձգտելով Հիմնադրամի գործունեության յուրաքանչյուր տարում պահպանել ինքնաֆինանսավորման որոշակի մակարդակ: ԳՌ-ն հաստատավում է Հիմնադրամի ՀԽ-ի կողմից: ԳՌ վերանայվում է երեք տարին մեկ:

## Գործարար պլան

Յուրաքանչյուր տարի ՖՂ-ը նախապատրաստում է Հիմնադրամի գործարար պլանը (ԳՊ):

ԳՊ կազմվում է մինչև յուրաքանչյուր տարվա հոկտեմբերի 31-ը, որտեղ նախատեսվում են Հիմնադրամի հաջորդ տարվա գործողությունները: Այս փաստաթուղթը նկարագրում է Հիմնադրամի գործունեության մակարդակը և ֆինանսական արդյունքները, ինչպես նաև սահմանված նպատակներն ու դրանց հասնելուն ուղղված միջոցառումները: Մասնավորապես, Գործարար պլանը պետք է ներառի.

- Հիմնադրամի գործունեության ոլորտի նկարագրությունը,
- Շահագրգիռ կողմերի, ներառյալ ծրագրի շահառուների, համաֆինանսավորող ընկերությունների, կառավարական և այլ հաստատությունների վերլուծությունը,
- Նախատեսված ԷԽ և ՎԷ նոր ծրագրերի քանակը,
- Նախատեսված ծախսումների գումարը,
- Նախատեսված տեխնիկական աջակցության նախաձեռնությունների մանրամասները,
- Գործառնական բյուջեն:

Յուրաքանչյուր տարի ՖՂ-ը նախապատրաստում է Հիմնադրամի գործառնական բյուջեն/ԳԲ/: ԳԲ-ն ներառում է հաջորդ տարվա եկամուտների և ծախսերի բյուջետային մակարդակը: Մասնավորապես, ԳԲ սահմանում է.

- եկամուտների բյուջետային մակարդակները,
- տեխնիկական աջակցության ծախսերի բյուջետային մակարդակները,
- Հիմնադրամի բյուջետային գործառնական ծախսերը,
- Բյուջետային վարձատրությունը:

ՖՂ պետք է քննարկի վերոնշյալ թվերը ծրագրի համակարգողի և Հիմնադրամի տնօրենի հետ: ԳԲ-ն պատրաստ լինելուն պես պետք է ներկայացվի ՀԽ-ի հաստատմանը: Ցանկացած փոփոխություն և լրացում, որը ենթադրվում է ՀԽ-ի կողմից, պետք է ներառվի ԳԲ-ի վերջնական օրինակում: Հետևաբար, ԳԲ-ը կներկայացվի համապատասխան կառավարման մարմիններին մյուս տարվա պետական բյուջեում ներառելու նպատակով: Ցանկացած անհամապատասխանություն ԳԲ-ի ընդհանուրի և համապատասխան ծրագրի ընդհանուրի միջև, որը ներառվում է համապատասխան տարվա ՀՀ պետական բյուջեի մասին օրենքում, կզեկուցվի ՀԽ-ին՝ փոփոխությունների կամ ՀՀ կառավարությունից լրացուցիչ գումար հայցելու հետագա հրահանգներ ստանալու նպատակով: Լրացուցիչ գումար հայցելու առաջարկությունը ստանալուն պես Հիմնադրամը կնախապատրաստի հայտ ներկայացնելու համապատասխան փաստաթղթերը և կներկայացնի ՀՀ կառավարությանը ըստ ՀՀ օրենսդրության: Ընթացիկ տարվա բյուջեի մոնիտորինգը իրականացվում է ամսական կտրվածքով: Ծրագրի բաղադրիչների

ընթացիկ հաշվետվությունը ներկայացվում է Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարությանը: Էական շեղումների մասին զեկուցվում է ՀՏ-ին, սահմանվում են շեղումների ուղղման քայլեր, որոնց հետագայում պետք է հետևել:

## Իրականացման առաջընթացի և մոնիտորինգի հաշվետվություններ

Իրականացման առաջընթացի հաշվետվությունը (ԻԱՀ)՝ նախապես սահմանված գործունեության ցուցանիշների հիման վրա ՀՏ կողմից Հիմնադրամի գործունեության մոնիտորինգի և գնահատման գործիքն է: ԻԱՀ-ի տվյալները վերցվում են ԷԽ և ՎԷ համակարգողների կողմից նախապատրաստվող անհատական ծրագրերի մոնիտորինգի հաշվետվություններից, որոնք հանդիսանում են անհատական ծրագրի մոնիտորինգի գործընթացի բաղկացուցիչը:

Ձեռուցման ծրագրի մոնիտորինգի գործընթացը կազմակերպվում է հետևյալ ցուցանիշները հաշվարկմամբ և արտացոլմամբ ԻԱՀ-ում.

### Տեխնիկական ցուցանիշներ

- բազմաբնակարան շենքերի բնակարանների տոկոսը, որոնք ունեն անվտանգ գազի կամ տաք ջրի վրա հիմնված ջեռուցում.
- Դպրոցների ընդհանուր քանակը, որոնց դասասենյականերում ջերմաստիճանը 15C-ից բարձր է և որտեղ անբավարար ջեռուցման հետևանքով պարապուրդի օրեր չկան,
- 10,000 գազի միացումների դեպքում CO<sub>2</sub> թունավորման, հրդեհների և պայթյունների դեպքերի քանակը,
- անապահով ընտանքիների քանակը, որոնք ստացել են կապիտալ դրամաշնորհներ գազի և տաք ջրի վրա հիմնված ջեռուցման ծառայությունների համար,
- բարելավված ջեռուցման ծառայություններից օգտվող դպրոցների քանակը,
- մեկ ընդհանուր ցանցային ռեժիմով աշխատող համակարգում վերականգնվող էներգետիկայի տեղակայված հզորությունները (մՎտ),
- վերականգնվող էներգետիկայի օբյեկտների արտադրանքի հաշվին ընդհանուր էներգաարտադրության ծավալների ավելացումը (գՎտ ժամ),
- ածխածնի երկօքսիդի արտանետումների նվազեցումը (տոննա CO<sub>2</sub>):

### Բնապահպանական ցուցանիշներ

- Ընդհանուր ծրագրի տևողության համար հաշվարկված էներգախնայողություն,
- Ընդհանուր ծրագրի տևողության համար հաշվարկված ջերմոցային գազերի արտանետման նվազեցում:

### Ֆինանսական ցուցանիշներ

- Հիմնադրամի և/կամ ՄՖՀ-ի կողմից ֆինանսավորված և շահառուների կողմից համաֆինանսավորված ԷԽ և ՎԷ ծրագրերի ընդհանուր գումարը ԱՄՆ դոլարով,
- Հիմնադրամի կողմից ներգրավված միջոցների տոկոսը /փաստացի ծախսումների և ներգրավված միջոցների հիման վրա/
- ինքնաֆինանսավորման հարաբերակցությունը,
- Ժամկետանց տոկոսը,

- վճարումների գրանցումը,
- մարումները:

### **Ինստիտուցիոնալ ցուցանիշներ**

- ԷԽ և ՎԷ ոլորտներում գործունեություն իրականացնող մասնավոր կազմակերպությունների քանակը,
- ԷԽ և ՎԷ ծրագրերի շրջանակներում իրականացվող ենթավարկավորման մեջ ներգրավված ՖՄ-ների քանակը:

### **Ֆինանսական մոնիտորինգի հաշվետվություններ /ՖՄՀ/**

ՖՄՀ-ը՝ ՀԲ-ի և ՀԽ-ի կողմից Հիմնադրամի ֆինանսական գործունեության, առաջընթացի և կարգավիճակի մոնիտորինգի և գնահատման գործիքն է: ՖՄՀ-ի մանրամասն բովանդակությունը և ձևը սահմանված է սույն ԳՁ-ին կից «Ֆինանսական կառավարման ձեռնարկ» -ում (Հավելված 14):

## **2.8 Բնապահպանական ուսումնասիրություն և գնահատումներ**

Հիմնադրամի և/կամ վերջինիս կողմից ֆինանսավորված ՄՖՀ-ների կողմից իրականացման համար առաջարկվող ծրագրերը ենթակա են բնապահպանական ուսումնասիրության՝ ըստ ԲԿՊ, որը ներակայացված է սույն ԳՁ-ին կից Հավելված 12-ում: Հիմնադրամի կողմից ֆինանսավորվող բոլոր ծրագրերը իրականացվում են ՀՀ բնապահպանական ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի համաձայն: Հիմնադրամի կողմից ֆինանսավորման ենթակա ծրագրերը պետք է լինեն բնապահպանական առումով արդյունավետ, նպաստեն էներգիայի սպառման և դրա հետևանքով առաջացող արտանետումների նվազեցմանը:

Ներկայացված ծրագրերը պետք է ուսումնասիրվեն, որի ընթացքում պետք է գնահատվեն պոտենցիալ բնապահպանական ռիսկերը, գործառույթների հետ կապված ազդեցությունները և այն բոլոր հնարավորությունները, որոնք կապահովեն ծրագրերի համապատասխանությունը դրոնրների և ՀՀ օրենսդրությամբ ամրագրված բնապահպանական պահանջներին:

### **Ծրագրի դասակարգումը**

ԲԶԾ-ին ՀԲ-ի կողմից դասակարգվել է որպես Բնապահպանական «ֆինանսական միջնորդ» (ՖՄ): ՖՄ դասակարգումը կրող ծրագրերի դեպքում՝ ծրագրի իրագործման ընթացքում առանձնացվում են հատուկ ենթածրագրեր, որոնցից ծագող բնապահպանական կարգավորման պատասխանատվությունը կրում է ՖՄ-ը: Հիմնադրամի կողմից ֆինանսավորվող ծրագրերի մասով բնապահպանական կարգավորման պատասխանատվությունը կրում է որպես ՖՄ հանդես եկող ՄՖՀ-ն:

Բնապահպանական ուսումնասիրության և գնահատման ընթացակարգերը վերաբերվում են Հիմնադրամի կողմից ֆինանսավորվող բոլոր ենթածրագրերին՝ ծրագրի ամբողջ ժամանակահատվածում: Որպես անհատական ենթածրագրերի գնահատում Հիմնադրամը կիրառում է ԲԿՊ-ով սահմանված չափանիշները: Այդ չափանիշների համաձայն ծրագրերը պետք է դասակարգվեն ըստ հետևյալ երեք կատեգորիաների.

- **Կատեգորիա «Ա»** - ծրագրեր, որոնք կարող են շրջակա միջավայրի վրա թողնել զգալի կամ անկանխարգելելի վնասակար ազդեցություն: Այս կատեգորիայի ծրագրի համար դիմորդը պետք է նախապատրաստի Բնապահպանական գնահատում՝ ներառյալ

բնապահպանական ազդեցության գնահատում (ԲԱԳ) և Բնապահպանական կառավարման պլան (ԲԿՊ):

- **Կատեգորիա «Բ»** - ծրագրեր, որոնք կարող են ունենալ չափավոր բնապահպանական ազդեցություն, որի նկատմամբ կարելի է կիրառել մեղմացման միջոցառումներ: Սովորաբար այս դեպքում դիմորդին ներկայացվող միակ պահանջը պարզեցված ԲԿՊ-ի կազմումն է:
- **Կատեգորիա «Գ»** - ծրագրեր, որոնք չունեն կամ կարող են ունենալ միայն աննշան ուղղակի կամ անուղղակի բնապահպանական ազդեցություն: Դիմորդին ԲԱԳ-ի պահանջ չի առաջադրվում:

Ծրագրերի բնապահպանական գնահատումը պետք է իրականացվի հետևյալ պահանջների պահպանմամբ.

- յուրաքանչյուր ենթածրագրի առաջարկ ընդգրկում է լրացված բնապահպանական հարցաշարը (Օրինակելի ձևը կցված է ԲԿՊ-ին, Հավելված 12) և բնապահպանական թույլտվության համար ՀՀ օրենսդրությամբ պահանջվող փաստաթղթերը,
- ծրագրի բնապահպանական գնահատումները պետք է համաձայնեցվեն պետական լիազոր մարմնի հետ՝ ՀՀ բնապահպանական օրենսդրության և ԲԱԳ պահանջների համաձայն: ԲԱԳ բովանդակությունը և ձևաչափը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ:
- Դիմորդը պետք է ներկայացնի հավաստում առ այն, որ ինքն, ըստ պատշաճի, ստացել է համապատասխան գործառնական կամ շինարարական թույլտվությունները և բնապահպանական պարտավորություններ և տուժանքներ չունի: Դիմորդի կողմից համապատասխան թույլտվությունները չունենալու դեպքում, նա պետք է ներկայացնի հավաստում, որ դիմել է թույլտվությունները ստանալու համար, և տեղեկատվություն ընթացքի վերաբերյալ:
- ՄՖՀ-ն կամ Հիմնադրամն ըստ անհրաժեշտության կարող են պահանջել լրացուցիչ տեղեկություններ: ՄՖՀ-ն կամ Հիմնադրամն իրականացնում են ծրագրի բնապահպանական ռիսկերի և դրանց հնարավոր ազդեցության գնահատում, որից հետո ծրագիրը դասակարգվում է ըստ համապատասխան կատեգորիայի:
- Ենթավարկի պայմանագրի գործողության ընթացքում ՄՖՀ-ի կամ Հիմնադրամի կողմից պարբերաբար իրականացվում է հաճախորդի բնապահպանական վիճակի մոնիտորինգ և գնահատում:

Հիմնադրամը կունենա բնապահպանական ոլորտում մասնագիտացած մեկ տեխնիկական մասնագետ, որը կտրամադրի մասնագիտական աջակցություն ԷԽ և ՎԷ բոլոր ծրագրերի համակարգողներին և ՀՏ-ին՝ Հիմնադրամի կողմից ֆինանսավորման ենթակա ծրագրերի բնապահպանական կառավարման հարցերում:

ՀՏ-ը ՀԽ-ին պետք է ներկայացնի պարբերական հաշվետվություն բնապահպանական ընթացակարգերի իրականացման և վարկային պորտֆելի բնապահպանական վիճակի վերաբերյալ, որոնք ՀԽ-ի կողմից հաստատվելուց հետո ներկայացվում են ՀԲ-ին, բայց ոչ ուշ, քան յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո 90 օրվա ընթացքում: Բնապահպանական ընթացակարգերի վերահսկողության և իրականացման հաշվետվությունները ներառում են .

- Հիմնադրամի կողմից կատարված ուսումնասիրության և վերանայման ընթացակարգերի արդյունքները,
- այն ներդրումների նկարագրությունը, որոնք տվյալ պահին չեն համապատասխանում կարգավորիչ միջոցառումների պլանով նախատեսվող բնապահպանական և սոցիալական պահանջներին, և այն միջոցառումների նկարագիրը, որոնք Հիմնադրամը ձեռնարկել է կամ նախատեսում է ձեռնարկել իրավիճակի կարգավորման նպատակով:

Հիմնադրամը ՔՁԾ շրջանակներում չպետք է ֆինանսավորի այն ծրագրերը, որոնք պահանջում են մանրամասն, խոր մասնագիտական բնապահպանական ուսումնասիրություն և մեղմացման միջոցառումների մշակում, ուստի Հիմնադրամը նախապատվությունը պետք է տա այն ծրագրերին, որոնց իրականացումը կապված է բնապահպանական համեմատաբար ավելի չափավոր պահանջների հետ:

### 3 ՀԲ ֆինանսավորմամբ Վերականգնվող Էներգետիկայի ծրագիր

2006թ մարտի 29-ին, Համաշխարհային բանկը հաստատեց Հայաստանում իրականացվելիք Վերականգնվող Էներգետիկայի ծրագիրը (ՎԷԾ): Ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարը կազմում է 8 մլն. ԱՄՆ դոլար, որը ներառում է 5 մլն. ԱՄՆ դոլարի չափով վարկ Սիջազգային Ջարգացման Ընկերակցությունից, 3 մլն. ԱՄՆ դոլար գումարով դրամաշնորհ՝ «Գլոբալ Բնապահպանական Սիջոցներ» հավատարմագրային հիմնադրամից (ԳԲՄ/ՎԶՄԲ): Վարկային և դրամաշնորհի համապատասխան համաձայնագրերը ստորագրվել են 2006թ ապրիլի 7-ին:

Այս ծրագիրը կառավարությանը կօգնի բարձրացնել մասնավոր սեփականություն հանդիսացող և մասնավորի կողմից շահագործվող էներգաարտադրության դերը, որն օգտագործում է վերականգնվող էներգիա, ինչպես նաև նվազեցնել ջերմոցային գազերի (ածխածնի երկօքսիդի) արտանետումների ծավալը՝ վերականգնվող էներգետիկայի զարգացմանը խոչընդոտող գործոնների վերացման միջոցով:

Թեև, Հայաստանում գործող ընդհանուր օրենսդրական և կարգավորման դաշտը բարենպաստ է վերականգնվող էներգետիկայի զարգացման համար, սակայն վերականգնվող էներգետիկայի ոլորտում մասնավոր ներդրումներին մեծապես խոչընդոտում են մի շարք օրենսդրական, կարգավորիչ, տեղեկատվական, ֆինանսական և կառուցվածքային բնույթի գործոններ: ՎԷԾ իրագործումը կաջակցի վերականգնվող էներգետիկայի ոլորտում ծառայած խոչընդոտների վերացմանն ու պարտքի ֆինանսավորմանը, ինչպես նաև վերականգնվող էներգետիկայի մի շարք ծրագրերին տեխնիկական, իրավական, կառավարման և գործարար բնույթի օժանդակության ցուցաբերմանը:

ԳԲՄ-ի մասնակցությունը կնպաստի որոշ խոչընդոտների վերացմանը և ծրագրի ավարտից հետո կայուն ենթակառուցվածքի ձևավորմանը: Ծրագրի շրջանակներում ԳԲՄ-ի դերը կլինի վերականգնվող էներգետիկայի զարգացմանը խոչընդոտող գործոնների վերացումը՝ առևտրային առումով հաստատուն միջոցառումների իրականացմամբ: Առանց ԳԲՄ-ի մասնակցության՝ մասնավոր ներդրողները թերևս ի վիճակի չեն լինի մշակելու և ֆինանսավորելու ծրագրեր, որոնք շահավետ կլինեն ոչ միայն ծրագրի շրջանակներում փոխգործակցող կողմերի, այլև ամբողջ երկրի համար: Բացի այդ, առանց ԳԲՄ-ի օժանդակության սակավաթիվ կլինեին մասնավոր ներդրողների, ֆինանսական հաստատությունների, քաղաքականություն մշակողների և շահագրգիռ այլ կողմերի

իրազեկման հնարավորությունները վերականգնվող էներգետիկային առնչվող հարցերում: ԳԲՄ-ի օժանդակությունը կապահովի վերականգնվող էներգակիրների կայուն ֆինանսավորում, ինչը կհանգեցնի երկարաժամկետ ապագայում մթնոլորտ արտանետվող ջերմոցային գազերի ծավալի կրճատմանը:

Սույն բաժնով սահմանվում են ՀԲ ֆինանսավորմամբ ՎԷԾ նկատմամբ կիրառելի հիմնադրույթներն ու ընթացակարգերը:

### ***3.1 Կազմակերպչական կառուցվածքը***


ՁՎՀ վարկային միջոցները, որոնք Հիմնադրամի կողմից ուղղվելու են ենթափոխառությունների տրամադրմանը, Հայաստանի Հանրապետության կողմից Հիմնադրամին են տրամադրվում Գործակալական համաձայնագրի հիման վրա (Հավելված 14), իսկ Ծրագրի դրամաշնորհային միջոցները տրամադրվում են Հիմնադրամին որպես դրամաշնորհ ՀՀ և Հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհ տրամադրման համաձայնագրով (Հավելված 15):

Որպես ներդրումային ֆինանսավորում ՄՁԸ-ն հատկացրել է՝ 5 մլն. ԱՄՆ դոլար, իսկ «Կասկադ Կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի (այսուհետ՝ «ԿԿ»), հիմնադիր «Քաֆեսճեան ընտանիքի հիմնադրամը» կատարել է համաֆինանսավորում՝ 3 մլն ԱՄՆ դոլարի չափով՝ ԿԿ-ի կանոնադրական կապիտալի համալրման եղանակով: Որպես ՎԷԾ համաֆինանսավորում ԿԿ-ի կողմից ներգրավվել է 7 մլն. ԱՄՆ դոլար Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկի (ՎՁԵԲ) միջոցներից՝ վերջինիս հետ 2006 թվականի մայիսի 23-ին կնքված Շրջանակային համաձայնագրի համաձայն:

ԿԿ-ի և «Կասկադ Բանկ» ՓԲԸ-ի միջև 9.02.2009թ կնքվել է «Կասկադ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի «Կասկադ Բանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ Կասկադ Բանկ) միանալու վերաբերյալ պայմանագիրը, որը հաստատվել է երկու ընկերությունների բաժնետերերի 2009թ փետրվարի 9-ին կայացած արտահերթ ընդհանուր ժողովում: ՀՀ օրենսդրության համաձայն ԿԿ-ի վերակազմակերպման արդյունքում Կասկադ Բանկը հանդիսանում է ԿԿ-ի իրավահաջորդը և նրան են անցնում ՎԷԾ շրջանակներում ԿԿ-ի կողմից կնքված պայմանագրերով սահմանված բոլոր իրավունքներն ու պարտականությունները՝ ԿԿ-ի վերակազմակերպման գործընթացի պետական գրանցման պահի դրությամբ առկա ամբողջ ծավալով:

ՎԷԾ շրջանակներում Հիմնադրամը տրամադրելու է ՏԱ և այլ աջակցություն ծրագրի հնարավոր ներդրողներին, ինչպես նաև ենթափոխառություններ տրամադրող ՄՖՀ-ների մասնագետներին:

Ստորև ներկայացվում է ՎԷԾ կառուցվածքը.



### 3.2 Ծրագրի նպատակը և բաղադրիչները

ՎԷԾ նպատակն է մեծացնել մասնավոր սեփականություն հանդիսացող և մասնավոր կողմից շահագործվող էլեկտրաէներգիայի արտադրության դերը, որն օգտագործում է վերականգնվող էներգիա:

Ծրագիրն իրականացվելու է հետևյալ բաղադրիչների միջոցով.

Ա) Վերականգնվող էներգետիկայի ոլորտի զարգացում

Բ) Վերականգնվող էներգետիկայի ենթածրագրերում ներդրումների ֆինանսավորում:

### **Ա) Վերականգնվող էներգետիկայի ոլորտի զարգացում**

Այս բաղադրիչի շրջանակներում տրամադրվում է տեխնիկական աջակցություն ծրագրում ընդգրկված ներդրողներին՝ խոչընդոտների հաղթահարման և ՎԷ ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացման համար: Այն ներառում է հետևյալ ոլորտները.

#### **1) Օրենսդրական և կարգավորիչ դաշտի բարելավում և պետական գերատեսչությունների կարողությունների հզորացում, հետևյալ ուղղություններով.**

ա) վերականգնվող էներգետիկայի հարցերին առնչվող քաղաքականության պլանավորում,

բ) վերականգնվող էներգետիկայի ծրագրերի նախագծում, գնահատում, լիցենզավորում և մոնիտորինգ՝ ապրանքների, ծառայությունների և վերապատրաստման տրամադրման միջոցով:

Գործող օրենսդրական և կանոնակարգման դաշտի բարելավմանն ուղղված գործառնությունների թվին են պատկանում.

- Վերականգնվող էներգետիկայի զարգացումը խթանող ենթաօրենսդրական ակտերի և կանոնակարգերի մշակումը,
- Գործող օրենսդրական և կարգավորման դաշտի վերանայումը՝ միջոցների (հողի իրավունք, ջրի թույլատվություն և այլ արտոնագրեր) թափանցիկ ու արդարացի բաշխումն ապահովելու համար բաշխման ընթացակարգերի բարեփոխման ու պարզեցման նպատակով,
- Էլեկտրաէներգիայի արտադրության նպատակով խմելու և ոռոգման ջրատարների ու ջրանցքների ապահով, արդյունավետ, տեխնիկապես ու տնտեսապես շահավետ օգտագործումն ապահովող կանոնակարգերի, նորմերի ու ընթացակարգերի սահմանումը,
- «Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության մասին» ՀՀ օրենքի կիրարկման նպատակով անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտերի մշակումը,
- Վերականգնվող էներգետիկայի օբյեկտների, մասնավորապես՝ ջրի արհեստական հոսքի վրա արդեն գործող և նոր կառուցվող փոքր ՀԷԿ-երի արտադրանքի համար սակագների սահմանման մեխանիզմների բարելավումը՝ առկա անորոշությունները վերացնելու և ծրագրերի ֆինանսավորման նպատակով միջոցներ ներգրավելու նպատակով,

- Էներգահամակարգի օպերատորի կողմից վերականգնվող էներգետիկայի փոքր օբյեկտների արտադրանքի ընդունման կանոնների վերանայումը:

Պետական գերատեսչությունների կարողությունների հզորացմանն ուղղված գործառնությունների շրջանակներում կտրամադրվեն ուսուցման և SU-ի այլ ծառայություններ, ինչպես նաև որոշակի ծավալով նյութատեխնիկական օժանդակություն, մասնավորապես.

- ՀՀ էներգետիկայի նախարարությանը՝ վերականգնվող էներգետիկայի ոլորտում քաղաքականությունների պլանավորման և գոյություն ունեցող նոր տեխնոլոգիաների վերաբերյալ,
- ՀՀ Հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովին (ՀԾԿՀ)՝ սակագների հաշվարկման, արտոնագրման, վերականգնվող էներգետիկայի ծրագրերի տեխնիկական ու ֆինանսական նպատակահարմարության գնահատման ժամանակակից մեթոդների վերաբերյալ,
- ՀՀ էներգետիկայի նախարարությանը, ՀՀ բնապահպանության նախարարության կազմում գործող Ջրային ռեսուրսների կառավարման խորհրդին և Օդերևութաբանական ծառայությանը՝ վերականգնվող էներգետիկ ռեսուրսների բնորոշման, գնահատման և մոնիտորինգի միջոցների ու մեթոդների վերաբերյալ:

Բացի այդ, ՀԾԿՀ-ին և ԷՆ-ին կտրամադրվի որոշակի քանակությամբ համակարգչային տեխնիկա (ապարատային և ծրագրային միջոցներ):

## 2) Վերականգնվող էներգետիկայի ենթածրագրերում ներդրումների խթանում, որը ենթադրում է.

- աջակցություն տեղանքային ուսումնասիրություններին և վերականգնվող էներգետիկ ռեսուրսների, այդ թվում՝ գետերի, ջրավազանների, խմելու և ոռոգման ջրատարների ու ջրանցքների պոտենցիալի մոնիտորինգ՝ ֆինանսապես շահավետ ծրագրերի իրականացման հնարավոր վայրերը տեղորոշելու, փոքր հիդրոէլեկտրակայանների միջոցով էներգետիկայի զարգացման գոյություն ունեցող սխեման թարմացնելու համար,
- մատչելի վերականգնվող էներգետիկ ռեսուրսների համապարփակ տվյալների բազայի և դրա հետ կապված ազատ հասանելի Աշխարհագրական տեղեկատվական համակարգի (ԱՏՀ) մշակում, որոնք կպարունակեն համակողմանի տեղեկատվություն վերականգնվող էներգետիկ առկա ռեսուրսների (ջրի, քամու, արևի, կենսաբանական հումքի, գեոթերմալ), քամու, ջրի և արևի էներգետիկ ռեսուրսների շուրջտարյա մոնիտորինգի վերաբերյալ տվյալներ, ջրի էներգիայի պոտենցիալ կիրառության արդյունավետ սխեմաներ, տրանսպորտային, էներգետիկ և այլ ենթակառուցվածքների, ինչպես նաև սոցիալ-տնտեսական իրավիճակի վերաբերյալ տվյալներ: Այս տեղեկատվությունը տեղական և օտարերկրյա ներդրողներին հնարավորություն կընձեռնի հեշտությամբ բնորոշելու ներդրումային հնարավորությունները, կատարելու ֆինանսական ու տնտեսական նպատակահարմարության ուսումնասիրություններ և հետևելու վերականգնվող էներգետիկայի ոլորտում պոտենցիալ ծրագրերի զարգացմանը,

- ՀՎԷԷՀ-ի ինտերնետային կայքի և էջի ստեղծում, որոնց միջոցով հնարավոր կլինի օգտվել վերականգնվող էներգետիկ ռեսուրսների համապարփակ տվյալների բազայից ու ԱՏՀ-ից, և որտեղ կտեղակայվեն տվյալներ Հայաստանի էներգետիկ ոլորտի, դրա հիմնական ցուցանիշների ու կառուցվածքի, ոլորտը կարգավորող օրենսդրության, կարգերի ու կանոնակարգերի, անհրաժեշտ թույլատվությունների, արտոնագրերի և այլ փաստաթղթերի ձեռքբերման ընթացակարգերի վերաբերյալ:
- ՏՄ-ի տրամադրում պոտենցիալ ներդրողներին ծրագրերի նախապատրաստման, այդ թվում՝ գործարար ծրագրերի կազմման, ֆինանսական ու տնտեսական նպատակահարմարության ուսումնասիրությունների իրականացման և ծրագրերի նախագծերի մշակման նպատակով: Սա թույլ կտա նվազեցնել վերականգնվող էներգետիկայի ծրագրերի ծախսերը և դրանց վերագրվող ռիսկերը՝ հնարավորություն ընձեռնելով իրականացնել ծրագրեր, որոնց ֆինանսական ու տնտեսական շահավետությունը այլ հավասար պայմաններում սահմանային մեծություն է կազմում: Բացի այդ, ՏՄ-ն կոչված է զարգացնելու տեղական խորհրդատվական ընկերությունների կարողությունները: ՀՎԷԷՀ-ը բավարար փորձ կունենա պարզ, տեղերում լայնածավալ աշխատանքներ չպահանջող ծրագրերի նախապատրաստմանն օժանդակելու համար: Ավելի բարդ ՏՄ-ի գծով օժանդակությունը կարող է տրամադրվել համապատասխանեցման կամ պայմանական դրամաշնորհների տեսքով՝ ծրագրերի նախաձեռնողների կողմից որոշակի գումարով համաֆինանսավորում կատարելու պայմանով:

ՏՄ կառաջարկվի մասնավոր հատվածի պոտենցիալ ներդրողներին, որոնք ներգրավված են նոր հողմակայանների կամ փոքր հիդրոկայանների կառուցման և առկա կայանների վերականգնման գործունեության մեջ:

ՏՄ տրամադրվում է հետևյալ ընթացակարգով.

- Ծրագիր մշակողը վարկ ստանալու նպատակով ներկայանում է ԿԿ-ին.
- Ծրագիր մշակողը ընդհանուր գծերով ներկայացնում է ծրագիրը, ինչի հիման վրա ԿԿ-ն գնահատում է վերջինիս շահագրգռվածության մակարդակը.

ա) գուզահեռաբար, ծրագիր մշակողը միևնույն փաթեթը կարող է ներկայացնել նաև Հիմնադրամին. Հիմնադրամի մասնագետները կարող են անկախ և չպարտավորեցնող կերպով առաջարկել ներկայացված ծրագրի գնահատում ԿԿ-ին և ծրագիր մշակողին:

- Եթե Կասկադ Բանկը բավարար չափով հետաքրքրություն է դրսևորում ծրագրի նկատմամբ, ապա կողմերի միջև ստորագրվում է գաղտնիության պահպանման մասին համաձայնագիր. Կասկադ Բանկը կարող է պահանջել և ստանալ առավել հանգմանալից տեղեկատվություն:
- Սահմանված չափանիշներին ծրագրի համապատասխանության գնահատման հիման վրա՝ Կասկադ Բանկը որոշում է կայացնում.  
ա) իրականացնել վարկավորում, եթե նախապատրաստված ծրագիրը գնահատվել է բավարար և իրագործելի,

- բ) հրաժարվել վարկավորումից, եթե ծրագիրն ակնհայտորոն անկեսունակ է և համահունչ չէ հիմնադրամի նպատակներին,
  - գ) այլ պարագայում Կասկադ Բանկը կարող է որոշել, որ անհրաժեշտ է առավել հանգամանալից վերլուծություն և/կամ հավելյալ տեղեկատվության տրամադրում, և կարող է այդօրինակ տեղեկատվություն պահանջել ծրագիր ներկայացնողից:
- Ծրագիր մշակողը որոշում է, թե արդյոք ինքը կարող է տրամադրել պահանջվող տեղեկատվությունը, թե վերջինիս անհրաժեշտ է ՀՎԷԷՀ աջակցությունը. վերջինիս դեպքում ծրագիր մշակողը դիմում է Հիմնադրամ՝ աջակցություն ստանալու նպատակով:
  - Հիմնադրամը որոշում է, թե արդյոք տվյալ անձն իրավամբ աջակցության կարիք ունի, և ինչպիսի աջակցություն է վերջինիս հարկավոր:
  - Յուրաքերվելիք աջակցության մասով պատրաստվում է նախահաշիվ (մեկ ծրագրի արժեքը չի կարող գերազանցել 20 հազար ԱՄՆ դոլարը). Հիմնադրամը ծրագիր ներկայացնողի հետ համաձայնություն է ձեռք բերում ծրագրի ծավալների, ժամանակացույցի, պարտականությունների և համաֆինանսավորման շուրջ (համաֆինանսավորման նվազագույն չափը կազմում է 20%):
  - Հիմնադրամն իր խորհրդատուներից մեկի ներգրավմամբ իրականացնում է տեխնիկա-տնտեսական և ֆինանսական ամփոփիչ գնահատումը:
  - Եթե ծրագիրը համապատասխանում է կենսունակության գնահատման սահմանված չափանիշներին, ապա որոշում է կայացվում գործարար ծրագրի մշակման մասին, ինչը նախընտրելի է որպեսզի կատարի ծրագիր ներկայացնողը: Որպես այլընտրանք, գործարար ծրագիրը կարող է պատրաստվել Հիմնադրամի խորհրդատուի կողմից՝ ծրագիր մշակողի հետ սերտ համագործակցության արդյունքում:
  - Կասկադ Բանկ-ին խորհրդատվություն է տրամադրվում ծրագրի կենսունակությունը գնահատելու շրջանակներում՝ նախքան գործարար ծրագրի մշակման կազմակերպումը:
  - Ծրագրի տեխնիկա-տնտեսական և ֆինանսական, ինչպես նաև գործարար ծրագրի գնահատման արդյունքների հիման վրա Կասկադ Բանկը որոշում է կայացնում ծրագիրը ֆինանսավորելու մասին:

**3) Երկարաժամկետ ռազմավարությունների նախապատրաստում և նախաձեռնություններին աջակցություն, որն իրականացվում է ՎԷ-ի ոլորտի զարգացման հետագա ֆինանսավորման մոբիլիզացման համար:**

Աջակցությունը կտրամադրվի Հիմնադրամին, անհրաժեշտության դեպքում նաև շահառուներին ֆինանսավորող կազմակերպությանը, միջոցների համալրման և լրացուցիչ ֆինանսավորում ներգրավելու, ինչպես նաև միջոցները համալրելու նպատակով երկարաժամկետ ռազմավարության մշակման համար հետևյալ գործառնությունների միջոցով.

- Տեղերում ուսումնասիրությունների և խորհրդատվությունների կազմակերպում.

ա) պոտենցիալ ներդրողների համար՝ վերականգնվող տեխնոլոգիաների առանձնահատկությունների (հատուկ ուշադրություն դարձնելով ժամանակակից ու արդյունավետ տեխնոլոգիաներին), վերականգնվող էներգետիկայի ոլորտին առնչվող տեխնիկական խնդիրների, ֆինանսավորման մեխանիզմների, գործարար ծրագրերի կազմման, ֆինանսական միջոցների կեստրոնացման, ինչպես նաև նմանատիպ ծրագրերի մշակման մեթոդների վերաբերյալ,

բ) ՄՖՀ-ի վարկային մասնագետների համար՝ վերականգնվող էներգետիկայի ծրագրերի, շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության գնահատման, ռիսկերի գնահատման պատշաճ մեթոդաբանությունների (օրինակ՝ վարկային պորտֆելի կառավարման համակարգչային ծրագրի, վարկանիշավորման համակարգերի, և այլն) վերաբերյալ,

գ) Նախագծային և խորհրդատվական ընկերությունների համար՝ վերականգնվող էներգետիկայի օբյեկտների տեխնիկական բնութագրերի, ինժեներական նախագծման, գործարար ծրագրերի կազմման, տեխնիկական և ֆինանսական աուդիտի անցկացման համար կիրառվող գործիքների վերաբերյալ:

Տարբեր ֆինանսական գործիքների մշակում և փորձնական կիրառում՝ ենթավարկառուներին փոխառությունների տրամադրումն արագացնելու և ծրագրի խթանիչ ազդեցությունն ուժեղացնելու նպատակով: Այս գործիքների շարքում կարող են լինել ռիսկերի բաշխման գործառնությունները, ակտիվային ապահովվածությամբ արժեթղթերը (ԱԱԱ) և այլն: Բացի այդ, կկատարվի արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրության ուսումնասիրություն և, անհրաժեշտության դեպքում, դրանում կկատարվեն համապատասխան փոփոխություններ՝ հնարավոր խոչընդոտները վերացնելու և ներդրողների համար բավարար պայմաններ ստեղծելու նպատակով: Հաջողություն գտնելու դեպքում, ԱԱԱ\_հնարավորություն կընձեռնեն վերականգնվող էներգետիկայի ենթավարկերը խմբավորված տեսքով վաճառել որևէ հավատարմագրային ընկերության, որը կարող է ստեղծվել ՀՎԷԷՀ-ի կազմում կամ որպես ՀՎԷԷՀ-ի և Կասկադ Բանկ-ի կողմից համատեղ կառավարվող առանձին իրավաբանական անձ: Հավատարմագրային ընկերությունն այս ենթավարկերի ապահովությամբ կթողարկի տոկոսաբեր արժեթղթեր, որոնք կհանվեն ազատ շուկայական վաճառքի:

#### **4) Աջակցություն ՀՎԷԷՀ-ին և ՄՖՀ-ին՝ Ծրագրի արդյունավետ իրականացման և մոնիտորինգի համար. ներառյալ ապրանքների, ծառայությունների և ուսուցման տրամադրումը.**

Այս ենթաբաղադրիչի շրջանակներում ծրագրի իրականացման և մոնիտորինգի համար ՀՎԷԷՀ-ին և ՄՖՀ-ին կտրամադրվի ՏԱ, սարքավորումների և նյութատեխնիկական օժանդակություն, այդ թվում՝ տեխնիկական փորձագետների և տեղացի խորհրդատուների ծառայությունների գնման, գրասենյակային գույքի և սարքավորումների ձեռքբերման, աշխատակիցների աշխատավարձի վճարման, աուդիտի իրականացման, տրանսպորտային, կապի ու վերապատրաստման ծախսերի համար: Այս ենթաբաղադրիչի շրջանակներում կիրականացվի նաև.

- Վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործման և շահագործման, CO<sub>2</sub>-ի արտանետումների կրճատման մոնիտորինգի իրականացում,

- ՏԱ-ի տրամադրում ՀՎԷԷՀ-ին Մաքուր Ջարգացման Մեխանիզմի (ՄՁՄ) գործառնությունների իրականացմանն անհրաժեշտ ինստիտուցիոնալ կարողությունների ձևավորման համար. սա անհրաժեշտ է, քանի որ ենթաձրագրերը լինելու են քանակով մեծ, իսկ գումարով փոքր, և գործառնական ծախսերն առանց ՀՎԷԷՀ-ի աջակցության մեծ լինեն,
- Ծրագրի իրականացումից քաղված դասերի հավաքագրում, վերլուծություն և հրապարակային լուսաբանում, այդ թվում՝ մանրամասն հաշվետվության կազմում, հանրապետական և տարածաշրջանային խորհրդատուների կազմակերպում, Հայաստանում ծրագրի իրականացման փորձից քաղված դասերն ամփոփող վավերագրական ֆիլմի ստեղծում:

### 5) Ծրագրի մոնիտորինգը և գնահատումը

ՎԷԾ-ի արդյունքների մոնիտորինգի և գնահատման նպատակով ՀՎԷԷՀ-ի կողմից պետք է իրականացվի ՎԷԾ-ի ընթացքի, արդյունքների և հետևանքների ու ազդեցությունների մոնիտորինգ:

**ՎԷԾ-ի առաջընթացի մոնիտորինգը** հիմնված կլինի Կասկադ Բանկից, ՀԾԿ-ից և Ազգային Էներգետիկ կառավարման կենտրոնից ստացված տեղեկությունների և հաշվետվությունների վրա: Կասկադ Բանկից ստացված հաշվետվությունները պետք է պարունակեն տեղեկություններ Ծրագրի շահառուների/ենթափոխառուների/ և Կասկադ Բանկի հետ նրանց առընչությունների/տեքտային կան/, նրանց կողմից իրականացվող ծրագրերի համառոտ նկարագրության /այդ թվում տեղակայված հզորությունների, ենթափոխառուների կողմից գնվող սարքավորումների որակի, այդ թվում չօգտագործված լինելու փաստի հաստատում, և գնումների ընթացակարգային պահանջների պահպանման մասին/, ենթափոխառությունների չափի, այդ թվում Կասկադ Բանկի կամ այլ անձանցից ներգրավված դրամական միջոցների չափի, ենթափոխառությունների ժամկետների, տոկոսադրույքների, մարման ընթացքի վերաբերյալ:

ՀՎԷԷՀ-ի բնապահպանական մասնագետի կողմից կիրականացվի նաև բնապահպանական մոնիտորինգ՝ ԲԿՊ-ի պահանջների պահպանման ստուգման նպատակով:

ՀՎԷԷՀ-ի մասնագետների կողմից ՀՏ-ի հանձնարարությամբ ըստ անհրաժեշտության կարող են իրականացվել նաև տեղանքային այցելություններ, որոնք կարող են իրականացվել Կասկադ Բանկի հետ համատեղ կամ առանձին՝ ենթափոխառուների հետ համաձայնեցված ժամկետներում: Տեղանքային այցելությունների ընթացքում պետք է դիտարկվի տվյալ ծրագրով նախատեսված աշխատանքների առաջընթացը:

ՀՎԷԷՀ-ը հավաքագրված տեղեկատվության և հաշվետվությունների հիման վրա կկազմի սեփական հաշվետվությունները՝ կիսամյակային և տարեկան կտրվածքով, որոնք կներկայացվեն ՀԽ-ին և ՀԲ-ին:

Ներկայացվող տեղեկությունների հավաքագրման նպատակով ՀՎԷԷՀ-ի կողմից կմշակվի կառավարման տեղեկատվական համակարգ, որում ամենից գատ կներառվեն տվյալներ ծրագրի նախապատրաստման, ներդրված գումարների, երաշխավորություն չպահանջող վարկերի, ֆինանսական գործընկերների հետ ծախսերի բաշխման, ենթաձրագրերի արդյունավետության, չմարված վարկերի, միջոցների վերաներդրման, ինչպես նաև էներգաարդյունավետության և ջերմոցային զազերի արտանետումների կրճատման վերաբերյալ տեղեկություններ: Այս տեղեկատվությունն ամփոփ ձևով պետք է ներկայացվի ՀԽ-ին և ՀԲ-ին եռամսյակային կտրվածքով:

**ՎԷԾ-ի արդյունքների մոնիտորինգը** մասնավորապես պետք է իրականացվի ՎԷԾ մեկնարկելուց մեկ տարի հետո և տարեկան պարբերականությամբ: ՎԷԾ արդյունքների մոնիտորինգը պետք է ներառի հետևյալը.

- մեկ ընդհանուր ցանցային ռեժիմով աշխատող համակարգում վերականգնվող էներգետիկայի տեղակայված հզորությունները,
- վերականգնվող էներգետիկայի օբյեկտների արտադրանքի հաշվին ընդհանուր էներգաարտադրության ծավալների ավելացումը,
- ածխածնի երկօքսիդի արտանետումների նվազեցումը:

**ՎԷԾ-ի հետևանքների և ազդեցությունների մոնիտորինգը** կիրականացվի ՎԷԾ-ի ավարտից հետո: Այն կտա ՎԷԾ-ի առանձին բաղադրիչների փաստացի տեխնիկատնտեսական ցուցանիշները, կազմակերպական և ինստիտուցիոնալ հիմնախնդիրները, կամփոփի արդյունքները, կբացահայտի ծրագրում տեղ գտած թերություններն ու խոչընդոտները և կտա դրանց վերացման, ՎԷԾ-ի արդյունավետության բարձրացման համապատասխան առաջարկություններ:

### **Բ) Վերականգնվող էներգետիկայի ենթածրագրերում ներդրումների ֆինանսավորում**

Սույն բաղադրիչի նպատակը նոր հողմային կամ փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և գործող կայանների վերակառուցման գործառույթներ իրականացնող մասնավոր ներդրողների ֆինանսավորումն է վերականգնվող էներգետիկայի ենթածրագրերի մշակման և իրականացման համար:

ՎԷԾ Շահառու է ցանկացած պետական մասնակցություն չունեցող իրավաբանական անձ որը ներգրավված է կամ ցանկություն ունի ներգրավվել այնպիսի տնտեսական գործունեության մեջ, որը ներառում է նոր հողմային կամ փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և գործող կայանների վերակառուցման գործառույթներ և ունի ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված կառուցման և/կամ վերականգնման, գործունեության լիցենզիա:

Ենթափոխառուները և ենթածրագրերը պետք է համապատասխանեն ներքոգրյալ չափանիշներին, որոնց պահպանմամբ կապահովվի ենթածրագրերի ֆինանսական կենսունակությունը և ենթափոխառուների ֆինանսական և իրավական անհրաժեշտ կարգավիճակը.

- ֆինանսավորվող ծրագրերը պետք է ավելացնեն վերականգնվող էներգաարտադրության ծավալները (գործող կայանները վերաֆինանսավորման ենթակա չեն),
- ենթափոխառուները պետք է առաջարկվող ծրագրի ամբողջ արժեքի առնվազն 30%-ի չափով կատարեն համաֆինանսավորում, որպես գույքային ներդրում,
- առաջարկվող գործունեությունը ծավալելու համար ենթափոխառուները պետք է ձեռք բերեն օրենսդրությամբ պահանջվող բոլոր անհրաժեշտ լիցենզիաները (նոր

Էլեկտրակայանների կառուցում և/կամ վերականգնում, և այլն), հողի և ջրի իրավունքները,

- ենթափոխառուները պետք է հանդիսանան ենթածրագիր ներկայացրած ընկերության բաժնետոմսերի հիսուն (50) տոկոսից ավելիի բաժնետեր.
- առաջարկվող ծրագրերում հիդրո և հողմակայանների տեղակայվող հզորությունը չպետք գերազանցի 10 ՄՎտ,
- ենթափոխառության գումարը չի կարող գերազանցել 2 միլիոն ԱՄՆ դոլարը:

Կասկադ Բանկը չի կարող ֆինանսավորել այն ենթածրագրերը, որոնք արդեն ֆինանսավորված են (բացառությամբ այն դեպքերի, երբ ենթածրագրերի ֆինանսավորումը պայմանավորված է գների և/կամ փոխարժեքի տատանման պատճառով գոյացած ծախսերի հետ) և/կամ առնչություն ունեն Կասկադ Բանկի կամ նրա հետ փոխկապակցված անձանց /Կասկադ Բանկի գործունեությունը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ այդպիսիք ճանաչվող/ կողմից վերահսկվող կամ սեփականություն հանդիսացող իրավաբանական անձանց հետ: Կասկադ Բանկը, նրան առնչվող անհատները կամ նրան առնչվող իրավաբանական անձինք չպետք է ենթածրագրերում մասնաբաժին ունենան, քանի դեռ ենթավարկերը ամբողջությամբ մարված չեն: Սույնից բացառություն են կազմում բոլոր այն դեպքերը, որոնք կատարվել են ենթավարկերի մարման նպատակով ենթավարկերի ապահովման միջոցների իրացման կամ համանման այլ միջոցառումների կիրառման դեպքում:

Կասկադ Բանկի վարկավորումը Հիմնադրամի կողմից իրականացվում է Կասկադ Բանկի հետ կնքվող Լրացուցիչ փոխառության համաձայնագրի հիման վրա (Հավելված 16): Կասկադ Բանկը ստանալով ՄՁԸ միջոցները, միաժամանակ ապահովելով իր սեփական և ՎՋԵԲ-ից ներգրաված միջոցների ներդրումը և սահմանված կարգով տրամադրում ենթափոխառություններ շահառուներին՝ կնքելով նրանց հետ ենթափոխառության համաձայնագրեր (Հավելված 17):

Լրացուցիչ փոխառության համաձայնագրի գործողության ամբողջ ընթացքում Կասկադ Բանկը պետք է ապահովի համապատասխանության հետևյալ չափորոշիչների պահպանումը.

- ա) պահպանել բանկերի գործունեությունը կանոնակարգող Հայաստանի Հանրապետության բոլոր նորմատիվ իրավական ակտերի պահանջները՝ բավարար չափով,
- բ) ապահովել ամենամյա աուդիտի անցկացում հաշվապահական հաշվառման և աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան,
- գ) պահպանել Լրացուցիչ փոխառության համաձայնագրով սահմանված ծրագրերի համաֆինանսավորման չափը:

Փոխառությունը տրամադրվում է Կասկադ Բանկին վարկային գծի ձևով: Վարկային գծի ընդհանուր գումարը կազմում է ոչ ավել, քան 5,000,000 (հինգ միլիոն) ԱՄՆ դոլար: Վարկային գիծը Կասկադ Բանկի համար մատչելի է Հիմնադրամի հետ կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 60 ամսվա ընթացքում:

Վարկային գծի շրջանակներում փոխառություններ կարող են տրամադրվել ՀՀ դրամով կամ ԱՄՆ դոլարով՝ ըստ Կասկադ Բանկի պահանջի: Փոխառության մարումները կկատարվեն այն արժույթով, ինչ արժույթով որ տրամադրվել են, բացառությամբ տոկոսների (տույժերի), որոնք վճարվում են ՀՀ դրամով: Փոխառության տոկոսադրույքը սահմանվում է հետևյալ չափերով.

- ԱՄՆ դոլարով տրամադրվող Փոխառության համար՝ 6 ամսվա ԼԻԲՈՐ գումարած 1%: Սույն համաձայնագրի իմաստով ԼԻԲՈՐ նշանակում է ԱՄՆ դոլարով խոշոր բանկերին տրվող ավանդների Լոնդոնյան միջբանկային տոկոսադրույք որը հրապարակված է ՌԵՅԹԵՐ ծառայության էլեկտրոնային կայքում «LIBOR 01» էջում կամ նույն կայքի նման այլ էջերում, որտեղ կսահմանվի Լոնդոնյան միջբանկային տոկոսադրույքը ԱՄՆ դոլարով ավանդների համար:
- ՀՀ դրամով Փոխառության համար՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաշվարկված Հայաստանյան բանկերի համար ֆիզիկական անձանցից ներգրավված 91-180-օրյա ավանդների վերջին վեց ամիսների միջին կշռված տոկոսադրույքն՝ ըստ վերջին հրապարակման, բայց ոչ ցածր, քան 6 ամսվա ԼԻԲՈՐ:

Տոկոսադրույքը ֆիքսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ին ու հունիսի 15-ին, և յուրաքանչյուր ենթափոխառության համար Կասկադ Բանկին տրամադրված գումարի նկատմամբ կիրառվող տոկոսադրույքը մնում է անփոփոխ տրամադրման ամբողջ ժամանակահատվածի համար:

Փոխառության մարման ժամկետը համապատասխանում է ենթափոխառուին Կասկադ Բանկի կողմից տրամադրվող ենթափոխառության մարման ժամկետի հետ, բայց ոչ ավել քան 96 (իննսունվեց) ամիս: Փոխառության հիմնական գումարը հետ է վճարվում հավասար մասերով տարեկան երկու անգամ՝ յուրաքանչյուր օրացուցային տարվա մայիս ամսվա 17-ին և նոյեմբեր ամսվա 17-ին իսկ եթե նշված օրը ոչ բանկային է, ապա դրան հաջորդող առաջին բանկային օրը: Ընդ որում, հիմնական գումարի մարման համար սահմանվում է արտոնյալ ժամկետ, որի ընթացքում հիմնական գումարի հետ վճարում չի իրականացվում, վճարվում են միայն Համաձայնագրով սահմանված տոկոսագումարները: Արտոնյալ ժամկետը սահմանվում է առավելագույնը 24 (քսանչորս) ամիս: Սույն կետով նախատեսված արտոնյալ ժամկետը կիրառվում է նաև Կասկադ Բանկի կողմից Ենթափոխառուի հետ կնքվող Ենթափոխառության պայմանագրում:

## **Բ.1 ՎԷ ծրագրի միջոցների վերաբաշխումը շրջանառու սկզբունքով**

### **ա/Նպատակը**

Ծրագրի շրջանակներում «Կասկադ Բանկ» ՓԲԸ-ի կողմից մարված գումարները կարող են դարձյալ տեղաբաշխվել շրջանառու սկզբունքով՝ ծրագրի նպատակների համար համաձայն ստորև ներկայացված պայմանների և ժամկետների:

Նպատակը վերականգնվող ռեսուրսների կիրառմամբ կառուցվող կայանների և գործող կայանների վերակառուցման ծրագրեր իրականացնող մասնավոր ներդրողների ֆինանսավորումն է վերականգնվող էներգետիկայի ենթածրագրերի մշակման և իրականացման համար: Ծրագրի շրջանակներում Հիմնադրամի միջոցները որպես

փոխառության տրամադրվում են ՄՖՀ-ներին՝ Ծրագրին մասնակից հաստատություններին վերջինիս կողմից ներդրողներին վարկավորելու համար:

**բ/ՄՖՀ-ների ընտրության չափանիշները և կարգը**

Որպես ՄՖՀ կարող են հանդես գալ առևտրային բանկերը և/կամ բանկ չհանդիսացող ֆինանսական միջնորդները (վարկային կազմակերպություններ):

ՄՖՀ-ների ընտրության համար գործում են գնահատման հետևյալ չափանիշները.

Ընդունելի բանկ և ոչ-բանկ ՄՖՀ-ն պետք է.

- 10) բաժնետոմսերի առնվազն 75 տոկոսով հանդիսանա մասնավոր սեփականություն,
- 11) դրսևորի հետաքրքրվածություն և պատրաստակամություն սպասարկելու բազմաթիվ հաճախորդների և ծրագրի շահառուներին,
- 12) բավարարի ԿԲ կողմից սահմանված նորմատիվային պահանջները, մասնավորապես ա) ընդհանուր և կանոնադրական կապիտալի համարժեքության նորմատիվը, բ) մեկ փոխառուի, փոխկապակցված, բանկի հետ կապված անձի և/կամ անձանց գծով ռիսկի առավելագույն չափը, գ) իրացվելիության նորմատիվը /միայն բանկերի համար/
- 13) վերջին երկու տարիների ակտիվների շահութաբերության ցուցանիշը լինի առնվազն 2%
- 14) վերջին երկու տարիների կապիտալի շահութաբերության ցուցանիշը լինի առնվազն 10%
- 15) չաշխատող ակտիվների և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը չպետք է գերազանցի 3 %
- 16) վերջին երկու եռամսյակներում չաշխատող և ընդհանուր վարկերի հարաբերակցությունը չգերազանցի 4%
- 17) անցած լինի տարեկան աուդիտ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (IFRS) և Աուդիտի միջազգային ստանդարտների (ISA) և ունենա աուդիտի եզրակացություն առանց վերապահումների վերջին երկու տարվա համար, եթե գոյություն ունեն
- 18) ունենա ներքին վերահսկողության և աուդիտի բավարար կարգեր, ներառյալ հիմնավոր վարկային քաղաքականություն և մեխանիզմներ, որոնք առնչվում են վարկավորման ամբողջ ցիկլին, խնդրահարույց վարկերի կառավարմանը, ակտիվների դուրսգրմանը, վարկերի հաստատման լիազորություններին և այլն:

Ծրագրին մասնակցելու նպատակով ՄՖՀ-երը հետաքրքրության հայտ են ներկայացնում Հիմնադրամին՝ ներկայացնելով անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում նաև տարեկան հաշվետվություն և աուդիտի եզրակացություն վերջին երկու ֆինանսական տարվա համար, ինչպես նաև այլ տեղեկատվություն՝ նորմատիվային և կանոնակարգման պահանջներին համապատասխանելիության վերաբերյալ:

ՄՖՀ կողմից ներկայացված հայտերը Հիմնադրամի ֆինանսական ղեկավարի եզրակացության հետ միասին քննարկվում են ՄՖՀ ընտրության նպատակով կազմավորված մրցութային հանձնաժողովի կողմից: Մրցութային հանձնաժողովի որոշմամբ ըստ համապատասխանելիության չափանիշների ընտրված ՄՖՀ-ները ներկայացվում են ՀԽ-ի հաստատմանը: ՀԽ հաստատումից հետո Հիմնադրամի և ընտրված ՄՖՀ-ի միջև կնքվում է Փոխառության համաձայնագիր (Հավելված 19):

**Գ/Ենթափոխառուների և ենթածրագրերի չափանիշները**

Ենթափոխառուների ընտրության չափանիշները մնում են նույնը՝ ծրագրին կարող է մասնակցել ցանկացած պետական մասնակցություն չունեցող իրավաբանական անձ, որը

ներգրավված է կամ ցանկություն ունի ներգրավվել այնպիսի տնտեսական գործունեության մեջ, որը ներառում է նոր հողմային կամ փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և գործող կայանների վերակառուցման գործառնականություններ և ունի ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված կառուցման և/կամ վերականգնման, գործունեության լիցենզիա:

Ենթափոխառուները և ենթածրագրերը պետք է համապատասխանեն ներքոգրյալ չափանիշներին.

- ֆինանսավորվող ծրագրերը պետք է ավելացնեն վերականգնվող էներգաարտադրության ծավալները,
- ենթափոխառուները պետք է կատարեն համաֆինանսավորում ենթափոխառության գումարի առնվազն 20%-ի չափով, որպես գույքային ներդրում,
- առաջարկվող գործունեությունը ծավալելու համար ենթափոխառուները պետք է ունենան և/կամ ձեռք բերեն օրենսդրությամբ պահանջվող բոլոր անհրաժեշտ լիցենզիաները (նոր կայանների կառուցում և/կամ վերականգնում, և այլն), հողի և ջրի օգտագործման իրավունքները,
- ենթափոխառուները պետք է հանդիսանան ենթածրագիր ներկայացրած ընկերության բաժնետոմսերի հիսուն (50) տոկոսից ավելիի բաժնետեր.
- առաջարկվող ծրագրերում տեղակայվող հզորությունը չպետք է գերազանցի 10 ՄՎտ,
- ենթափոխառության գումարը չի կարող գերազանցել 2 միլիոն ԱՄՆ դոլարը:

Ծրագրի շրջանակներում չեն կարող ֆինանսավորել այն ենթածրագրերը, որոնք արդեն ֆինանսավորված են Ծրագրի միջոցներից (բացառությամբ այն դեպքերի, երբ ենթածրագրերի ֆինանսավորումը պայմանավորված է գների և/կամ փոխարժեքի տատանման պատճառով գոյացած ծախսերի հետ) և/կամ առնչություն ունեն կամ նրա հետ փոխկապակցված անձանց /ՄՖՀ գործունեությունը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ այդպիսիք ճանաչվող/ կողմից վերահսկվող կամ սեփականություն հանդիսացող իրավաբանական անձանց հետ: ՄՖՀ, նրան առնչվող անհատները կամ իրավաբանական անձինք չպետք է ենթածրագրերում մասնաբաժին ունենան, քանի դեռ ենթավարկերը ամբողջությամբ մարված չեն: Սույնից բացառություն են կազմում բոլոր այն դեպքերը, որոնք կատարվել են ենթավարկերի մարման նպատակով ենթավարկերի սպահովման միջոցների իրացման կամ համանման այլ միջոցառումների կիրառման դեպքում:

Փոխառությունը տրամադրվում է ՄՖՀ-ին վարկային գծի ձևով: Վարկային գծի ընդհանուր գումարը կազմում է ոչ ավել, քան 3,500,000 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) ՓՀԻ համարժեք գումար: Վարկային գիծը ՄՖՀ-ի համար մատչելի է Հիմնադրամի հետ կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 60 ամսվա ընթացքում:

Վարկային գծի շրջանակներում փոխառություններ կարող են տրամադրվել ՀՀ դրամով կամ ԱՄՆ դոլարով՝ ըստ ՄՖՀ-ի պահանջի: Փոխառության մարումները կկատարվեն այն արժույթով, ինչ արժույթով որ տրամադրվել են, բացառությամբ տոկոսների (տույժերի), որոնք վճարվում են ՀՀ դրամով: Փոխառության տոկոսադրույքը սահմանվում է հետևյալ չափերով.

- ԱՄՆ դոլարով տրամադրվող Փոխառության համար՝ 6 ամսվա ԼԻԲՈՐ գումարած 2%, բայց տոկոսադրույքը չի կարող ցածր լինել 5%-ից: Սույն համաձայնագրի իմաստով

ԼԻԲՈՐ նշանակում է ԱՄՆ դոլարով խոշոր բանկերին տրվող ավանդների Լոնդոնյան միջբանկային տոկոսադրույք որը հրապարակված է ՌԵՅԹԵԲ ծառայության էլեկտրոնային կայքում «LIBOR 01» էջում կամ նույն կայքի նման այլ էջերում, որտեղ կսահմանվի Լոնդոնյան միջբանկային տոկոսադրույքը ԱՄՆ դոլարով ավանդների համար:

- ՀՀ դրամով Փոխառության համար՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաշվարկված Հայաստանյան բանկերի համար ֆիզիկական անձանցից ներգրավված 91-180-օրյա ավանդների վերջին վեց ամիսների միջին կշռված տոկոսադրույքն՝ ըստ վերջին հրապարակման, բայց ոչ ցածր, քան 6 ամսվա ԼԻԲՈՐ:

Տոկոսադրույքը ֆիքսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ին ու հունիսի 15-ին, և յուրաքանչյուր ենթափոխառության համար ՄՖՀ-ին տրամադրված գումարի նկատմամբ կիրառվող տոկոսադրույքը մնում է անփոփոխ տրամադրման ամբողջ ժամանակահատվածի համար:

Փոխառության մարման ժամկետը համապատասխանում է ենթափոխառուին ՄՖՀ-ի կողմից տրամադրվող ենթափոխառության մարման ժամկետի հետ, բայց ոչ ավել քան 96 (իննսունվեց) ամիս: Փոխառության հիմնական գումարը հետ է վճարվում ամսական կտրվածքով հավասար մասերով մինչև հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա 5-ը, իսկ եթե նշված օրը ոչ բանկային է, ապա դրան հաջորդող առաջին բանկային օրը: Ընդ որում, հիմնական գումարի մարման համար սահմանվում է արտոնյալ ժամկետ, որի ընթացքում հիմնական գումարի հետ վճարում չի իրականացվում, վճարվում են միայն Համաձայնագրով սահմանված տոկոսագումարները: Արտոնյալ ժամկետը սահմանվում է առավելագույնը 24 (քսանչորս) ամիս: Սույն կետով նախատեսված արտոնյալ ժամկետը կիրառվում է նաև ՄՖՀ-ի կողմից Ենթափոխառուի հետ կնքվող Ենթափոխառության պայմանագրում:

Տոկոսները հաշվարկվում են փաստացի օգտագործված օրացուցային օրերի համար՝ տարին ընդունելով 365 օր: Տոկոսների վճարումը կատարվում է ամսական կտրվածքով՝ համամասնորեն մինչև հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա 5-ը ներառյալ, իսկ եթե նշված օրը ոչ բանկային է, ապա դրան հաջորդող առաջին բանկային օրը:

Ենթածրագրերի վարկավորման համար շահառուի կողմից պետք է կատարվի ենթափոխառության գումարի առնվազն 20 %-ի չափով համաֆինանսավորում:

Վարկային գծի շրջանակներում Փոխառության գումարներ ստանալու նպատակով ՄՖՀ-ները պետք է սահմանված ձևով դիմում ներկայացնեն Հիմնադրամին (դիմումի ձևը կցվում է Հավելված 19-ով ներկայացված փոխառության համաձայնագրին): Դիմումի մեջ նշվում է պահանջվող գումարը, ժամկետը, շահառուի անվանումը, գտնվելու վայրը, ենթածրագրի իրականացման վայրը, ենթափոխառության նպատակը, ապահովման միջոցը՝ գնահատված անկախ, լիցենզավորված գնահատողի կողմից: Դիմումը Հիմնադրամի համապատասխան մասնագետների եզրակացության հետ միասին ներկայացվում է Հիմնադրամի տնօրենին:

Հիմնադրամը ՄՖՀ դիմումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում պետք է հայտնի դիմումը պայմանագրի պահանջներին համապատասխանելու կամ անհամապատասխանության մասին: Դրական պատասխանի դեպքում Հիմնադրամի և ՄՖՀ միջև ստորագրվում է Փոխառության հատկացման արձանագրություն, որում նշվում են կողմերի

անվանումները, փոխառության գումարի չափը, արժույթը, տոկոսադրույքը, ժամկետը և շահառուի անվանումը:

Վերջինիս հիման վրա հինգ բանկային օրվա ընթացքում փոխառության գումարը փոխանցվում է ՄՖՀ թղթակցային հաշվին, եթե իրականացվել են հետևյալ գործողությունները.

ա) ՄՖՀ-ն Շահառուի հետ պատշաճ կարգով կնքել է վարկային պայմանագիր,

բ) Շահառուն կնքել է իր վարկային պարտավորությունն ապահովող միջոցի մասին պայմանագիր (գրավի, երաշխավորության, բանկային երաշխիքի) և

գ) Փոխառուի և ՀՀ անունից գործող Փոխառուի միջև պատշաճ կերպով (օրենքով նախատեսված դեպքերում՝ նոտարական վավերացմամբ և իրավունքների պետական գրանցմամբ) կնքվել է Ենթափոխառուի նկատմամբ Փոխառուի պահանջի իրավունքի և ապահովման միջոցների նկատմամբ իրավունքի գրավի պայմանագիր:

Փոխառության գումարի յուրաքանչյուր մասնաբաժնի համար Փոխառուն Փոխառուին ներկայացնում է հայտ, որտեղ նշվում է հայտի հերթական համարը, պահանջվող մասնաբաժնի չափը և անհրաժեշտ այլ փաստաթղթեր:

Յուրաքանչյուր Ենթափոխառուի մասով Ենթափոխառության ամբողջ գումարը ստանալուց հետո Փոխառուն Հիմնադրամին է տրամադրում պահանջի իրավունքի զիջման պայմանագիր կնքելու և հրաժարագնի վերաբերյալ առաջարկ:

Հիմնադրամը կարող է փոխառուից պահանջել փոխառության վաղաժամկետ մարում, որի հիմքերն ու պայմանները ներկայացված են ՓՀ-ում (Հավելված 19):

Որպես լրացուցիչ ապահովման միջոց ՄՖՀ-ն պետք է Հիմնադրամին տրամադրի հավաստում, որ ՀՀ կենտրոնական բանկում սպասարկվող իր թղթակցային հաշիվների միջոցներից դրամական պարտավորությունն անակցեպտ գանձելու վերաբերյալ գրությունը ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաշվառվել է, որի հիման վրա Հիմնադրամը իրավունք կունենա ՄՖՀ-ի կետանցված պարտքը անակցեպտ կարգով գանձել վերջինիս՝ ՀՀ կենտրոնական բանկում ունեցած թղթակցային բոլոր հաշիվներից:

### **3.3 ՎԷԾ բնապահպանական գնահատումը**

ՎԷԾ կմեծացնի Հայաստանի Էներգաարտադրության կառուցվածքում վերականգնվող պաշարների մասնաբաժինը՝ ֆինանսավորելով հիմնականում բնական (գետի բնական ռեժիմով) և արհեստական (ռոռզման և խմելու ջրի խողովակներ և ջրանցքներ) ջրահոսքերի վրա տեղակայված ՓՀԷԿ-երին և հողմակայաններին՝ նպատակ ունենալով նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումների (CO<sub>2</sub>) ծավալները:

#### **Շրջակա միջավայրի ազդեցության գնահատում**

ՎԷԾ-ին տրվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության Ֆինանսական միջնորդի/ՖՍ/ կատեգորիա: Չնայած դրան, չի ակնկալվում, որ ծրագիրը կարող է աննախադեպ խոշոր կամ

մնայուն վնաս պատճառել շրջակա միջավայրին և նրա հնարավոր բացասական ազդեցությունը հիմնականում կապված կլինի շինարարական աշխատանքների հետ, սակայն այն կունենա սահմանափակ բնույթ: Ենթադրվում է, որ բացասական հնարավոր ազդեցությունները կարող են առաջանալ.

ա) շինարարական աշխատանքների ընթացքում,

բ) փոքր հիդրոէլեկտրակայանների վերակառուցման արդյունքում

գ) հողմակայանների կառուցման հետևանքով

Այդ բացասական ազդեցությունը մեղմելու նպատակով Կասկադ Բանկի կողմից ֆինանսավորվող ենթածրագրերը կենթարկվեն բնապահպանական ուսումնասիրության ՀՎԷԷՀ-ի և Կասկադ Բանկի կողմից ԲԿՊ-ի համաձայն, որը ներկայացված է սույն ԳՁ-ին կից Հավելված 16-ում:

Ենթածրագրերի բնապահպանական ուսումնասիրության ընթացքում ՀՎԷԷՀ-ը և Կասկադ Բանկը հաշվի կառնեն դրանց բնապահպանական ազդեցությունը և միջոցառումներ կձեռնարկեն այն մեղմելու համար, որը ընդհանուր գծերով ներառում է

- Ենթածրագիրը արդեն մանրամասն աշխատանքային նախագծի փուլում պետք է ունենա իր Բնապահպանական կառավարման ծրագիրը, ուր նկարագրվում է հնարավոր բնապահպանական ազդեցությունը և բերվում են այդ ազդեցությունը մեղմող միջոցառումների նկարագիրը,
- քննարկող ենթածրագրերը պետք է ստանան ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր բնապահպանական թույլտվությունները և անցնեն բնապահպանական փորձաքննությունը,
- ՀՎԷԷՀ օժանդակմանը ներկայացված ծրագրերը իրենց մրցութային փաստաթղթերում պետք է ներառեն շրջակա միջավայրի վրա ազդեցության մեղմմանն ուղղված միջոցառումների նկարագիրը:

### **Ենթածրագրերի բնապահպանական ուսումնասիրությունը Կասկադ Բանկում**

Բնապահպանական ուսումնասիրության գործընթացը պետք է իրականացվի հետևյալ կարգով.

1. Ենթափոխառուն պատրաստում է ներդրումային ծրագրի սկզբնական հայեցակարգ՝ Կասկադ Բանկի և ՀՎԷԷՀ-ի հետ ունեցած ոչ պաշտոնական քննարկումների արդյունքում, որոնց ընթացքում Ենթափոխառուին ներկայացվում է բնապահպանական գնահատման պահանջները: Ենթափոխառուն պատրաստում է բնապահպանական դիտարկման ձևաթերթի Ա մասը (Կցվում է ԲԿՊ-ին) և դիտարկման ձևաթերթը ներկայացնում ենթածրագրի սկզբնական հայեցակարգի հետ:

2. Տրամադրված փաստաթղթերի և տեղանքային այցելությունների արդյունքում հայտնաբերումների հիման վրա Կասկադ Բանկ/ՀՎԷԷՀ տեղեկացնում են ենթափոխառուին բնապահպանական ռիսկի կատեգորիայի մասին: Ենթածրագրերը ըստ բնապահպանական ռիսկի բաժանվում են երեք կատեգորիայի.

**«Ա կատեգորիա»** - ծրագրեր որոնց արդյունքում կարող են ի հայտ գալ տարբեր և խիստ բացասական ազդեցություններ շրջակա միջավայրի վրա: Նման ծրագրի համար դիմողը պետք է նախապատրաստի «Բնապահպանական գնահատում», այդ թվում՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում» և «Բնապահպանական կառավարման պլան»:

**«Բ կատեգորիա»** - ծրագրեր, որոնք կարող են շրջակա միջավայրի վրա թողնել միջին կոնկրետ ազդեցություններ, որոնց մեղմացմանն ուղղված միջոցառումները քաջ հայտնի են և

հեշտ իրագործելի: Բնապահպանական կառավարման ամփոփ ծրագիրը բավարար է հնարավոր խնդիրների և դրանց մեղմացման միջոցների բնութագրության համար:

«Գ կատեգորիա» - Ծրագրեր, որոնք ընդհանրապես չունեն կամ ունեն աննշան ուղղակի և անուղղակի ազդեցություն շրջակա միջավայրի վրա: Որևէ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման» ոչ մի գործողություն չի պահանջվում դիմորդի կողմից:

Ենթածրագրերը գնահատելիս կասկած առաջանալու դեպքում պետք է դիմել ՀԲ:

3. Կասկադ Բանկը պատրաստում է բնապահպանական վերլուծություն և/կամ ենթածրագրին հատուկ բնապահպանական կառավարման ծրագիր և ներկայացնում ՀՎԷԷՀ եզրակացության:
4. ՀՎԷԷՀ ուսումնասիրում է ներկայացված բնապահպանական վերլուծությունը/բնապահպանական կառավարման պլանը և Կասկադ Բանկին հայտնում իր եզրակացությունը:
5. Դրական եզրակացության դեպքում բնապահպանական վերլուծության/բնապահպանական կառավարման պլանի եզրակացություններն ու առաջարկությունները (ներառյալ համապատասխան արժեքները) մտցվում է ներդրումային ծրագրի նախագծում, իրականացման պլանում և մրցութային փաստաթղթերում:
6. Կասկադ Բանկի վարկային մասնագետը ստուգում է առաջարկվող ծրագրի նախագծերի համապատասխանելիությունը բնապահպանական վերլուծության/ԲԿՊ արդյունքում ստացված տվյալներին և տրված թույլատվություններին, ավարտական տեսքի է բերում վարկային փաթեթը, ներառյալ պաշտոնական մարմիններից ստացված համապատասխան բնապահպանական և այլ թույլտվությունները, և ներկայացնում է ՀՎԷԷՀ-ի վերջնական գնահատմանը:
7. Ենթածրագրի իրականացման ամբողջ ընթացքում Կասկադ Բանկը և ՀՎԷԷՀ հետևում են Ենթափոխառուի կողմից բնապահպանական խնդիրների մեղմացման միջոցառումների իրականացմանը:

### **3.4 Գնումների ընթացակարգը**

ՎԷԾ շրջանակներում նախատեսված բոլոր գնումները պետք է իրականացվեն 2004թ. մայիսին Համաշխարհային բանկի կողմից հրապարակված «ՎՋՄԲ փոխառություններով և ՄՁԸ վարկերով կատարվող գնումների ուղեցույցներ» և 2004թ. մայիսով թվագրված «Համաշխարհային բանկի վարկառուների կողմից խորհրդատուների ընտրության և վարձման ուղեցույցներ» փաստաթղթերի համաձայն, ինչպես նաև իրավական համաձայնագրերով ամրագրված դրույթներին համապատասխան:

ՀԲ կողմից ֆինանսավորման ենթակա յուրաքանչյուր պայմանագրի համար ապրանքների և աշխատանքների գնումների կատարման կամ խորհրդատուների ընտրության եղանակը, նախնական որակավորումը, ծախսերի նախահաշիվը, նախնական գնման պահանջները, ինչպես նաև իրականացվելիք գործառնությունների ժամկետները ՀԽ-ի և Բանկի հետ համաձայնեցվելուց հետո ամրագրվում են Գնումների պլանում: Գնումների պլանը տարեկան առնվազն մեկ անգամ կամ ըստ անհրաժեշտության ենթակա է վերանայման՝ ծրագրի

իրագործման ընթացքում երևան եկած փաստացի կարիքներն ու ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման դրական արդյունքներն արտացոլելու իմաստով:

Ստորև ընդհանուր գծերով նկարագրված են ըստ տարբեր ծախսատեսակների կատարվելիք բազմապիսի գնումները:

Աշխատանքներն ու սարքավորումները պետք է գնվեն «ՄՄՄ», «ԱՄՄ», «Փոքրածավալ աշխատանքներ» և «Գնանշման հարցումներ» եղանակով գնումների համար Բանկի կողմից սահմանված ստանդարտ փաստաթղթերի օգտագործմամբ:

Խորհրդատվական ծառայությունների գնումը պետք է իրականացվի Բանկի կողմից «Որակի և արժեքի վրա հիմնված ընտրության», «Որակի վրա հիմնված ընտրության», «Նվազագույն արժեքի վրա հիմնված ընտրության», «Խորհրդատուների որակի վրա հիմնված ընտրության», «Սեկ ադբյուրի վրա հիմնված ընտրության» և «Անհատ խորհրդատուների ընտրության» համար սահմանված «Առաջարկ ներկայացնելու հրավերքների» ստանդարտ ձևերի կիրառմամբ:

#### **Ա) Վարկի միջոցներից ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումը**

ՎԷԾ շրջանակներում ՄԶԸ վարկային միջոցներից հատկացվելիք ենթափոխառությունների գծով ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումը պետք է իրականացվի սույն ԳԶ-ի Հավելված 13-ով ամրագրված «Առևտրային պրակտիկայի» հիման վրա: Ենթափոխառությունների կողմից առաջարկվող ծրագրերը գնահատելիս՝ նրանք Կասկադ Բանկին պետք է ներկայացնեն առնվազն 2 (երկու) գնառաջարկ՝ 5000-100 000 ԱՄՆ դոլար գնահատված արժողությամբ ապրանքների, և առնվազն 3 (երեք) գնառաջարկ՝ 100 000 ԱՄՆ դոլարից ավել գնահատված արժողությամբ ապրանքների համար: 1 մլն. ԱՄՆ դոլարի սահմանաչափը գերազանցող պայմանագրերի գնումն իրականացվում է Միջազգային Մրցակցային Սակարկության հիման վրա՝ Համաշխարհային բանկի ստանդարտ մրցակցային փաստաթղթերի կիրառմամբ:

**Միջազգային մրցակցային սակարկություն:** Գնումների ուղեցույցների 2.55 և 2.56 կետերի դրույթները, որոնք մրցութային առաջարկների ժամանակ նախապատվություն են տալիս ներքին արտադրողին, պետք է կիրառվեն Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրված ապրանքների նկատմամբ: Առավելության չափը տեղական ապրանքների գծով սահմանված է՝ 15%, իսկ աշխատանքների՝ 7.5%:

#### **ՄԶԸ կողմից գնումների որոշումների վերանայումը**

Եթե ՄԶԸ կողմից այլ որոշում չի կայացվել, այդ մասին ՀՀ կառավարությանը ծանուցելու միջոցով, ապա հետևյալ պայմանագրերը ենթակա են ՄԶԸ նախնական վերանայմանը. ա) ապրանքների, աշխատանքների և ծառայությունների (բացառությամբ խորհրդատվական ծառայությունների) յուրաքանչյուր պայմանագիր, որի գնահատված արժեքը կազմում է 1,000,000 ԱՄՆ դոլարին համարժեք կամ ավել, և բ) Պայմանագրի ուղղակի կնքմամբ գնված յուրաքանչյուր պայմանագիր: Բոլոր այլ պայմանագրերը ՄԶԸ կողմից ենթարկվում են հետվերանայման:

#### **Բ) Դրամաշնորհի միջոցներից ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումը**

**Ա. Միջազգային մրցակցային սակարկություն.** Սույն բաժնի Մաս «Բ»-ով այլ բան նախատեսված չլինելու դեպքում՝ պայմանագրերը շնորհվում են Միջազգային մրցակցային սակարկության հիման վրա:

**Բ. Գնումների այլ ընթացակարգեր**

1. **Գնանշումներ.** Մեկ պայմանագրի արժեքը 200,000 ԱՄՆ դոլարին համարժեք գումարից պակաս գնահատված ապրանքները կարող են գնվել գնանշման հարցումներ մեթոդի հիման վրա շնորհված պայմանագրերով:
2. **Պայմանագրի ուղղակի կնքում.** Այն ապրանքները, որոնք, ըստ Համաշխարհային բանկի, համապատասխանում են պայմանագրի ուղղակի կնքման պահանջներին, կարող են գնվել տվյալ գնումների մեթոդի դրույթների պահպանմամբ:

**Խորհրդատվական ծառայությունների գնուման առանձնահատուկ մեթոդները**

**Ա. Որակի և արժեքի վրա հիմնված ընտրություն:** Բացառությամբ սույն բաժնի Բ մասով նախատեսվածի՝ Խորհրդատվական ծառայությունները պետք է գնվեն համաձայն որակի և արժեքի վրա հիմնված ընտրության հիման վրա շնոր հված պայմանագրերի: Խորհրդատուների ուղեցույցների 2.7 կետի նպատակներով՝ մեկ պայմանագրի արժեքը 100,000 ԱՄՆ դոլարին համարժեք գումարից պակաս գնահատված ծառայություններ մատուցող Խորհրդատուների կարճ ցուցակը կարող է ամբողջապես բաղկացած լինել ազգային Խորհրդատուներից:

**Բ. Այլ Ընթացակարգեր**

1. **Որակի վրա հիմնված ընտրություն.** Առաջադրանքների կատարման համար նախատեսված այն ծառայությունները, որոնք, ըստ Համաշխարհային բանկի, բավարարում են Խորհրդատուների ուղեցույցների 3.2 կետի պահանջները, կարող են գնվել որակի վրա հիմնված ընտրությամբ շնորհվող պայմանագրերի համաձայն՝ Խորհրդատուների ուղեցույցների 3.1- 3.4 կետերի դրույթների պահպանմամբ:
2. **Ամրագրված բյուջեով ընտրություն.** Առաջադրանքների կատարման համար նախատեսված այն ծառայությունները, որոնք, ըստ Համաշխարհային բանկի, բավարարում են Խորհրդատուների ուղեցույցների 3.5 կետի պահանջները, կարող են գնվել Ամրագրված բյուջեով ընտրությամբ շնորհվող պայմանագրերի համաձայն՝ Խորհրդատուների ուղեցույցների 3.1 և 3.5 կետերի դրույթների պահպանմամբ:
3. **Նվազագույն արժեքի վրա հիմնված ընտրություն.** Առաջադրանքների կատարման համար նախատեսված այն ծառայությունները, որոնք, ըստ Համաշխարհային բանկի, բավարարում են Խորհրդատուների ուղեցույցների 3.6 կետի պահանջները, կարող են գնվել Նվազագույն արժեքի վրա հիմնված ընտրությամբ շնորհվող պայմանագրերի համաձայն՝ Խորհրդատուների ուղեցույցների 3.1 և 3.6 կետերի դրույթների պահպանմամբ:
4. **Խորհրդատուի որակավորման վրա հիմնված ընտրություն:** Մեկ պայմանագրի արժեքը 100,000 ԱՄՆ դոլարին համարժեք գումարից պակաս գնահատված ծառայությունների պայմանագրերը կարող են շնորհվել են համաձայն Խորհրդատուների ուղեցույցների 3.1, 3.7 և 3.8 կետերի դրույթների:

5. **Մեկ աղբյուրի վրա հիմնված ընտրություն:** Առաջադրանքների կատարման համար նախատեսված ծառայությունների մատուցումն այն հանգամանքներում, որոնք բավարարում են Մեկ աղբյուրի վրա հիմնված ընտրությունը սահմանող Խորհրդատուների ուղեցույցների 3.10 կետի պահանջները, Համաշխարհային բանկի հետ նախապես համաձայնեցնելուց հետո, կարող են գնվել Խորհրդատուների ուղեցույցների 3.9-3.13 կետերի դրույթների համաձայն:
6. **Անհատ խորհրդատուներ:** Առաջադրանքների կատարման համար նախատեսված ծառայությունները, որոնք համապատասխանում են Խորհրդատուների ուղեցույցների 5.1 կետի առաջին նախադասությամբ սահմանված պահանջներին, կարող են գնվել անհատ խորհրդատուներին շնորհվող պայմանագրերով՝ համաձայն Խորհրդատուների ուղեցույցների 5.2-5.3 կետերի դրույթների: Խորհրդատուների ուղեցույցների 5.4 կետում նկարագրված հանգամանքներում այսպիսի պայմանագրերը կարող են շնորհվել անհատ խորհրդատուներին միակ աղբյուրի հիման վրա, որը ենթակա է Բանկի նախնական հաստատմանը:

#### ***Գնումների որոշումների վերանայումը Համաշխարհային բանկի կողմից***

Գնումների պլանը պետք է սահմանի այն պայմանագրերը, որոնք պետք ենթարկվեն ՀԲ-ի նախնական վերանայմանը: Մնացած բոլոր պայմանագրերը ենթակա են հետվերանայման ՀԲ-ի կողմից:

## **4. Ֆինանսական կառավարման համակարգ**

Ֆինանսական կառավարման համակարգը ներառում է ինչպես Հիմնադրամի՝ որպես կազմակերպության, այնպես էլ իրականացվող յուրաքանչյուր ծրագրի ֆինանսական կառավարումը: Յուրաքանչյուր ծրագրի իրականացման դեպքում Հիմնադրամը պետք է պահպանի համապատասխան դոնորի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Ֆինանսական կառավարման համակարգն ընդգրկում է.

***ա) Բյուջետավորում, ծրագրավորում,***

***բ) Հաշվապահական հաշվառում,***

***գ) Հաշվետվություն,***

***դ) Ներքին վերահսկողություն:***

ա) Բյուջետավորման գործընթացը ներառում է երկարաժամկետ և միջնաժամկետ ծախսերի պլանավորում և տարեկան բյուջեների կազմում՝ ըստ առանձին ծրագրերի և ֆինանսավորման աղբյուրների, որը ներառում է նաև Հիմնադրամի գործունեության համար անհրաժեշտ ծախսերի նախահաշվի կազմումը: Բյուջետավորման ընթացքում պետք է առաջնորդվել և/կամ համապատասխան փոփոխություններ կատարել գնումների պլանում և աշխատանքային պլանում: Համակարգչավորված ֆինանսական կառավարումը նախատեսում է ծրագրավորված գումարների արտացոլում սահմանված կարգով:

բ) Հաշվառումն իրականացվում է ՀԲ համար ընդունելի հաշվապահական հաշվառման ստանդարտների հիման վրա: Հաշվառումն իրականացվում է հաշվապահական ձևակերպումների կրկնակի գրանցման մեթոդով: Փաստաթղթերի հաշվապահական ձևակերպումն իրականացվում է հետևյալ փուլերով. 1) հաշիվների կամ կատարողական

ակտերի ձևակերպում, 2) վճարման ենթակա գումարների համադրում, 3) վճարային փաստաթղթերի նախապատրաստում և հաստատում, 4) վճարումների իրականացում: Նշված փուլերում ֆինանսական մասնագետներն ունեն պարտականությունների հստակ տարանջատում:

գ) Հաշվետվությունները պատրաստվում են ինչպես համապատասխան դոկորներին և ՀՀ պետական կառավարման մարմիններին ներկայացնելու, այնպես էլ ներքին մոնիտորինգի և վերահսկողության նպատակներով, որի համար մշակված ձևերը կարող են տարբերվել օրենսդրությամբ կամ դոկորների ընթացակարգերով սահմանված ձևերից:

Հիմնադրամը ՀԲ-ին ներկայացնում է եռամսյակային ֆինանսական մոնիտորինգի հաշվետվություններ, ինչպես նաև վարկային հաշվից առհանումների համար անհրաժեշտ ծախսային հաշվետվություններ՝ սահմանված ձևաչափով:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաշվետվությունները Հիմնադրամում բաժանվում են՝

1) հարկային և այլ մարմինների համար նախատեսված, և 2) ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունների:

դ) Ներքին վերահսկողությունը նախատեսում է հսկողություն Հիմնադրամի նյութական և ոչ նյութական արժեքների, պարտավորությունների տարանջատման, հիմնական միջոցների հաշվառման ընթացակարգերի պահպանման, բանկային հաշիվների պարբերաբար համադրման և այլնի նկատմամբ:

Ֆինանսական կառավարման գործառնությունները նկարագրված են սույն ԳՁ-ին կից Հավելված 18-ում՝ «Ֆինանսական կառավարման ձեռնարկում»:

## **5. Համագործակցություն այլ ծրագրերի հետ**

Հիմնադրամը ոլորտի զարգացմանն աջակցելու նպատակով համագործակցում է դոկորների և այլ կազմակերպությունների հետ, որոնք միջազգային կառույցների ֆինանսավորմամբ ծրագրեր են իրականացնում Հիմնադրամի գործունեության ոլորտում, մասնավորապես Հայաստանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի և ԳԲՀ-ի կողմից իրականացվող «**Քաղաքային ջեռուցման և տաք ջրամատակարարման համակարգում էներգաարդյունավետության խոչընդոտների վերացում**» ծրագրի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ «**Բնակարանային ջեռուցման**» ծրագրի հետ և այլն: Այդ ծրագրերի աշխատանքային խմբերի, թիմերի հետ աշխատանքների համակարգումը իրականացվում է Հիմնադրամի տնօրենի կողմից: Այդ նպատակով համատեղ կազմակերպվում են ծրագրերի աշխատանքների քննարկումներ, որի արդյունքում կազմվում է մտադրությունների և փոխադարձ պարտավորությունների սահմանման վերաբերյալ արձանագրություն, որտեղ հստակեցվում են իրականացվող ծրագրերի բաղադրիչները, իրականացնող կազմակերպությունները և դրանց իրավասությունների շրջանակը: Այսպիսի ծրագրերի աշխատանքային պլանը ներկայացվում է ՀԻ-ի հաստատմամբ:

## **6. Հայաստանի երկրաջերմային ծրագիր**

Ծրագրի ֆինանսավորման ընդհանուր գումարը կազմում է 1.8 մլն. ԱՄՆ դոլար, որը ներառում է 1 500 000 ԱՄՆ դոլարի չափով դրամաշնորհ Վերակառուցման և Ջարգացման Միջազգային Բանկից և 307 229 ԱՄՆ դոլար որպես համաֆինանսավորում Հայաստանի Հանրապետության կառավարությունից: ՀՀ և Վերակառուցման և Ջարգացման Միջազգային Բանկի միջև 2009թ. փետրվարի 26-ին ստորագրվել է Գրամաշնորհի համաձայնագիրը: Ծրագրի իրականացման նպատակով նույն ամսաթվին Ծրագրի համաձայնագիր է ստորագրվել նաև Վերակառուցման և Ջարգացման Միջազգային Բանկի և Հիմնադրամի միջև: Ծրագրի իրականացումը հեշտացնելու նպատակով Գրամաշնորհի միջոցները տրամադրվել են Ծրագիր իրականացնող մարմնին՝ Հիմնադրամին վերջինիս և ՀՀ անունից հանդես եկող ՀՀ ֆինանսների նախարարության միջև կնքված Լրացուցիչ համաձայնագրի համաձայն:

Ծրագրի ավարտի ժամկետն է 2011 թվականի ապրիլի 30-ը:

### **1. Ծրագրի նպատակը և բաղադրիչները**

Ծրագրի նպատակն է գնահատել ամենաբարձր երկրաջերմային ներուժ ունեցող երկրաջերմային տեղամասի հետախուզական հորատման տեխնիկատնտեսական նպատակահարմարությունը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝

### **Ա. Տեխնիկական օժանդակություն**

Բաղադրիչ Ա 1. (600 000 ԱՄՆ դոլար) — Այն ներառելու է տեխնիկական հետազոտության նպատակով ընտրված երկու պոտենցիալ գեոթերմալ դաշտերի՝ Գրիձորի և Կարկառի տեղամասերում երկրաբանական և երկրաֆիզիկական դաշտային աշխատանքների համար խորհրդատվական ծառայությունների տրամադրում, այդ թվում՝ ա) երկրաբանական դաշտային աշխատանքներ (քարտեզագրում և հետախուզում), բ) երկրաֆիզիկական հետազոտություններ, մասնավորապես մագնիսաթելուրային (ՄԹ) զոնդավորման ուսումնասիրության անցկացում և մեկնաբանում, և գ) երկրաբանական դաշտային աշխատանքների և ՄԹ զոնդավորման իրականացման վերահսկողություն:

Բաղադրիչ Ա 2 (1.2 միլիոն ԱՄՆ դոլար).- Բաղադրիչ Ա1 շրջանակներում տրամադրված ծառայությունների արդյունքում ընտրված մեկ տեղամասում հետագա երկրաֆիզիկական հետախուզության աշխատանքների համար խորհրդատվական ծառայությունների տրամադրում, այդ թվում՝ ա) եռաչափ սեյսմիկ ուսումնասիրության (ԵՄՈՒ) անցկացում և մեկնաբանում, բ) ԵՄՈՒ անցկացման վերահսկողություն, և գ) ընտրված տեղամասի տնտեսական և ֆինանսական կենսունակության ընդհանուր գնահատում:

### **Բ. Ծրագրի իրականացում**

Բ 1. Աջակցություն Ծրագիրն իրականացնող մարմնին Ծրագրի Բաղադրիչ Ա.1-ի արդյունավետ իրականացման և մոնիտորինգի նպատակով:

Բ 2. Աջակցություն Ծրագիրն իրականացնող մարմնին Ծրագրի Բաղադրիչ Ա.2-ի արդյունավետ իրականացման և մոնիտորինգի նպատակով:

### **2. Աշխատանքների իրականացում**

Աշխատանքներն իրականացվելու են ըստ հետևյալ փուլերի

**Փուլ 1: Երկրաբանական դաշտային աշխատանքներ**

Ցանկում ընդգրկված յուրաքանչյուր պոտենցիալ գեոթերմալ դաշտի համար պետք է իրականացվի դաշտային հետախուզություն (սքաուփինգ): Այն ներառելու է բեկումների կառուցվածքների, վերալիցքավորման հնարավոր գոտիների նույնականացում և քարտեզագրում, գեոթերմալ մակերեսային դրսևորումների (օրինակ՝ թաք և հանքային աղբյուրներ, ֆուսարոլաներ և հիդրոթերմալ փոփոխության ենթարկված քարերով գոտիներ) արձանագրում և նկարագրում: Բոլոր աղբյուրները և մակերեսային ջրերը պետք է նմուշառվեն և ենթարկվեն ընտրանքային փորձաքննության՝ ջրերի գեոքիմիական նկարագրությունը կազմելու համար: Աղբյուրների ջրերի տարիքն ու ծագումը կորոշվի հատուկ մասնագիտացված մեթոդներով, օրինակ՝ իզոտոպային հետազոտությամբ: Արդյունքում կկազմվի մակերեսի երկրաբանական քարտեզ, որը կպարունակի վերոնշյալ բոլոր ինդիկատորները: Հիմնվելով երկրաբանական հետախուզության փաստերի վրա կորոշվի ՄԹ կտրվածքների վայրն ու երկարությունը:

**Փուլ 2: Ընտրված պոտենցիալ գեոթերմալ դաշտերի մագնիսաթելյուրային զոնդավորում**

Ընտրված յուրաքանչյուր տեղանքում պետք է կատարվեն ՄԹ զոնդավորման առնվազն երկու ուղղահայաց կտրվածքներ: ՄԹ զոնդավորման արդյունքում կպատրաստվեն երկու լայնակի տրամատ՝ ժայռային գոյացության դիմադրողականության վիզուալ պատկերով: Նշված լայնակի տրամատը կպարունակի պոտենցիալ գեոթերմալ ջրակիր շերտերի և մեկուսիչ շերտերի նույնականացումը՝ դրանց հաստությամբ և դրանց գտնվելու խորությամբ:

**Փուլ 3: Ընտրված գեոթերմալ տեղանքի(ների) եռաչափ սեյսմիկ հետազոտում**

Երկրաբանական դաշտային հետախուզման և ՄԹ զոնդավորման արդյունքները հիմք կծառայեն անդրադարձված ալիքների մեթոդով եռաչափ սեյսմիկ հետազոտություն իրականացնելու համար: Եռաչափ սեյսմիկ հետազոտությունը պետք է իրականացվի ուղղահայաց կտրվածքների ցանցի տեսքով: Կտրվածքների երկարությունն ու ուսումնասիրության տարածքը կբխեն ՄԹ զոնդավորման արդյունքներից: Այս ուսումնասիրությունը հնարավորություն կտա կազմել ենթամակերեսային կառուցվածքի ուրվագիծը և եզրակացություն կատարել հնարավոր գեոթերմալ ռեզերվուարի խորության, դրա հաստության ու չափերի և բեկման խոշոր գոտիների առկայության մասին, որոնք սովորաբար ռեզերվուարի հավելյալ թափանցելիության ու հաղորդականության պատճառն են և հեշտությամբ կարող են որոշվել եռաչափ սեյսմիկ հետախուզման միջոցով:

**3. Ծրագրի մոնիտորինգ**

Ծրագրի գնահատման նպատակով ՀՎԷԷՀ-ի կողմից պետք է իրականացվի Ծրագրի իրականացման/առաջընթացի/ և արդյունքների մոնիտորինգ:

**Առաջընթացի մոնիտորինգը** հիմնված կլինի ընտրված խորհրդատվական ընկերություններից ստացված հաշվետվությունների վրա: Առաջընթացի հաժվետվությունները կազմվելու են կիսամյակային և տարեկան կտրվածքով, որոնք կներկայացվեն ՀԽ-ին և ՀԲ-ին:

**Ծրագրի արդյունքների մոնիտորինգը** մասնավորապես պետք է իրականացվի Ծրագրի մեկնարկելուց մեկ տարի հետո: Ծրագրի արդյունքների վերաբերյալ Հիմնադրամը պետք է կազմի Ավարտական հաշվետվություն և ներկայացնի ՀԲ-ին ոչ ուշ քան 2010թ հոկտեմբերի 30-ը:

**4. Ֆինանսական կառավարում, ֆինանսական հաշվետվություններ և աուդիտ**

Հիմնադրամը Ծրագրի համար պետք է ունենա ֆինանսական կառավարման համակարգ և հետևողականորեն կիրառվող հաշվապահական ստանդարտներով պատրաստված ֆինանսական

հաշվետվություններ, որոնք բավարար կերպով կարտացոլեն ծրագրի գործողությունները և Ծրագիրն իրականացնող մարմնի ֆինանսական վիճակը, ներառյալ Ծրագրի հետ կապված գործողությունները, ռեսուրսները և ծախսերը:

Բոլոր ֆինանսական հաշվետվությունները պետք է աուդիտի ենթարկվեն Համաշխարհային Բանկի համար ընդունելի անկախ աուդիտորների կողմից համաձայն աուդիտի ստանդարտների: Այդ ֆինանսական հաշվետվությունների յուրաքանչյուր աուդիտ պետք է կատարվի Հիմնադրամի մեկ ֆինանսական տարվա համար: Աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունները պետք է տրամադրվեն ՀՀ և ՀԲ-ին յուրաքանչյուր համապատասխան ժամանակահատվածի ավարտից հետո ոչ ուշ, քան վեց ամսվա ընթացքում:

**Վճարումների իրականացում** – - Գրամաշնորհային միջոցները կարող են օգտագործվել թույլատրելի ծախսերի ֆինանսավորման նպատակով գումարների տրամադրման հետևյալ մեթոդներով.

- Փոխհատուցում
- Կանխավճար
- Ուղղակի վճարում

Գումարների տրամադրման վերջնաժամկետը Ծրագրի ավարտից հետո չորս ամիս ժամանակահատվածն է, որը սահմանված է Գրամաշնորհի համաձայնագրով: Գումարների ստացման հայտերի նվազագույն գումարը կազմում է 30000 ԱՄՆ դոլար; Գումարների ստացման յուրաքանչյուր հայտի հետ պետք է ներկայացվեն հիմնավորող փաստաթղթեր, ինչպես որ դա ստորև նկարագրված է:

- **Փոխհատուցման հայտերի դեպքում.**
  - Ծախսերի թույլատրված լինելը հաստատող փաստաթղթեր 200000 և ավել ԱՄՆ դոլարի համարժեք խորհրդատվական ընկերությունների հետ պայմանագրերի դիմաց և 50000 և ավելի ԱՄՆ դոլարի համարժեք անհատական խորհրդատուների պայմանագրերի դիմաց վճարումների մասով (օրինակ՝ անդորագրերի պատճեններ, մատակարարների հաշիվ-ապրանքագրեր);
  - Ծախսերի ամփոփագրեր բոլոր ծախսերի/պայմանագրերի համար ըստ սահմանված ձևի
  - Այն պայմանագրերի դիմաց վճարումները ցանկը, որոնք ենթակա են Ասոցիացիայի նախատումնասիրությանը և պետք է ներկայացվեն սահմանված ձևով
- **Հատուկ հաշվից վճարված թույլատրելի ծախսերի դեպքում.**
  - Ծախսերի թույլատրված լինելը հաստատող փաստաթղթեր 200000 և ավել ԱՄՆ դոլարի համարժեք խորհրդատվական ընկերությունների հետ պայմանագրերի դիմաց և 50000 և ավելի ԱՄՆ դոլարի համարժեք անհատական խորհրդատուների պայմանագրերի դիմաց վճարումների մասով (օրինակ՝ անդորագրերի պատճեններ, մատակարարների հաշիվ-ապրանքագրեր);
  - Ծախսերի ամփոփագրեր բոլոր ծախսերի/պայմանագրերի համար ըստ սահմանված ձևի

- Այն պայմանագրերի դիմաց վճարումները ցանկը, որոնք ենթակա են Ասոցիացիայի նախատուամնասիրությանը և պետք է ներկայացվեն սահմանված ձևով
- Ուղղակի վճարումների հայտերի դեպքում՝ ծախսերի թույլատրելի լինելը հաստատող փաստաթղթեր, օրինակ՝ անդորագրերի պատճեններ, մատակարարների հաշիվ-ապրանքագրեր: Ծախսերի վերաբերյալ հաշվետվությունները պատրաստվում են եռամսյակային պարբերականությամբ:

## 5. Գնումներ

### Ա. Ընդհանուր

**Խորհրդատուների ընտրության ուղեցույց.** Ծրագրի համար պահանջվող և Դրամաշնորհի միջոցներից ֆինանսավորվող բոլոր ծառայությունները պետք է գնվեն հետևյալ պահանջներին համապատասխան.

ա) Խորհրդատվական ծառայությունների դեպքում՝ ըստ Համաշխարհային բանկի կողմից 2004 թվականի մայիսին հրապարակված և 2006 թվականի հոկտեմբերին վերանայված « Համաշխարհային բանկի Փոխառուների կողմից խորհրդատուների ընտրության և վարձակալության ուղեցույցի» Բաժիններ 1 և 4 –ի:

բ) Խորհրդատվական Ծառայությունների ձեռքբերման մրցույթների ժամկետները, արժեքները և այլ մանրամասներ կներառվեն գնումների պլանում, որը կազմվում է և ժամանակ առ ժամանակ լրամշակվում է «Համաշխարհային բանկի Փոխառուների կողմից խորհրդատուների ընտրության և վարձակալության ուղեցույցի» համաձայն:

### Բ. Խորհրդատուների ծառայությունների գնման հատուկ մեթոդներ

1. **Որակի և արժեքի վրա հիմնված ընտրություններ:** Բացառությամբ ստորև պարբերություն 2-ում նախատեսվածի, խորհրդատուների ծառայությունները պետք է գնվեն Որակի և արժեքի վրա հիմնված ընտրության հիման վրա շնորհված պայմանագրերի ներքո:
2. **Խորհրդատուների ծառայությունների գնման այլ մեթոդներ:** Որակի և արժեքի վրա հիմնված ընտրության մեթոդից տարբեր հետևյալ մեթոդները կարող են օգտագործվել խորհրդատուների ծառայությունների գնման նպատակով այն առաջադրանքների համար, որոնք նախատեսված են Գնումների պլանում՝ ա) Խորհրդատուների որակների վրա հիմնված ընտրություն, բ) Անհատ խորհրդատուների ընտրություն, և գ) Միակ աղբյուրից գնումների ընթացակարգեր Անհատ խորհրդատուների ընտրության համար:

**Հավելված 1 - ՀՀ կառավարության որոշում**

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՈՐՈՇՈՒՄ  
28 ապրիլի 2005 թվականի թիվ 799-Ն

«ՁԵՐՄԱՍՏԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՐՄԻՆՆԵՐԻՆ  
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԾԻԳ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԵՎ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Դադարեցնել «Ձերմամատակարարման և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին աջակցության ծրագրեր ԾԻԳ» պետական հիմնարկի (այսուհետ՝ ԾԻԳ) գործունեությունը:
2. Հիմնադրել Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ /այսուհետ՝ Հիմնադրամ/:
3. Հաստատել՝  
ա/ Հիմնադրամի կանոնադրությունը՝ համաձայն N1 հավելվածի,  
բ/ Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի:
4. Որպես հիմնադրի ներդրում Հիմնադրամին տրամադրել ԾԻԳ-ին ամրացված գույքը (մնացորդային արժեքով)՝ սեփականության իրավունքով, համաձայն N3 հավելվածի:
5. Սահմանել, որ

ա/ հիմնադրամի նպատակն է՝ նպաստել Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում ներդրումների իրականացմանը, խթանել Հայաստանի Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում շուկայի զարգացմանը, նպաստել շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա տեխնաձին ազդեցության նվազեցմանը, մշակել էներգետիկ անվտանգության, էներգետիկ համակարգի

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

---

հուսալիության աստիճանի բարձրացմանն ուղղված մեխանիզմներ, ՀՀ կառավարության որոշումների հիման վրա պետության հետ կնքվող գործակալության պայմանագրի համաձայն ոլորտի զարգացմանը խթանող վարկային և դրամաշնորհային ծրագրերի իրականացումը կազմակերպելը.

բ/ Հիմնադրամի աշխատողներ աշխատանքի ընդունելու ժամանակ նախապատվությունը տրվում է լուծարվող ԾԻԳ-ի աշխատողներին՝ փոխադրման կարգով,

գ) Ձերմամատակարարման և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին աջակցության ծրագրերի կառավարման խորհրդի լիազորություններն իրականացնում է հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը:

6. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարին՝

ա) սահմանված կարգով կազմակերպել ԾԻԳ-ի լուծարման գործընթացը,

բ) Հայաստանի Հանրապետության անունից Հիմնադրամի հետ կնքել գործակալության պայմանագիր Հայաստանի Հանրապետության և Սիջազգային զարգացման ընկերակցության միջև 2003թ. ապրիլի 3-ին ստորագրված «Կանխավճար քաղաքային ջերմամատակարարման առաջարկված ծրագրի նախապատրաստման համար No PPF Q 353-0-AM» Նամակ-համաձայնագրի շրջանակներում ծրագրի իրականացման վերաբերյալ, որպես գործակալական վարձատրություն ընթացիկ տարում տրամադրելով «ՀՀ 2005թ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 08 խմբի 02 ենթախմբի «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ձերմամատակարարման և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին աջակցության ծրագիր» ծրագրով նախատեսված միջոցներից 64 մլն դրամ, ինչպես նաև նույն նամակ-համաձայնագրի շրջանակներում ԾԻԳ-ի կողմից կնքված փոխառության, ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման պայմանագրերով պարտատիրոջ իրավունքների իրականացումը գործակալության պայմանագրով լիազորել հիմնադրամին:

7. ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝ 5-օրյա ժամկետում ՀՀ կառավարության քննարկմանն առաջարկություն ներկայացնել Հիմնադրամին տարածք հատկացնելու վերաբերյալ:

8. Դադարեցնել ՀՀ վարչապետի 29 դեկտեմբերի 2000թ. N861 որոշման 1 կետով ստեղծված՝ Ձերմամատակարարման և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին աջակցության ծրագրերի կառավարման խորհրդի լիազորությունները:

9. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հավելված 2 - Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի  
կանոնադրություն**

ՀԱՎԵԼՎԱԾ 1  
ՀՀ Կառավարության  
22 սեպտեմբերի N 1626-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒՄԻ ԹՅՈՒՆ  
**Հ Ի Մ Ն Ա Գ Ի Ա Մ Ի**

Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**1. Ընդհանուր դրույթներ**

1. Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) հիմնադրի կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող, ոչ առևտրային, շահույթ ստանալու նպատակ չիետապնդող կազմակերպություն է:
2. Հիմնադրամն ստեղծվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Հիմնադրամների մասին» և «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներին համապատասխան և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, օրենքներով, Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշումներով և սույն կանոնադրությամբ:
3. Հիմնադրամի հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ Հիմնադիր):
4. Հիմնադրամի գույքի սկզբնական արժեքը կազմում է 22,362,874 դրամ:
5. Հիմնադրամը գործում է անժամկետ:
6. Հիմնադրի և Հիմնադրամի միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:
7. Հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերում հնարավոր շահառուներ կարող են հանդիսանալ.  
ա/ բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինները, այդ թվում կառավարող այլ կազմակերպություններ և ֆիզիկական անձինք  
բ/ տնտեսական ընկերությունները (ընկերակցությունները)  
գ/ հանրակրթական դպրոցները  
դ/ ֆիզիկական անձինք:
8. Հիմնադրամն անվանվում է՝  
**հայերեն լրիվ՝** Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ  
հայերեն կրճատ՝ **ՀՎԷԷՀ**  
անգլերեն լրիվ՝ Armenia Renewable Resources and Energy Efficiency Fund  
անգլերեն կրճատ՝ R2E2 Fund  
ռուսերեն լրիվ՝ Фонд Возобновляемой Энергетики и Энергосбережения Армении  
ռուսերեն կրճատ՝ ФВЭЭА
9. Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ 375010, ք.Երևան, փող. Մելիք-Աղամյան 1:

**I. Հիմնադրամի նպատակը**

10. Հիմնադրամի նպատակն է՝  
ա/ նպատակ էն էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտներում ներդրումների իրականացմանը  
բ/ խթանել Հայաստանի էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում շուկայի զարգացմանը

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

- գ/ նպաստել շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա տեխնածին ազդեցության նվազեցմանը
- դ/ մշակել Էներգետիկ անվտանգության, Էներգետիկ համակարգի հուսալիության աստիճանի բարձրացմանն ուղղված մեխանիզմներ
- ե/ ՀՀ կառավարության կողմից համապատասխան լիազորություններ տրամադրելու դեպքում պետության հետ կնքվող գործակալության պայմանագրի հիման վրա պետության անունից կազմակերպել ոլորտի զարգացմանը խթանող վարկային և դրամաշնորհային ծրագրերի իրականացումը:

**II. Հիմնադրամի գործունեությունը**

11. Հիմնադրամն իրականացնում է հետևյալ գործունեությունը.

- ա/ մասնակցություն Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի քաղաքականության մշակմանը,
- բ/ Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի շուկայի զարգացմանն ուղղված օրենսդրական բարեփոխումների առաջարկությունների ներկայացում
- գ/ աջակցություն Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի զարգացումը խթանող նոր արտադրությունների ստեղծմանը և ծառայությունների կազմակերպմանը
- դ/ Էներգետիկ ծառայություններ մատուցող ընկերությունների, ֆինանսական կառույցների և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների ուսուցում և կարողությունների հզորացում կապված Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում ներդրումների կատարման հետ
- ե/ Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի նոր տեխնոլոգիաների վերաբերյալ հանրային իրազեկում
- զ/ Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում վարկային և դրամաշնորհային ծրագրերի իրականացման կազմակերպում ըստ համապատասխան միջազգային պայմանագրերի և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տրամադրված լիազորությունների:
- է/ Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտներում ֆինանսավորման կազմակերպում
- ը/ Բնակելի և արդյունաբերական Էներգախնայողության ծրագրերի ֆինանսավորում
- թ/ Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ծրագրերի ֆինանսավորում՝ վարկերի կամ դրամաշնորհների տրամադրման միջոցով
- ժ/ Աջակցություն Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի զարգացման միջոցով շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա տեխնածին ազդեցության նվազեցմանը, ներառյալ Կիտոյի արձանագրության Մաքուր զարգացման մեխանիզմի ծրագրերի բացահայտումով:
- ի/ Ազգային էներգետիկ անվտանգության բարձրացմանն ուղղված այլ միջոցառումների իրականացում
- լ/ Հիմնադրամին ներկայացվող ծրագրերի փորձաքննում և հաստատում, դրանց իրականացման աշխատանքների ֆինանսավորում, խորհրդատուների, մատակարարների և կապալառուների ընտրության նպատակով մրցույթների նախապատրաստում (տեխնիկական առաջադրանքների և մրցութային փաստաթղթերի պատրաստում) և կազմակերպում, ծրագրի իրականացման հետ կապված բոլոր տեսակի պայմանագրերի նախապատրաստում և ստորագրում
- խ/ Ծրագրերի իրականացման վերաբերյալ հաշվետվությունների պատրաստում ու համապատասխան կազմակերպություններին ներկայացում,
- ծ/ Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման, կապալառուի նկատմամբ վերահսկողության իրականացում
- կ/ Ծրագրի շրջանակներում վճարումների կառավարում:

**III. Հիմնադրամի իրավունակությունը**

12. Հիմնադրամը ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

13. Հիմնադրամի իրավունակությունը ծագում է դրա պետական գրանցման պահից և դադարում է Հիմնադրամի լուծարման պետական գրանցման պահից:
14. Հիմնադրամի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ օրենք), միջազգային համաձայնագրերով, Հոգաբարձուների խորհրդի որոշումներով և սույն կանոնադրությամբ:
15. Հիմնադրամը, միջազգային համաձայնագրի շրջանակներում ծրագիր իրականացնելու դեպքում, որպես սույն կանոնադրության II-րդ բաժնում նշված Ծրագրեր իրականացնող իրավաբանական անձ օգտվում է միջազգային համաձայնագրերով սահմանված արտոնություններից:
16. Հիմնադրամը՝
- 1) որպես սեփականություն ունի առանձնացված գույք,
  - 2) ունի ինքնուրույն հաշվեկշիռ,
  - 3) կարող է Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների բանկերում բացել բանկային հաշիվներ՝ Հայաստանի Հանրապետության դրամով և /կամ/ արտարժույթով, պետության հետ կնքվող գործակալության պայմանագրերի համաձայն կառավարել պայմանագրերով նախատեսված համապատասխան բանկային հաշիվները,
  - 4) ունի իր անվամբ և Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով կլոր կնիք, դրոշմակնիք ,ձևաթուղթ, ինչպես նաև կարող է ունենալ խորհրդանիշ ,
  - 5) կարող է իր անունից, սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության նպատակներին համապատասխան, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ և կրել այդ գործունեության հետ կապված պարտականություններ,
  - 6) կարող է դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
17. Հիմնադրամն օրենքի սահմաններում, իր կանոնադրությամբ նախատեսված ոլորտների և խնդիրների իրականացման համար, իրավունք ունի՝
- 1) օրենքով չարգելված բոլոր ձևերով ձեռք բերել գույք, տիրապետել, օգտագործել և տնօրինել դրանք ու դրանցից ստացված եկամուտը,
  - 2) նյութապես աջակցել ֆիզիկական և իրավաբանական անձանց օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով
  - 3) ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառությունների, վարկերի ներգրավմամբ,
  - 4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագրեր և կրել դրանց հետ կապված պարտավորություններ,
  - 5) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից օրենքով սահմանված կարգով ստանալ տեղեկություններ,
  - 6) ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (ներկայացուցչություններ, մասնաճյուղեր) և հիմնարկներ
  - 7) ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակից՝ ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնելու նպատակով,
  - 8) իրականացնել օրենքով չարգելված այլ գործունեություն:  
Հիմնադրամն ունի օրենքով սահմանված այլ իրավունքներ:  
Հիմնադրամը ծրագրերի շրջանակներում կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝  
ա) ֆինանսական և իրավական խորհրդատվական ծառայությունների մատուցում,  
բ) ֆինանսական միջոցադրություն,  
գ) հավատարմագրային գործառնությունների իրականացում,  
դ) Էներգետիկական սարքավորումների առևտուր:
18. Հիմնադրամը պարտավոր է՝
- 1) գործել Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, օրենքներին ու այլ իրավական ակտերին, ինչպես նաև սույն կանոնադրությամբ համապատասխան,
  - 2) օրենսդրությամբ սահմանված կարգով վարել հաշվապահական և հարկային հաշվառում, գործավարություն, իրականացնել Հիմնադրամի փաստաթղթերի պահպանումը
  - 3) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնել համապատասխան մարմիններին,
  - 4) իրականացնել օրենսդրությամբ սահմանված այլ պարտականություններ:
19. Հիմնադրամին պատկանող քաղաքացիական իրավունքները, ներառյալ դրա պաշտպանության իրավունքը, Հիմնադրամն իրականացնում է սեփական հայեցողությամբ:
20. Հիմնադրամի իրավունքները կարող են սահմանափակվել օրենքով նախատեսված դեպքերում և միայն օրենքով սահմանված կարգով:

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

21. Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում Հիմնադրամի պարտականությունների, իսկ Հիմնադրամը՝ հիմնադրի պարտավորությունների համար: Հիմնադրամի հիմնադիրը պատասխանատվություն է կրում մինչև Հիմնադրամի պետական գրանցումը ծագած՝ նրա ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:

**IV. Հիմնադրամի գույքը և ծախսերը**

22. Հիմնադրամը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հիմնադրի՝ հիմնադրամին հանձնված գույքը հիմնադրամի սեփականությունն է: Այդ գույքը Հիմնադրամն օգտագործում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակով:

23. Հիմնադրամը կարող է որպես սեփականություն ունենալ անշարժ և շարժական գույք, դրամական միջոցներ՝ Հայաստանի Հանրապետության դրամով և /կամ/արտարժույթով:

24. Հիմնադրամի գույքի ձևավորման աղբյուրներն են

- 1) հիմնադրի ներդրումը
- 2) ֆիզիկական և իրավաբանական անձանց այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների կողմից նվիրատվությունները, նվիրաբերությունները,
- 3) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից դրամական մուտքերը,
- 4) դրամաշնորհները,
- 5) հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,
- 6) օրենքով չարգելված այլ միջոցներ:

25. Հիմնադրամի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ իր հիմնադիրների, հիմնադրամի մարմինների անդամների, ինչպես նաև հիմնադրամի աշխատողների, բացառությամբ աշխատողների աշխատավարձի և հիմնադրամի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված՝ փոխահատուցման ենթակա ծախսերի:

26. Հիմնադրամի ծախսերն են՝

- 1) կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսեր,
- 2) վարչակառավարչական ծախսեր:

Հիմնադրամի վարչակառավարչական ծախսերը կազմում են հիմնադրամի տարեկան ընդհանուր ծախսերի 20%-ը:

27. Հիմնադրամը պարտավոր է ամեն տարի հրապարակել հաշվետվություն իր գույքի օգտագործման մասին:

**V. Հիմնադրամի կառավարման մարմինները**

28. Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է իր մարմինների միջոցով: Հիմնադրամի մարմիններն են՝

ա/ հոգաբարձուների խորհուրդը

բ/ տնօրենը:

**V.I. Հոգաբարձուների խորհուրդ**

29. Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ):

30. Խորհուրդն ունի 12 անդամ: Խորհրդի անդամները չեն կարող լինել հիմնադրամի այլ մարմնի անդամ:

31. Խորհրդի առաջին կազմը կազմավորում է հիմնադիրը: Խորհրդի անդամների լիազորությունների ժամկետը երկու տարի է: Միևնույն անձը որպես խորհրդի անդամ կարող է առաջադրվել առանց սահմանափակման:

32. Խորհրդի անդամի համար կարող է սահմանվել փոխահատուցում այն ծախսերի համար, որոնք կապված են Խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Փոխահատուցման վճարման կարգը սահմանում է Խորհուրդը:

33. Խորհրդի անդամի լիազորությունները դադարում են.

ա/ դիմումի հիման վրա՝ դիմումի ներկայացման հաջորդ օրվանից,

բ/ իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4-ով,

գ/ մահվան կամ անգործունակ ճանաչվելու դեպքում,

դ/ ժամկետը լրանալիս, եթե այն չի երկարաձգվել:

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

34. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցել է Խորհրդի անդամների կեսից ավելին: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ: Սույն կանոնադրության 38 կետի ե/, գ/, ը/ ենթակետերով նախատեսված դեպքերում որոշումներն ընդունվում են խորհրդի կազմի 2/3-ի համաձայնությամբ:
35. Նիստերը գումարվում են պարբերաբար՝ բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ՝ խորհրդի նախագահի կողմից: Խորհրդի նիստեր կարող են հրավիրվել նաև խորհրդի անդամների 1/3-ի առաջարկությամբ խորհրդի նախագահի կողմից, պահանջը ներկայացնելուց հետո 30 օրվա ընթացքում: Եթե նշված ժամկետում Խորհրդի նախագահը նիստ չի հրավիրում, ապա նիստ կարող են հրավիրել մնացած պահանջ ներկայացրած անձինք: Խորհրդի նիստերը կարող են անցկացվել էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ:
36. Խորհրդի նիստերն օրենսդրությամբ սահմանված կարգով արձանագրվում են:
37. Եթե Խորհրդի նիստում քննարկվում է խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա այդ անդամը քվեարկությանը չի մասնակցում: Եթե գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարցերը կրում են պարբերական կամ անընդհատ բնույթ, ապա տվյալ անդամի լիազորությունների դադարեցման հարց է դրվում Խորհրդի քննարկմանը: «Գույքային և այլ շահեր» հասկացությունը և դրա առաջացման հիմքերը սահմանվում են Խորհրդի որոշմամբ:
38. Խորհրդի իրավասությանն է պատկանում
- ա/ հիմնադրամի ռազմավարական ծրագրի(երի) հաստատումը,
  - բ/ հիմնադրամի բյուջեի, նրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների, գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը.
  - գ/ հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը,
  - դ/ հիմնադրամի վերականգնակերպման մասին որոշման ընդունումը,
  - ե/ խորհրդի նոր անդամների ընտրությունը և խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը,
  - զ/ հոգաբարձուների խորհրդի նախագահի, հիմնադրամի տնօրենի ընտրությունը և նրա լիազորությունների դադարեցումը, այդ թվում նաև վաղաժամկետ,
  - է/ հիմնադրամի ղեկավար անձնակազմի հաստատում՝ տնօրենի ներկայացմամբ,
  - ը/ հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություն կամ լրացում կատարելու, նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին որոշումների ընդունումը,
  - թ/ տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման և դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը,
  - ժ/ հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը,
  - ժա/ եռամսյա պարբերականությամբ Հիմնադրամի տնօրենի հաշվետվությունների լսումը,
  - ժբ/ իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը,
  - ժգ/ Հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի ընտրությունը,
  - ժդ/ իրականացնում է օրենքով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:
- Խորհուրդն իրավունք ունի ծանոթանալ Հիմնադրամի գործունեության հետ առնչվող բոլոր փաստաթղթերին:
39. Խորհրդի իրավասության հարցերը չեն կարող փոխանցվել այլ մարմնի:
- 40. Խորհրդի Նախագահը**
- 1) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները
  - 2) գումարում է խորհրդի նիստերը և նախագահում է դրանք.
  - 3) կազմակերպում է նիստերի արձանագրությունների վարումը:
- Խորհրդի նախագահին ընտրում են խորհրդի անդամներն իրենց կազմից:
41. Նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները Խորհրդի որոշմամբ կատարում է անդամներից մեկը:

**V. II Հիմնադրամի տնօրենը**

42. Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը: Տնօրենը կազմակերպում է Խորհրդի որոշումների կատարումը:
43. Տնօրենի իրավասությանն են պատկանում Հիմնադրամի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ օրենքով և սույն կանոնադրությամբ Խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերի:
44. Հիմնադրամի տնօրենն առաջին անգամ պաշտոնում նշանակվում է Հիմնադրի կողմից:
45. Տնօրենը նշանակվում է 4 տարի ժամկետով, որը կարող է երկարաձգվել:  
Տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով, սույն կանոնադրությամբ:
46. Հիմնադրամի տնօրենը՝
- 1) տնօրինում է Հիմնադրամի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, Հիմնադրամի անունից կնքում է գործարքներ.
  - 2) ներկայացնում է Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,
  - 3) գործում է առանց լիազորագրի և տալիս է լիազորագրեր,
  - 4) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր /այդ թվում՝ աշխատանքային/,
  - 5) բանկերում բացում է Հիմնադրամի հաշվարկային /այդ թվում՝ արտարժույթային/ և այլ հաշիվներ,
  - 6) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ու հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, հիմնադրամի վարչակազմակերպչական կառուցվածքը և հաստիքացուցակը.
  - 7) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
  - 8) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Հիմնադրամի աշխատողներին.
  - 9) Հիմնադրամի աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.
  - 10) իրականացնում է օրենքով, սույն կանոնադրությամբ և հիմնադրի հանձնարարականներով նախատեսված այլ լիազորություններ:
47. Տնօրենն այլ կազմակերպությունում կարող է վճարովի պաշտոն զբաղեցնել միայն Խորհրդի համաձայնությամբ:

**VI. Հաշվապահական հաշվառումը և վերահսկողությունը**

48. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հիմնադրամը վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում է ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններ, հարկային և այլ պարտադիր վճարների հաշվարկներ, հայտարարագրեր:
49. Տնօրենը պատասխանատվություն է կրում Հիմնադրամի հաշվապահական հաշվառման կազմակերպման, նրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված՝ պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև հիմնադրամի մարմիններին ու այլ անձանց տրամադրվող տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին, սույն կանոնադրությանը համապատասխան:
50. Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների աուդիտը կատարվում է անկախ աուդիտորների կողմից՝ առնվազն տարեկան մեկ անգամ: Խորհրդի անդամների 1/3-ի պահանջով կարող է անցկացվել արտահերթ աուդիտորական ստուգում: Աուդիտորները ընտրվում են մրցութային կարգով և հաստատվում են Խորհրդի կողմից:
51. Հիմնադրամի կողմից օրենքի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև այլ իրավասու պետական մարմինների կողմից՝ իրենց իրավասության սահմաններում և օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերին համապատասխան:
52. Յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտին հաջորդող 6 ամսվա ընթացքում Հիմնադրամն իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տեղեկություններ հրապարակող մասնուլում պարտավոր է հրապարակել՝
- 1) հաշվետվություն իր գործունեության մասին
  - 2) իր տարեկան ֆինանսական հաշվետվությունները

- 3) ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ ատոլիտն իրականացնող անձի եզրակացությունը(եթե Հիմնադրամի ակտիվների արժեքը գերազանցում է 10 մլն. դրամը):
53. Հիմնադրամը հաշվետվությունը հրապարակելուց հետո 15 օրվա ընթացքում օրենքով սահմանված կարգով տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը: Սահմանված ժամկետում հաշվետվությունները թերի հրապարակելու դեպքում նախարարության կողմից Հիմնադրամը զգուշացվում է թերությունների վերացման մասին:

## **VII. Հիմնադրամի վերակազմակերպումը և լուծարումը**

54. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել միայն Հիմնադրամի միացման և միաձուլման ձևով, Խորհրդի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:
55. Հիմնադրամը լուծարելու մասին որոշումը կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումով: Հիմնադրամը լուծարվում է օրենքով սահմանված դեպքերում և կարգով:
56. Լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո, ինչպես նաև պարտատերերի նկատմամբ պարտավորություններ չունենալու դեպքում՝ Հիմնադրամի գույքն ուղղվում է Հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

**Հավելված 3 - Հիմնադրամի ՀԽ կազմ**

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԳՐԱՄԻ  
ՀՈԳԱԲԱՐՉՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅՉԱԿԱՆ ԿԱԶՄԸ

ՀՀ Էներգետիկայի նախարար

ՀՀ վարչապետի խորհրդական

ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչ

ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ներկայացուցիչ

ՀՀ բնապահպանության նախարարության ներկայացուցիչ

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչ

ՀՀ քաղաքաշինության նախարարության ներկայացուցիչ

ՀՀ տարածքային կառավարման նախարարության ներկայացուցիչ

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի անդամ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի ներկայացուցիչ

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչ (2)

**Հավելված 4 - Հիմնադրամի ՀԽ աշխատակարգ**

---

---

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է  
Հիմնադրամի ՀԽ-ի  
09.01.2006թ. No. 01 նիստի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒՅԱՆ  
ՀԻՄՆԱԳՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՉՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԳԻ  
Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ**

**1. Ընդհանուր դրույթներ**

1. Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ): Խորհուրդը հասարակական հիմունքներով աշխատող մարմին է :
2. Խորհուրդը ստեղծվել է ՀՀ կառավարության 28 ապրիլի 2005թ N 799-Ն որոշմամբ, իսկ անհատական կազմը հաստատվել է ՀՀ վարչապետի 25 հուլիսի 2005թ N 572-Ա որոշմամբ:
3. Խորհուրդն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով, Հիմնադրամի կանոնադրությամբ և սույն աշխատակարգով:
4. Խորհուրդն իրականացնում է «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության որոշումներով և Հիմնադրամի կանոնադրությամբ սահմանված գործառնականություններ: Արտաքին ֆինանսավորման ծրագրերով Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող միջոցների հաշվին Հիմնադրամի կողմից ծրագրեր իրականացնելիս Խորհուրդը հանդես է գալիս որպես տվյալ ծրագրի կառավարման Խորհուրդ և համակարգում է Ծրագրի իրականացման կապակցությամբ գործողությունների իրականացումը:

**2. Խորհրդի գործունեության կարգը**

5. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցել է Խորհրդի անդամների կեսից ավելին:
6. Նիստերը գումարվում են պարբերաբար՝ բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ՝ Խորհրդի նախագահի կողմից: Խորհրդի նիստեր կարող են հրավիրվել նաև արտահերթ Խորհրդի անդամների 1/3-ի առաջարկությամբ Խորհրդի նախագահի կողմից, պահանջը ներկայացնելուց հետո 30 օրվա ընթացքում: Եթե նշված ժամկետում Խորհրդի նախագահը նիստ չի հրավիրում, ապա նիստ կարող են հրավիրել նման պահանջ ներկայացրած անձինք:
7. Խորհրդի նիստերը կարող են անցկացվել նաև հարցման կարգով՝ էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ:
8. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է: Խորհրդի նոր անդամների ընտրության, Խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, Խորհրդի նախագահի, հիմնադրամի տնօրենի ընտրության և նրա լիազորությունների դադարեցման,

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություն կամ լրացում կատարելու, նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին որոշումներն ընդունվում են Խորհրդի կազմի 2/3-ի համաձայնությամբ:

9. Խորհրդի այն անդամը, որը համաձայն չէ Խորհրդի որոշման հետ գրավոր ներկայացնում է իր հատուկ կարծիքը, որը կցվում է որոշմանը և նշվում է նիստի արձանագրության մեջ:
10. Եթե Խորհրդի նիստում քննարկվում է Խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, սմուսնու ծնող զավակ, եղբայր և քույր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա այդ անդամը քվեարկությանը չի մասնակցում: Եթե գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարցերը կրում են պարբերական կամ անընդհատ բնույթ, ապա տվյալ անդամի լիազորությունների դադարեցման հարց է դրվում Խորհրդի քննարկմանը:
11. Խորհրդի անդամները նիստի անցկացման օրվա, վայրի, ժամի և նիստի օրակարգի մասին տեղեկացվում են նիստի անցկացման օրվանից առնվազն 5 օր առաջ: Նիստին ներկայացվող օրակարգին առնչվող համապատասխան փաստաթղթերը ներկայացվում է հիմնադրամի կամ օրակարգում ներառվող հարցի հետ առնչվող այլ անձի կողմից, իսկ սույն աշխատակարգով նախատեսված դեպքերում՝ նիստի հրավիրում նախաձեռնող Խորհրդի անդամի կողմից:
12. Յուրաքանչյուր նիստ սկսվում է նիստի օրակարգի հաստատմամբ և նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ հիմնադրամի տնօրենի զեկուցմամբ:
13. Խորհրդի նիստերն սահմանված կարգով արձանագրվում են: Արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 5 օրվա ընթացքում՝ առնվազն երկու օրինակով, որը ստորագրում են տվյալ նիստին մասնակցող բոլոր անդամները:
14. Արձանագրության մեջ նշում են.
  - նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը,
  - նիստին մասնակցելու իրավունք ունեցող անձանց քանակը,
  - նիստին մասնակցած անձանց քանակը,
  - նիստի օրակարգը:

Արձանագրության մեջ պարունակվում են նիստում կայացած ելույթների հիմնական, սեղմ դրույթները, քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները, նիստի ընդունած որոշումները:

15. Խորհրդի նիստերին պարտադիր մասնակցում է հիմնադրամի տնօրենը: Նիստերին կարող են մասնակցել նաև քաղաքացիներ, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական և ոչ պետական կազմակերպությունների, ՋԼՄ-ների ներկայացուցիչներ:

**3. Խորհրդի անդամների լիազորությունների ժամկետը և ընտրության կարգը**

16. Խորհուրդն ունի 12 անդամ: Խորհրդի առաջին կազմը կազմավորում է հիմնադիրը, իսկ կազմի հետագա փոփոխությունները իրականացվում են Խորհրդի կողմից: Խորհրդի անդամները չեն կարող լինել հիմնադրամի այլ մարմնի անդամ:
17. Խորհրդի անդամների լիազորությունների ժամկետը երկու տարի է: Մինչև անձը որպես Խորհրդի անդամ կարող է առաջադրվել առանց սահմանափակման:

18. Խորհրդի անդամի լիազորությունները դադարում են.

ա/ դիմումի հիման վրա՝ դիմումի ներկայացման հաջորդ օրվանից,

բ/ իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ հոգաբարձուների Խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4-ով,

գ/ մահվան կամ անգործունակ ճանաչվելու դեպքում,

դ/ ժամկետը լրանալիս, եթե այն չի երկարաձգվել:

Խորհրդի անդամի հիմնական աշխատանքից ազատվելու հաջորդ օրվանից նրա լիազորությունները համարվում են դադարած, որի վերաբերյալ Խորհրդի կողմից կայացվում է որոշում:

19. Խորհրդի անդամի լիազորությունները համարվում են դադարած դիմում տալու դեպքում՝ այն Խորհրդի նախագահին ներկայացնելու հաջորդ օրվանից, իսկ սույն աշխատակարգի 18 կետի բ/, դ/ ենթակետերով նախատեսված դեպքերում՝ Խորհրդի նոր կազմի ընտրության նիստին հաջորդող օրվանից:

20. Խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու դեպքում թեկնածու առաջադրում է Հիմնադրամի հիմնադիրը, իսկ եթե թափուր տեղ առաջանալու օրվանից 30 օրվա ընթացքում թեկնածու չի առաջադրվում, ապա այդպիսի առաջարկություն կարող է կատարել Խորհրդի ցանկացած անդամ:

21. Խորհրդի նոր անդամն ընտրվում է Խորհրդի կողմից նախկին անդամի լիազորությունների դադարման օրվանից ոչ ուշ, քան 60 օրվա ընթացքում: Եթե ոչ մի թեկնածու չի ստացել ձայների անհրաժեշտ քանակ, ապա առավելագույն ձայներ ստացած 2 թեկնածուների միջև անցկացվում է կրկնակի քվեարկություն: Ընտրված է համարվում ձայների առավել քանակ հավաքած թեկնածուն բայց ոչ պակաս քան Խորհրդի անդամների ձայների կեսից ավելին:

22. Անհրաժեշտ ձայներ չհավաքելու դեպքում ընտրությունները համարվում են չկայացած և «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի համաձայն կատարվում է նոր ընտրություն:

#### 4. Խորհրդի նախագահը և անդամները

23. Խորհրդի նախագահին ընտրում են Խորհրդի անդամներն իրենց կազմից: Խորհրդի նախագահը՝

4) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,

5) գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք կամ լիազորում է Խորհրդի այլ անդամի,

6) ստորագրում է Խորհրդի որոշումները, Խորհրդի գործունեության հետ կապված մյուս փաստաթղթերն ու գրագրությունը,

7) իրականացնում է վերահսկողություն Խորհրդի որոշումների կատարման նկատմամբ,

8) կազմակերպում է նիստերի արձանագրությունների վարումը:

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

---

Նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները Խորհրդի որոշմամբ կատարում է


Խորհրդի անդամներից մեկը:

24. Խորհրդի անդամները՝

- 1) մասնակցում են Խորհրդի աշխատանքներին,
- 2) հարցեր են ներկայացնում Խորհրդի քննարկմանը,
- 3) ներկայացնում են առաջարկություններ Խորհրդի գործունեության, նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ,
- 4) ծանոթանում և ստորագրում են նիստերի արձանագրությունները,
- 5) իրականացնում են օրենքով իրենց վերապահված այլ լիազորություններ:

25. Խորհրդի որոշմամբ կարող է նշանակվել Խորհրդի քարտուղար: Հիս քարտուղարը ապահովում է Հիս նիստերի կազմակերպումը, օրակարգի նյութերի նախապատրաստման, անհրաժեշտ փաստաթղթերի շրջանառության, ինչպես նաև որոշումների գրանցման և նիստերի անցկացման հետ կապված գործառնական իրականացումը Հիմնադրամի կողմից:

Հավելված 5 - Հիմնադրամի կազմակերպչական կառուցվածք



**Հավելված 6 - Հիմնադրամի անձնակազմի ընտրության կարգ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է  
Հայաստանի վերականգնվող  
էներգետիկայի և էներգախնայողության  
հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի  
09.01.2006թ. No. 01 նիստ

**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Վ Ե Բ Ա Կ Ա Ն Գ Ն Վ Ո Ղ Է Ն Ե Բ Գ Ե Տ Ի Կ Ա Յ Ի Ե Վ  
Է Ն Ե Բ Գ Ա Խ Ն Ա Յ Ո Ղ Ռ Ի Թ Յ Ա Ն Հ Ի Մ Ն Ա Դ Բ Ա Մ Ի Ա Ն Ձ Ն Ա Կ Ա Ձ Մ Ի  
Ը Ն Տ Բ ՈՒ Թ Յ Ա Ն Կ Ա Բ Գ**

**1. Ընդհանուր դրույթներ**

Սույն կարգը սահմանում է Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի /այսուհետ՝ Հիմնադրամ/ աշխատակիցների թափուր տեղերի համալրման նպատակով իրականացվող ընտրության կարգն ու պայմանները:

**2. Հիմնադրամի անձնակազմի ընտրությունը**

- 2.1. Հիմնադրամի աշխատակիցները բաժանվում են ղեկավար անձնակազմի, մասնագետների և սպասարկող անձնակազմի:
- 2.2. Հիմնադրամի ղեկավար անձնակազմը և մասնագետները հիմնադրամի կանոնադրությամբ և հաստիքացուցակով նախատեսված պաշտոններ զբաղեցնող անձինք են, որոնք իրենց գործունեությամբ ապահովում են հիմնադրամի կանոնադրական խնդիրների իրագործումը:
- 2.3. Հիմնադրամի սպասարկող անձնակազմը ներառում է Հիմնադրամի այն աշխատակիցներին, որոնց պարտականություններն ուղղակիորեն չեն առնչվում Հիմնադրամի կանոնադրական խնդիրների կատարման հետ:
- 2.4. Հիմնադրամի ղեկավար անձնակազմի և մասնագետների թափուր տեղերի համալրումը իրականացվում է մրցութային եղանակով՝ այդ նպատակով կազմավորված մրցութային հանձնաժողովի կողմից (հանձնաժողովի կազմը համաձայն կից հավելվածի):
- 2.5. Սպասարկող անձնակազմի համալրման նպատակով մրցույթ չի անցկացվում: Թեկնածուները ընտրվում են Հիմնադրամի տնօրենի կողմից:
- 2.6. Մրցութային հանձնաժողովը ձևավորվում է Հիմնադրամի կառավարման բարձրագույն մարմնի՝ Հոգաբարձուների խորհրդի կողմից: Մրցութային հանձնաժողովի կազմում ընդգրկվում են շահագրգիռ մարմինների և Հիմնադրամի ներկայացուցիչներ՝ այդ մարմինների ղեկավարների առաջադրմամբ:
- 2.7. Մրցույթի վերաբերյալ հայտարարությունը տրվում է հիմնադրամի կողմից, որտեղ նշվում է այն պաշտոնը, որի համալրման համար հայտարարվում է մրցույթը, մրցույթին մասնակցելու համար թեկնածուներին առաջադրվող չափանիշները, հավակնորդների մասնագիտական և աշխատանքային հմտությունների վերաբերյալ փաստաթղթերի ցանկը և դրանց ներկայացման ժամկետները:
- 2.8. Հիմնադրամը՝ ներկայացված փաստաթղթերի հիման վրա անցկացնում է թեկնածուների նախարարակալորում, որի արդյունքում կազմվում է տվյալ պաշտոնին առաջադրվող չափանիշներին առավելագույնս բավարարող թեկնածուների կարճ ցանկ՝ ընդգրկելով առավելագույնը 4 թեկնածու:
- 2.9. Գնահատման նպատակով ցուցակում ընդգրկված թեկնածուների տվյալները՝ գնահատման թերթիկների հետ միասին ներկայացվում են մրցութային հանձնաժողովի անդամներին: Հանձնաժողովի անդամների կողմից յուրաքանչյուր թեկնածուին տրված միավորների համրագումարից ձևավորվում է թեկնածուի գնահատման միավորը: Մրցույթի հաղթող է ճանաչվում առավել բարձր միավոր ստացած թեկնածուն:

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

- 2.10. Հիմնադրամի ղեկավար պաշտոնների համար դիմած և մրցույթում հաղթող ճանաչված թեկնածուները ներկայացվում են Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հաստատմանը:
- 2.11. Մրցութային հանձնաժողովի, ինչպես նաև սույն կարգով նախատեսված դեպքերում՝ Հոգաբարձուների խորհրդի որոշումների հիման վրա Հիմնադրամի տնօրենի կողմից իրականացվում է թեկնածուների աշխատանքի ընդունումը ՀՀ աշխատանքային օրենսդրությանը համապատասխան:

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի վերականգնվող  
էներգետիկայի և էներգախնայողության  
հիմնադրամի անձնակազմի ընտրության կարգի

**ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄ**

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի անձնակազմի ընտրության մրցութային հանձնաժողովի

h/h	Ներկայացնող մարմնի, կազմակերպության անվանումը	Ներկայացուցիչների թիվը
1.	Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի քարտուղար	1
2.	Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ	1
3.	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	1
4.	ՀՀ ֆինանսների նախարարություն	1
5.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	1
<b>ԸՆԴԱՍԵՆԸ</b>		<b>5</b>

---

**ՀԱՎԵԼՎԱԾ 7- Հիմնադրամի պաշտոնների նկարագրություններ**

---

**Պաշտոնը՝ Իրականացման և մոնիտորինգի համակարգող**

**1. Հիմնական առաջադրանքները**

1.1. Իրականացման և մոնիտորինգի համակարգողը իրականացնում է.

- ներդրումային ծրագրերի, մասնավորապես՝ քաղաքային դպրոցների ջերմամատակարարման վերականգնման և անապահով ընտանիքների բնակարանների գազի վրա հիմնված ջեռուցման ներդրումային ծրագրերի գնահատման և իրականացման աշխատանքների անմիջական կազմակերպում, ներառյալ.
  - o տեխնիկական առաջադրանքների, մասնագրերի, աշխատանքների ծավալների կազմումը՝ մրցութային փաստաթղթերում ներառելու նպատակով,
  - o մրցութային առաջարկների վերաբերյալ մասնագիտական եզրակացության տրամադրումը,
  - o պայմանագրերի կատարման վերահսկումը,
  - o շինարարական աշխատանքների, ապրանքների և ծառայությունների՝ պայմանագրերին համապատասխան որակի և քանակի վերահսկումը և սահմանված կարգով ընդունումը,
- Հիմնադրամի կողմից իրականացվող այլ ծրագրերի ներդրումային բաղադրիչների իրականացման կազմակերպում,
- Մոնիտորինգի և վերահսկման աշխատանքների կազմակազմակերպում հիմնված՝
  - o Մասնակից ֆինանսական հաստատության /ՄՖՀ/ հաշվետվությունների վրա.
  - o Պատահական ընտրանքով ընտրված տեղամասերում և փաստաթղթերով ստուգումների վրա,
- Իրականացվող ծրագրերի ընթացքի և արդյունքների մասին անհրաժեշտ հաշվետվությունների ներկայացում,
- Համագործակցություն հիմնադրամի այլ մասնագետների հետ:

**2. Որակավորման պահանջները**

2.1 Իրականացման և մոնիտորինգի համակարգողը պետք է.

- ունենա բարձրագույն ինժեներական / տնտեսագիտական կրթություն,
- տիրապետի Հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի իրականացման համար բավարար գիտելիքների,
- ունենա ոչ պակաս 5 /հինգ/ տարվա համապատասխան աշխատանքային փորձ, ինչպես նաև կառավարման հմտություններ, ունենա մարդկանց հետ շփվելու և բանակցելու ունակություններ ու համապատասխան հմտություններ,
- տիրապետի համակարգչային տեխնիկային (MS Office, Internet և այլն)

2.2 Նմանատիպ աշխատանքներում փորձառությունը և համապատասխան որակավորման դասընթացներին մասնակցությունը և անգլերենի իմացությունը ցանկալի է:

**3. Վարչական ենթակայություն**

Վարչականորեն հաշվետու է հիմնադրամի տնօրենին և գտնվում է նրա անմիջական ենթակայության ներքո:

**4. Այլ պարտականություններ**

Իրականացման և մոնիտորինգի համակարգողը պարտավոր է.

- կատարել կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ, ինչպես նաև ղեկավարի՝ օրենսդրությամբ չհակասող և Ծրագրերի իրականացմանն առընչվող այլ հանձնարարություններ,

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

- առաջարկություններ ներկայացնել իր պաշտոնական պարտականությունների իրականացման և վերահսկման արդյունավետ համակարգերի ներդրման, ինչպես նաև գործող համակարգի բարելավման համար,
- առաջնորդվել հաստատված ընթացակարգերով և կանոնակարգերով, պահպանել գործավար էթիկայի նորմերը, աշխատանքային կարգապահությունը, հետևել իրեն հատկացված հիմնադրամի գույքի պահպանությանը,
- չտարածել աշխատանքի ընթացքում ստացած ցանկացած ծառայողական տեղեկատվություն՝ առանց դեկավարի նախնական համաձայնության:

**Պաշտոնը՝ Իրավաբան**

**1. Հիմնական առաջադրանքները**

1.1 Իրավաբանը իրականացնում է.

- Հիմնադրամի գործունեության ընթացքում անհրաժեշտ իրավական բնույթի փաստաթղթերի օրինակելի ձևերի (պայմանագրեր, հրամաններ, որոշումներ և այլն) մշակում,
- Պայմանագրերի ուսումնասիրում և օրենսդրությանը դրանց համապատասխանության վերաբերյալ եզրակացություն,
- ՄՖՀ-ների կողմից ներկայացված ծրագրերի ուսումնասիրություն և համապատասխան իրավաբանական եզրակացության տրամադրում ՖՂ-ին,
- Մասնակցություն ՄՖՀ ընտրության գործընթացներին՝ իրավական բնույթի հարցերի պարզաբանման նպատակով,
- Հիմնադրամի կողմից ֆինանսավորվող և իրականացվող ծրագրերի հետ կապված օրենսդրական և իրավական հնարավոր խոչընդոտների ուսումնասիրում և դրանց հաղթահարման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:
- Հիմնադրամի ամենօրյա գործունեության ընթացքում օրենսդրությամբ պահանջվող ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում,
- ՀՀ օրենսդրության՝ հիմնադրամի գործունեությանն առնչվող փոփոխությունների վերաբերյալ ժամանակին տեղեկացում:

1.2 Պարտականությունների շրջանակներում կատարում է տնօրենի այլ հանձնարարականները:

**2. Որակավորման պահանջները**

Իրավաբանը պետք է ունենա

- բարձրագույն իրավաբանական կրթություն,
- ՀՀ օրենսդրության գերազանց իմացություն,
- ոչ պակաս 5/հինգ/ տարվա աշխատանքային փորձ,
- աշխատանքի ընթացքում առաջացած խնդիրների հաղթահարման կարողություններ, մարդկանց հետ հաղորդակցվելու զարգացած ունակություններ,
- Համակարգչային տեխնիկային տիրապետում,
- Հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուների իմացությունը պարտադիր է,
- Միջազգային մամուտի պ ծրագրերում մասնակցության փորձառություն:

**3. Վարչական ենթակայություն**

Իրավաբանը վարչականորեն հաշվետու է հիմնադրամի Հիմնադրամի տնօրենին և նրա անմիջական ենթակայության ներքո:

**4. Այլ պարտականություններ**

Իրավաբանը պարտավոր է.

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

- կատարել կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ, ինչպես նաև ղեկավարի՝ օրենսդրությանը չհակասող և Ծրագրերի իրականացմանն առընչվող այլ հանձնարարություններ,
- առաջարկություններ ներկայացնել իր պաշտոնական պարտականությունների իրականացման և վերահսկման արդյունավետ համակարգերի ներդրման, ինչպես նաև գործող համակարգի բարելավման համար,
- առաջնորդվել հաստատված ընթացակարգերով և կանոնակարգերով, պահպանել գործավար էթիկայի նորմերը, աշխատանքային կարգապահությունը, հետևել իրեն հատկացված հիմնադրամի գույքի պահպանությանը,
- չտարածել աշխատանքի ընթացքում ստացած ցանկացած ծառայողական տեղեկատվություն՝ առանց ղեկավարի նախնական համաձայնության:

**Պաշտոնը՝ Ինժեներ**

**1. Հիմնական առաջադրանքները**

1.1 Ինժեներն իրականացնում է.

- նախատեսվող և իրագործվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի տեխնիկական լուծումների առաջադրում,
- որոշակի ծրագրերի և նախագծային լուծումների վերաբերյալ առաարկների ներկայացում,
- անհրաժեշտ ներդրումների գնահատում,
- նախագծային և շինարարական աշխատանքների ընթացքի համակարգում,
- տեխնիկական հսկողության աշխատանքների նկատմամբ վերահսկողության իրականացում,
- տեղանք այցելություններ և սահմանված կարգով մոնիտորինգի իրականացում,
- Դ-պրոցների ջեռուցման համակարգերի վերականգնման մրցութային փաստաթղթի՝ տեխնիկական առաջադրանքի, սարքավորումների մասնագրերի և աշխատանքների ծավալների կազմում,
- շահառուներին խորհրդատվության իրականացում,,
- իրականացվող ծրագրերի ընթացքի և արդյունքների մասին անհրաժեշտ հաշվետվությունների նախապատրաստում և ներկայացում:

**2. Որակավորման պահանջները**

Ինժեները պետք է.

- ունենա բարձրագույն տեխնիկական կրթություն,
- ոչ պակաս 5/հինգ/ տարվա աշխատանքային փորձ,
- աշխատանքի ընթացքում առաջացած խնդիրների հաղթահարման կարողություններ, մարդկանց հետ հաղորդակցվելու զարգացած ունակություններ,
- Համակարգչային տեխնիկայի տիրապետում:

Միջազգային նմանատիպ աշխատանքներում մասնակցության փորձառությունը և համապատասխան որակավորման դասընթացներին մասնակցությունը և անգլերենի իմացությունը գերադասելի է:

**3. Վարչական ենթակայություն**

Ինժեները վարչականորեն հաշվետու է Իրականացման և մոնիտորինգի համակարգողին և գտնվում է նրա անմիջական ենթակայության ներքո:

**4. Այլ պարտականություններ**

Պարտավոր է.

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

- կատարել կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ, ինչպես նաև ղեկավարի՝ օրենսդրությանը չհակասող և Ծրագրերի իրականացմանն առընչվող այլ հանձնարարություններ,
- առաջարկություններ ներկայացնել իր պաշտոնական պարտականությունների իրականացման և վերահսկման արդյունավետ համակարգերի ներդրման, ինչպես նաև գործող համակարգի բարելավման համար,
- առաջնորդվել հաստատված ընթացակարգերով և կանոնակարգերով, պահպանել գործավար էթիկայի նորմերը, աշխատանքային կարգապահությունը, հետևել իրեն հատկացված հիմնադրամի գույքի պահպանությանը,
- չտարածել աշխատանքի ընթացքում ստացած ցանկացած ծառայողական տեղեկատվություն՝ առանց ղեկավարի նախնական համաձայնության:

**Պաշտոնը՝ Սոցիալական ծրագրերի մասնագետ**

**1 Հիմնական առաջադրանքները**

1.1 Սոցիալական ծրագրերի մասնագետը իրականացնում է.

- Սոցիալական ծրագրերի իրագործման նպատակով ֆինանսական միջոցների ներգրավման առաջարկների ներկայացում դոնոր կազմակերպություններին,
- Դոնոր կառույցներից ստացվող կամ նախատեսվող աջակցության համար անհրաժեշտ տեղեկատվական, վերլուծական և հետազոտական աշխատանքների կազմակերպում, դրանց վերաբերյալ հաշվետվությունների կազմում և ներկայացում
- իրականացվող ծրագրերի տարեկան բյուջեների և աշխատանքների ժամանակացույցի, գումարների պլանի կազմումը և համապատասխան կառույցներին ներկայացման ապահովում,
- ծրագրերի իրականացման ընթացքի և արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների կազմումը և համապատասխան կառույցներին ներկայացման ապահովում,
- անհրաժեշտ խորհրդատվական ծառայությունների մատուցման աշխատանքների համակարգում,
- այլ կազմակերպությունների կողմից իրականացվող կամ նախապատրաստվող մասնատիպ ծրագրերի հետ համագործակցության կազմակերպում,
- օտարերկրյա փորձի պարբերաբար ուսումնասիրություն և ծրագրերի իրականացման մեխանիզմների բարելավման առաջարկների պատրաստում և ներկայացում,
- ծրագրերին վերաբերվող քննարկումների, լսումների կազմակերպում,
- շահագրգիռ կառույցների հետ կապի և համագործակցության ապահովում,
- անմիջական համագործակցություն հիմնադրամի այլ մասնագետների հետ:

**2 Որակավորման պահանջներ**

Սոցիալական ծրագրերի մասնագետը պետք է.

- ունենա բարձրագույն տեխնիկական/տնտեսագիտական կրթություն,
- ունենա ոչ պակաս 5 /հինգ/ տարվա աշխատանքային, ծրագրերի կառավարման հետ կապված փորձառություն, ինչպես նաև ունենա պետական կառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության փորձ,
- ունենա մարդկանց հետ շփվելու և բանակցելու ունակություններ ու համապատասխան հմտություններ,
- գերազանց տիրապետի հայերենին և անգլերենին, համակարգչային տեխնիկային (MS Office, Internet և այլն):

**3 Վարչական ենթակայություն**

Սոցիալական ծրագրերի մասնագետը վարչականորեն հաշվետու է հիմնադրամի տնօրենին և գտնվում է նրա անմիջական ենթակայության ներքո:

**4 Այլ պարտականություններ**

Սոցիալական ծրագրերի մասնագետը պարտավոր է.

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

- կատարել կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ, ինչպես նաև ղեկավարի՝ օրենսդրությամբ չհակասող և Ծրագրերի իրականացմանն առընչվող այլ հանձնարարություններ,
- առաջարկություններ ներկայացնել իր պաշտոնական պարտականությունների իրականացման և վերահսկման արդյունավետ համակարգերի ներդրման, ինչպես նաև գործող համակարգի բարելավման համար,
- առաջնորդվել հաստատված ընթացակարգերով և կանոնակարգերով, պահպանել գործավար էթիկայի նորմերը, աշխատանքային կարգապահությունը, հետևել իրեն հատկացված հիմնադրամի գույքի պահպանությանը,
- չտարածել աշխատանքի ընթացքում ստացած ցանկացած ծառայողական տեղեկատվություն՝ առանց ղեկավարի նախնական համաձայնության:

**Պաշտոնը՝ Մոնիտորինգի մասնագետ**

**1. Հիմնական առաջադրանքները**

1.1 Մոնիտորինգի մասնագետը իրականացնում է.

- Ծրագրերի շրջանակներում Իրականացվող աշխատանքների ընթացքի և արդյունքների մոնիտորինգի մասին անհրաժեշտ հաշվետվությունների նախապատրաստում և ներկայացում,
- մոնիտորինգի նպատակով Հիմնադրամ ներկայացվող տեղեկությունների, տվյալների, հաշվետվությունների հավաքագրում,
- մոնիտորինգի ենթակա ծրագրերի մոնիտորինգի իրականացման պլանների և ժամանակացույցերի կազմում,
- հաշվետվությունների կազմման և վերլուծությունների իրականացման առաջարկների ներկայացում ղեկավարին:
- համապատասխան հաշվետվությունների պատրաստման, մոնիտորինգի իրականացման մեթոդների կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- Ծրագրերի իրականացման մեխանիզմների բարելավման առաջարկների պատրաստում և ներկայացում,
- Պարտականությունների շրջանակներում ղեկավարի այլ հանձնարարականների կատարում:

1.2 Պարտականությունների շրջանակներում կատարում է ղեկավարի այլ հանձնարարականները:

**2. Որակավորման պահանջները**

Մոնիտորինգի մասնագետը պետք է ունենա

- բարձրագույն կրթություն,
- ոչ պակաս 3/երեք/ տարվա աշխատանքային փորձ,
- աշխատանքի ընթացքում առաջացած խնդիրների հաղթահարման կարողություններ,
- Համակարգչային տեխնիկայի տիրապետում,
- Հայերենի, անգլերենի և ռուսերենի իմացությունը պարտադիր է, այլ օտար լեզուների իմացությունը գերադասելի է,
- Նմանատիպ աշխատանքներում մասնակցության փորձառությունը և համապատասխան որակավորման դասընթացներին մասնակցությունը գերադասելի է:

**3. Վարչական ենթակայություն**

Մոնիտորինգի մասնագետը վարչականորեն հաշվետու է հիմնադրամի տնօրենին և գտնվում է նրա ենթակայության ներքո:

**4. Այլ պարտականություններ**

Մոնիտորինգի մասնագետը պարտավոր է.

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

- կատարել կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ, ինչպես նաև ղեկավարի՝ օրենսդրությանը չհակասող և Ծրագրերի իրականացմանն առընչվող այլ հանձնարարություններ,
- առաջարկություններ ներկայացնել իր պաշտոնական պարտականությունների իրականացման և վերահսկման արդյունավետ համակարգերի ներդրման, ինչպես նաև գործող համակարգի բարելավման համար,
- առաջնորդվել հաստատված ընթացակարգերով և կանոնակարգերով, պահպանել գործարար էթիկայի նորմերը, աշխատանքային կարգապահությունը, հետևել իրեն հատկացված հիմնադրամի գույքի պահպանությանը,
- չտարածել աշխատանքի ընթացքում ստացած ցանկացած ծառայողական տեղեկատվություն՝ առանց ղեկավարի նախնական համաձայնության:

**Պաշտոնը՝ SU/ԽԾ համակարգող**

**1. Հիմնական առաջադրանքները**

1.1 SU/ ԽԾ համակարգողն իրականացնում է.

- Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության ոլորտների քաղաքականության հարցերի մշակման և համապատասխան մարմիններին առաջարկների ներկայացման իրականացում
- Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության ոլորտների ծրագրերի շրջանակներում իրականացվող ուսումնասիրական/խորհրդատվական աշխատանքների համակարգում,
- դրանց համար անհրաժեշտ Տեխնիկական առաջադրանքների կազմման ապահովում,
- պայմանագրերի ընթացքի վերահսկում և հաշվետվությունների ընդունում,
- դոնոր կառույցներից ստացվող կամ նախատեսվող աջակցության համար անհրաժեշտ տեղեկատվական, վերլուծական և հետազոտական աշխատանքների կազմակերպում, դրանց վերաբերյալ հաշվետվությունների կազմման և ներկայացման համակարգում,
- իրականացվող ծրագրերի տարեկան բյուջեների և աշխատանքների ժամանակացույցի, գնումների պլանի կազմման և համապատասխան կառույցներին ներկայացման ապահովում,
- գործունեության և ստացված արդյունքների գնահատման իրականացում և ներկայացում,
- անմիջական համագործակցություն հիմնադրամի այլ մասնագետների հետ,
- քննարկումների, լուծումների կազմակերպում,
- Ծրագրի պատշաճ իրականացման համար անհրաժեշտ այլ պարտականությունների կատարում,

**2. Որակավորման պահանջներ**

SU/ ԽԾ համակարգողն պետք է.

- ունենա ինժեներական/ **էներգետիկ** ոլորտի/ բարձրագույն կրթություն;
- տիրապետի Հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի իրականացման համար բավարար գիտելիքների,
- ունենա միջազգային ծրագրերի առնվազն 3 տարվա փորձառություն,
- ունենա աշխատանքների կազմակերպման հմտություն, վճռակալություն և ճկունություն՝ նպատակային ցուցանիշների երաշխավորված ապահովման գործում, մոբիլիզացիոն ունակություններ,
- գերազանց տիրապետի հայերենին և անգլերենին, համակարգչային տեխնիկային (MS Office, Internet և այլն),
- ծանոթ լինի վերականգնվող էներգետիկայի ոլորտում օգտագործվող համակարգչային ծրագրային փաթեթների
- ունենա արդի էներգախնայողության և վերականգնվող էներգետիկ ոլորտի տեսական և պրակտիկ իմացություն

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

- ունենա ՀՀ վերականգնվող էներգետիկայի ոլորտի իմացություն առաջին հերթին իրավական և նորմատիվ դաշտերի, ոլորտի տարբեր ասպարեզների տնտեսական զարգացման առանձնահատկությունների առումով,

Ոլորտում նորագույն միտումներին և ծրագրերին (միջազգային, ազգային և տեղական) ծանոթությունը, ինչպես նաև ոլորտին առնչվող միջազգային ծրագրերի իրագործմանը մասնագիտական մասնակցությունը կդիտարկվեն որպես առավելություններ:

Էներգետիկայի և/կամ վերականգնվող էներգետիկայի ոլորտներում գիտական կոչումների առկայությունը, ինչպես նաև ՀԲ կողմից իրականացվող ծրագրերի գործառնայության դրույթների իմացությունը կդիտարկվի որպես առավելություն:

**3. Վարչական ենթակայություն**

Վարչականորեն հաշվետու է հիմնադրամի տնօրենին և գտնվում է նրա անմիջական ենթակայության ներքո:

**4. Այլ պարտականություններ**

SU/ ԽԾ համակարգողն պարտավոր է.

- կատարել կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ, ինչպես նաև ղեկավարի՝ օրենսդրությամբ չհակասող և Ծրագրերի իրականացմանն առընչվող այլ հանձնարարություններ,
- առաջարկություններ ներկայացնել իր պաշտոնական պարտականությունների իրականացման և վերահսկման արդյունավետ համակարգերի ներդրման, ինչպես նաև գործող համակարգի բարելավման համար,
- առաջնորդվել հաստատված ընթացակարգերով և կանոնակարգերով, պահպանել գործավար էթիկայի նորմերը, աշխատանքային կարգապահությունը, հետևել իրեն հատկացված հիմնադրամի գույքի պահպանությանը,
- չտարածել աշխատանքի ընթացքում ստացած ցանկացած ծառայողական տեղեկատվություն՝ առանց ղեկավարի նախնական համաձայնության:

**Պաշտոնը՝ ՎԷԾ մասնագետ**

**1. Հիմնական առաջադրանքները**

1.1 ՎԷԾ մասնագետը իրականացնում է.

- Վերականգնվող էներգետիկայի ոլորտի ծրագրերի շրջանակներում իրականացվող ուսումնասիրական/խորհրդատվական աշխատանքների իրականացում,
- Վերականգնվող էներգետիկայի ոլորտի քաղաքականության հարցերին վերաբերվող խնդիրների վերլուծություններ,
- Վերականգնվող էներգետիկայի ոլորտում առկա իրավական հարցերի, խնդիրների կարգավորման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում
- Վերականգնվող էներգետիկայի ծրագրերի իրականացման օտարերկրյա փորձի ուսումնասիրություն և դրանց հիման վրա առաջարկությունների ներկայացում,
- Վերականգնվող էներգետիկայի ոլորտում առկա հիմնախնդիրների վերլուծություններ,
- Վերականգնվող էներգետիկայի ոլորտում ծրագրեր իրականացնողներին աջակցության տրամադրում,
- Վերականգնվող էներգետիկայի ոլորտի ծրագրերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվական, վերլուծական և հետազոտական աշխատանքների իրականացում, դրանց վերաբերյալ հաշվետվությունների կազմումն և համապատասխան մարմիններին ներկայացում,
- Վերականգնվող էներգետիկային վերաբերվող թեմաներով քննարկումների, սեմինարների և այլ միջոցառումների կազմակերպման աշխատանքներին մասնակցություն,
- անմիջական համագործակցություն հիմնադրամի այլ մասնագետների հետ,

**2. Որակավորման պահանջներ**

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

---

ՎԷԾ մասնագետը պետք է.

- ունենա էներգետիկ ոլորտի բարձրագույն կրթություն;
- ունենա վերականգնվող էներգետիկայի ոլորտում առնվազն 3 տարվա անմիջական փորձառություն
- ունենա աշխատանքների կազմակերպման հմտություն, վճռականություն և ճկունություն՝ նպատակային ցուցանիշների երաշխավորված ապահովման գործում, մոբիլիզացիոն ունակություններ,
- ունենա արդի էներգախնայողության և վերականգնվող էներգետիկ ոլորտի տեսական և պրակտիկ իմացություն
- գերազանց տիրապետի հայերենին և անգլերենին, համակարգչային տեխնիկային (MS Office, Internet և այլն),
- ծանոթ լինի վերականգնվող էներգետիկայի ոլորտում օգտագործվող համակարգչային ծրագրային փաթեթների
- ունենա ՀՀ վերականգնվող էներգետիկայի ոլորտի իմացություն առաջին հերթին իրավական և նորմատիվ դաշտերի, ոլորտի տարբեր ասպարեզների տնտեսական զարգացման առանձնահատկությունների առումով,

Ոլորտում նորագույն միտումներին և ծրագրերին (միջազգային, ազգային և տեղական) ծանոթությունը, ինչպես նաև ոլորտին առնչվող միջազգային ծրագրերի իրագործմանը մասնագիտական մասնակցությունը կդիտարկվեն որպես առավելություններ:

Էներգետիկայի և/կամ վերականգնվող էներգետիկայի ոլորտներում գիտական կոչումների առկայությունը, ինչպես նաև ՀԲ կողմից իրականացվող ծրագրերի գործառնայության դրույթների իմացությունը կդիտարկվի որպես առավելություն:

**3. Վարչական ենթակայություն**

Վարչականորեն հաշվետու է հիմնադրամի **SU/ԽԾ համակարգող** ին և գտնվում է նրա անմիջական ենթակայության ներքո:

**4. Այլ պարտականություններ**

ՎԷԾ մասնագետը պարտավոր է.

- կատարել կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ, ինչպես նաև ղեկավարի՝ օրենսդրությամբ չհակասող և Ծրագրերի իրականացմանն առընչվող այլ հանձնարարություններ,
- առաջարկություններ ներկայացնել իր պաշտոնական պարտականությունների իրականացման և վերահսկման արդյունավետ համակարգերի ներդրման, ինչպես նաև գործող համակարգի բարելավման համար,
- առաջնորդվել հաստատված ընթացակարգերով և կանոնակարգերով, պահպանել գործավար էթիկայի նորմերը, աշխատանքային կարգապահությունը, հետևել իրեն հատկացված հիմնադրամի գույքի պահպանությանը,
- չտարածել աշխատանքի ընթացքում ստացած ցանկացած ծառայողական տեղեկատվություն՝ առանց ղեկավարի նախնական համաձայնության:

**Պաշտոնը՝ ՎԷԾ մասնագետ/տնտեսագետ**

**1. Հիմնական առաջադրանքները**

1.1 ՎԷԾ մասնագետ/տնտեսագետը իրականացնում է.

- Էներգետիկայի ոլորտի ծրագրերի շրջանակներում իրականացվող ուսումնասիրական/խորհրդատվական աշխատանքների իրականացում,
- Էներգակիրների արդյունավետ օգտագործման, ինչպես նաև էներգաարդյունավետ բնապահպանական ցուցանիշների վերաբերյալ օտարերկրյա փորձի ուսումնասիրություն և դրանց հիման վրա առաջարկությունների ներկայացում,

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

- Էներգաարդյունավետ Էներգատեղակայանքների, Էներգախնայողական տեխնոլոգիաների ուսումնասիրում, անհրաժեշտ տեղեկատվական, վերլուծական և հետազոտական աշխատանքների իրականացում, դրանց վերաբերյալ հաշվետվությունների կազմում և համապատասխան մարմիններին ներկայացում,
- ԷԷ և ՎԷ ոլորտների ռազմավարական և փաստաթղթերի կազմման ընթացքում տնտեսագիտական փորձագիտության իրականացում,
- ԷԷ և ՎԷ բնագավառի ներդրումային ծրագրերի տեխնիկա-տնտեսական փորձաքննություն, առաջարկությունների ներկայացում,
- Հիմնադրամի կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի տնտեսագիտական վերլուծություն
- մասնակցություն նոր ծրագրերի մշակմանը,
- մոնիտորինգի ենթակա ծրագրերի վերլուծություններ,
- գործարար ծրագրերի պատրաստում շահառուների համար:

**2. Որակավորման պահանջներ**

ՎԷԾ մասնագետ/տնտեսագետը պետք է.

- ունենա Էներգետիկ ոլորտի բարձրագույն կրթություն;
- ունենա արդի Էներգախնայողության և վերականգնվող Էներգետիկ ոլորտի տեսական և պրակտիկ իմացություն
- ունենա Էներգետիկայի ոլորտում առնվազն 3 տարվա անմիջական փորձառություն
- ունենա աշխատանքների կազմակերպման հմտություն, վճռականություն և ճկունություն՝ նպատակային ցուցանիշների երաշխավորված ապահովման գործում, մոբիլիզացիոն ունակություններ,
- գերազանց տիրապետի հայերենին և անգլերենին, համակարգչային տեխնիկային (MS Office, Internet և այլն),
- ծանոթ լինի Էներգետիկայի ոլորտում օգտագործվող համակարգչային ծրագրային փաթեթների
- ունենա ՀՀ վերականգնվող Էներգետիկայի ոլորտի իմացություն առաջին հերթին իրավական և նորմատիվ դաշտերի, ոլորտի տարբեր ասպարեզների տնտեսական զարգացման առանձնահատկությունների առումով,

Ոլորտում նորագույն միտումներին և ծրագրերին (միջազգային, ազգային և տեղական) ծանոթությունը, ինչպես նաև ոլորտին առնչվող միջազգային ծրագրերի իրագործմանը մասնագիտական մասնակցությունը կդիտարկվեն որպես առավելություններ:

Էներգետիկայի և/կամ վերականգնվող Էներգետիկայի ոլորտներում գիտական կոչումների առկայությունը, ինչպես նաև ՀԲ կողմից իրականացվող ծրագրերի գործառնային դրույթների իմացությունը կդիտարկվի որպես առավելություն:

**3. Վարչական ենթակայություն**

Վարչականորեն հաշվետու է հիմնադրամի **SU/ԽԾ համակարգող** ին և գտնվում է նրա անմիջական ենթակայության ներքո:

**4. Այլ պարտականություններ**

ՎԷԾ մասնագետ/տնտեսագետը պարտավոր է.

- կատարել կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ, ինչպես նաև ղեկավարի՝ օրենսդրությանը չհակասող և Ծրագրերի իրականացմանն առընչվող այլ հանձնարարություններ,
- առաջարկություններ ներկայացնել իր պաշտոնական պարտականությունների իրականացման և վերահսկման արդյունավետ համակարգերի ներդրման, ինչպես նաև գործող համակարգի բարելավման համար,

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

- առաջնորդվել հաստատված ընթացակարգերով և կանոնակարգերով, պահպանել գործավար էթիկայի նորմերը, աշխատանքային կարգապահությունը, հետևել իրեն հատկացված հիմնադրամի գույքի պահպանությանը,
- չտարածել աշխատանքի ընթացքում ստացած ցանկացած ծառայողական տեղեկատվություն՝ առանց դեկլարիի նախնական համաձայնության:

**Պաշտոնը՝ Ֆինանսական ղեկավար**

**1. Հիմնական առաջադրանքները**

1.1 Ֆինանսական ղեկավարը իրականացնում է.

- Հիմնադրամի գործարար ռազմավարության, գործարար պլանի նախապատրաստում, ֆինանսական միջոցների աճը ապահովող միջոցառումների իրականացում :
- Հիմնադրամի և նրա կողմից իրականացվող ծրագրերի ֆինանսական կառավարման համակարգի հիմնումը և վարումը,
- Ֆինանսական կառավարման համակարգչային ծրագրի տեխնիկական առաջադրանքի կազմումը և ըստ դրա ընդունումը ներդրողի կողմից,
- Ֆինանսական և բյուջետային պլանավորում,
- Մասնակցություն տարեկան աշխատանքային պլանի նախապատրաստմանը,
- ֆինանսավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացում,
- Ծրագրի միջոցների հոսքի ապահովում հաշիվների ժամանակին համալրում,
- Ֆինանսական հաշվետվությունների կազմման և ներկայացման գործընթացների ապահովում,
- Ֆինանսական և բյուջետային խնդիրների կարգավորում,
- Գնումների գործընթացի ապահովում,
- Կապի պահպանում աուդիտորների հետ և ծրագրի աուդիտի համար փաստաթղթերի նախապատրաստման ապահովում,
- Ծրագրի իրականացման հաշվետվությունների պատրաստում,
- Վճարումների կառավարում,
- ՄՖՀ-ների վիճակի գնահատում՝ եռամսյակային վերլուծությունների միջոցով, ՄՖՀ-ների կողմից ներկայացված հայտերի ուսումնասիրություն և համապատասխան եզրակացության ներկայացում,
- ՀՀ կողմից տրամադրված փոխառության, ինչպես նաև ՄՖՀ-երին և Շահառուներին ներկայացված փոխառությունների՝ սահմանված կարգով կառավարում,
- Հիմնադրամի կողմից կնքված պայմանագրերի կառավարման ապահովում,
- Ծրագրի ծախսերի և գների մոնիթորինգի իրականացում (տեղական և օտարերկրյա),
- Օժանդակություն Հիմնադրամի Տնօրենին ֆինանսական հարցերի լուծման գործընթացում:

1.2 Իրավասության շրջանակներում կատարում է ղեկավարի այլ հանձնարարականները:

**2. Որակավորման պահանջները**

Ֆինանսական ղեկավարը պետք է ունենա.

- բարձրագույն տնտեսագիտական/ ֆինանսական կրթություն,
- ոչ պակաս 5/հինգ/ տարվա համապատասխան աշխատանքային փորձ,
- միջազգային և առևտրային բանկերի կողմից իրականացվող գործընթացների տիրապետում, ֆինանսական կառավարման ունակություններ, կապիտալի շուկայի ենթակառուցվածքների գործունեության բավարար իմացություն,
- ՀՀ բանկային օրենսդրության տիրապետում,

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

- Համաշխարհային բանկի կողմից իրականացվող ծրագրերի ֆինանսական գործունեության ընթացակարգերի իմացություն,
- աշխատանքի ընթացքում առաջացած խնդիրների հաղթահարման կարողություններ, մարդկանց հետ հաղորդակցվելու զարգացած ունակություններ,
- Համակարգչային տեխնիկային գերազանց տիրապետում,
- Միջազգային նմանատիպ ծրագրերում մասնակցության փորձառություն
- Հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուների իմացությունը պարտադիր է:

**3. Վարչական ենթակառուցվածք**

Ֆինանսական ղեկավարը վարչականորեն հաշվետու է հիմնադրամի տնօրենին և գտնվում է նրա անմիջական ենթակայության ներքո:

**4. Այլ պարտականություններ**

Ֆինանսական ղեկավարը պարտավոր է.

- կատարել կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ, ինչպես նաև ղեկավարի՝ օրենսդրությանը չհակասող և Ծրագրերի իրականացմանն առընչվող այլ հանձնարարություններ,
- առաջարկություններ ներկայացնել իր պաշտոնական պարտականությունների իրականացման և վերահսկման արդյունավետ համակարգերի ներդրման, ինչպես նաև գործող համակարգի բարելավման համար,
- առաջնորդվել հաստատված ընթացակարգերով և կանոնակարգերով, պահպանել գործավար էթիկայի նորմերը, աշխատանքային կարգապահությունը, հետևել իրեն հատկացված հիմնադրամի գույքի պահպանությանը,
- չտարածել աշխատանքի ընթացքում ստացած ցանկացած ծառայողական տեղեկատվություն՝ առանց ղեկավարի նախնական համաձայնության:

**Պաշտոնը՝ Գլխավոր հաշվապահ**

**1. Հիմնական առաջադրանքները**

1.1 Գլխավոր հաշվապահը իրականացնում է.

- Տարբեր հաշվապահական գրքերի, հաշվապահական գրանցումների և հաշվետվությունների վարում և պահպանում, համաձայն ՀՀ և ՀԲ ընթացակարգերին,
- Հարկային և ֆինանսական հաշվետվությունների նախապատրաստում և ըստ ժամանակացույցի ներկայացում համապատասխան մարմիններին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
- ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորման գործընթացների իրականացում,
- համադրումԲանկային հաշիվների ստուգում և համադրում,
- Ապրանքագրերի, ստացականների և վճարման հանձնարարականների վավերացում,
- Աշխատավարձի հաշվարկում և գրանցում,
- Հիմնական միջոցների գրանցում և սահմանված կարգով վարում,
- Փոքրարժեք և արագամաշ ապրանքների գրանցում և վերահսկում,
- Օժանդակություն ֆինանսական ղեկավարին:

1.2 Պարտականությունների շրջանակներում կատարում է ղեկավարի այլ հանձնարարականները:

**2. Որակավորման պահանջները**

Գլխավոր հաշվապահը պետք է ունենա.

- բարձրագույն տնտեսագիտական կրթություն,
- հաշվապահական որակավորում,

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

- Համաշխարհային բանկի կողմից իրականացվող գործընթացների իմացություն,
- Համաշխարհային բանկի կողմից իրականացվող ծրագրերի հաշվապահական հաշվառման և վճարումների ընթացակարգերի իմացություն,
- ոչ պակաս 5/հինգ/ տարվա աշխատանքային փորձ,
- աշխատանքի ընթացքում առաջացած խնդիրների հաղթահարման կարողություններ, մարդկանց հետ հաղորդակցվելու զարգացած ունակություններ,
- Համակարգչային տեխնիկային տիրապետում, հաշվապահական ծրագրերին տիրապետումն առավելություն է,
- Հայերենի իմացությունը պարտադիր է, անգլերենի իմացությունը գերադասելի է,
- Միջազգային նմանատիպ ծրագրերում մասնակցության փորձառությունը և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության որակավորումը գերադասելի է:

**3. Վարչական ենթակայություն**

Գլխավոր հաշվապահը վարչականորեն հաշվետու է հիմնադրամի ֆինանսական ղեկավարին և գտնվում է հիմնադրամի ֆինանսական ղեկավարի անմիջական ենթակայության ներքո:

**4. Այլ պարտականություններ**

Գլխավոր հաշվապահը պարտավոր է.

- կատարել կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ, ինչպես նաև ղեկավարի՝ օրենսդրությանը չհակասող և Ծրագրերի իրականացմանն առընչվող այլ հանձնարարություններ,
- առաջարկություններ ներկայացնել իր պաշտոնական պարտականությունների իրականացման և վերահսկման արդյունավետ համակարգերի ներդրման, ինչպես նաև գործող համակարգի բարելավման համար,
- առաջնորդվել հաստատված ընթացակարգերով և կանոնակարգերով, պահպանել գործավար էթիկայի նորմերը, աշխատանքային կարգապահությունը, հետևել իրեն հատկացված հիմնադրամի գույքի պահպանությանը,
- չտարածել աշխատանքի ընթացքում ստացած ցանկացած ծառայողական տեղեկատվություն՝ առանց ղեկավարի նախնական համաձայնության:

**Պաշտոնը՝ Ֆինանսիստ/վճարումների մասնագետ**

**1. Հիմնական առաջադրանքները**

1.1 Ֆինանսիստ/վճարումների մասնագետը իրականացնում է.

- հաշվապահական համակարգում կատարված վճարումների և ստացված հաշիվների մուտքագրում,
- վճարման հանձնարարականների պատրաստում,
- ՀԲ առհանման հայտերի պատրաստում,
- ՀԲ առհանման հայտերի հիման վրա վճարումների իրականացման հսկողություն
- Հաշիվների համալրման գործառնայիններ,
- Ֆինանսական ղեկավարին աջակցություն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացում
- Բյուջետային պլանավորման նպատակով վճարումների գծով անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում ֆինանսական ղեկավարին
- Պայմանագրերի բնօրինակների և վճարման փաստաթղթերի պահպանում.

1.2 Պարտականությունների շրջանակներում կատարում է ղեկավարի այլ հանձնարարականները:

## 2. Որակավորման պահանջները

Ֆինանսիստ/վճարումների մասնագետը պետք է ունենա.

- բարձրագույն տնտեսագիտական կրթություն,
- հաշվապահական կիրառական հմտություններ,
- Համաշխարհային բանկի կողմից իրականացվող ծրագրերի ընթացակարգերի գերազանց իմացություն,
- ոչ պակաս 3/երեք/ տարվա աշխատանքային փորձ,
- աշխատանքի ընթացքում առաջացած խնդիրների հաղթահարման կարողություններ, մարդկանց հետ հաղորդակցվելու զարգացած ունակություններ:
- Համակարգչային տեխնիկայի տիրապետում, հաշվապահական ծրագրի տիրապետումը գերադասելի է:
- Հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուների իմացությունը պարտադիր է,

Նմանատիպ աշխատանքներում մասնակցության փորձառությունը և համապատասխան որակավորման դասընթացներին մասնակցությունը գերադասելի է:

## 3. Վարչական ենթակայություն

Ֆինանսիստ/վճարումների մասնագետը վարչականորեն հաշվետու է հիմնադրամի ֆինանսական տնօրենին և գտնվում է հիմնադրամի ֆինանսական ղեկավարի անմիջական ենթակայության ներքո:

## 4. Այլ պարտականություններ

Ֆինանսիստ/վճարումների մասնագետը պարտավոր է.

- կատարել կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ, ինչպես նաև ղեկավարի՝ օրենսդրությամբ չհակասող և Ծրագրերի իրականացմանն առընչվող այլ հանձնարարություններ,
- առաջարկություններ ներկայացնել իր պաշտոնական պարտականությունների իրականացման և վերահսկման արդյունավետ համակարգերի ներդրման, ինչպես նաև գործող համակարգի բարելավման համար,
- առաջնորդվել հաստատված ընթացակարգերով և կանոնակարգերով, պահպանել գործարար էթիկայի նորմերը, աշխատանքային կարգապահությունը, հետևել իրեն հատկացված հիմնադրամի գույքի պահպանությանը,
- չտարածել աշխատանքի ընթացքում ստացած ցանկացած ծառայողական տեղեկատվություն՝ առանց ղեկավարի նախնական համաձայնության:

## Պաշտոնը՝ Տնտեսագետ, վարկային մասնագետ

### 1. Հիմնական առաջադրանքները

1.1 Տնտեսագետ, վարկային մասնագետը իրականացնում է.

- Վարկավորման հայտերի, վճարումների գրանցում,
- ՄՖՀ- ներից ստացված հաշվետվությունների տվյալների գրանցում,
- ՄՖՀ-ներին կատարվող վճարման փաստաթղթերի նախապատրաստում,
- Համագործակցություն ՄՖՀ-ների հետ՝ հաշվետվությունների հետ կապված հարցերի պարզաբանման նպատակով,
- Փոխառությունների գծով վճարումների և մարումների գրանցում,
- Վարկերի մոնիտորինգի հաշվետվությունների պատրաստում,
- Պայմանագրերի բնօրինակների և վճարման փաստաթղթերի պահպանում.
- Պարտականությունների շրջանակներում կատարում է ղեկավարի այլ հանձնարարականները:

## **2. Որակավորման պահանջները**

Տնտեսագետ, վարկային մասնագետը պետք է ունենա.

- բարձրագույն տնտեսագիտական կրթություն,
- հաշվապահական կիրառական հմտություններ,
- ոչ պակաս 3/երեք/ տարվա աշխատանքային փորձ,
- աշխատանքի ընթացքում առաջացած խնդիրների հաղթահարման կարողություններ, մարդկանց հետ հաղորդակցվելու զարգացած ունակություններ:
- Համակարգչային տեխնիկայի տիրապետում, հաշվապահական ծրագրի տիրապետումը գերադասելի է:
- Հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուների իմացությունը պարտադիր է,

Նմանատիպ աշխատանքներում մասնակցության փորձառությունը և համապատասխան որակավորման դասընթացներին մասնակցությունը գերադասելի է:

## **3. Վարչական ենթակառուցվածք**

Տնտեսագետ/ վարկային մասնագետը վարչականորեն հաշվետու է հիմնադրամի ֆինանսական ղեկավարին և գտնվում է հիմնադրամի ֆինանսական ղեկավարի անմիջական ենթակառուցվածքում:

## **4. Այլ պարտականություններ**

Տնտեսագետ/ վարկային մասնագետը պարտավոր է.

- կատարել կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ, ինչպես նաև ղեկավարի՝ օրենսդրությամբ չհակասող և Ծրագրերի իրականացմանն առնչվող այլ հանձնարարություններ,
- առաջարկություններ ներկայացնել իր պաշտոնական պարտականությունների իրականացման և վերահսկման արդյունավետ համակարգերի ներդրման, ինչպես նաև գործող համակարգի բարելավման համար,
- առաջնորդվել հաստատված ընթացակարգերով և կանոնակարգերով, պահպանել գործարար էթիկայի նորմերը, աշխատանքային կարգապահությունը, հետևել իրեն հատկացված հիմնադրամի գույքի պահպանությանը,
- չտարածել աշխատանքի ընթացքում ստացած ցանկացած ծառայողական տեղեկատվություն՝ առանց ղեկավարի նախնական համաձայնության:

## **Պաշտոնը՝ Գնումների գլխավոր մասնագետ**

### **1. Հիմնական առաջադրանքները**

1.1 Գնումների գլխավոր մասնագետն իրականացնում է .

- գնումների պլանի (ըստ գնման մեթոդի, տեսակի, քանակի, զնի, մատակարարման պայմանների, աղբյուրների և այլն) կազմում
- Ծրագրի գնումների գործընթացի իրականացում, այդ թվում.
  - գնման փաստաթղթերի նախապատրաստում համաձայն ՀԲ-ի Գնումների ուղեցույցի (առաջարկի հրավերը, ստանդարտ առաջարկի փաստաթղթեր, տեխնիկական մասնագրեր, առաջարկի գնահատման հաշվետվություններ և այլն),
  - գնումների գործընթացին առնչվող փաստաթղթերի պատրաստում՝ ՀԲ ներկայացման նպատակով ,
  - գնումներին առնչվող ՀՀ օրենսդրությամբ պահանջվող բոլոր փաստաթղթերի նախապատրաստում,
  - Մրցութային հանձնաժողովների աշխատանքի կազմակերպում և անհրաժեշտ տեղեկատվության ապահովում,
  - մրցութային հանձնաժողովների արձանագրությունների կազմման կազմակերպում,

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

- առաջարկների գնահատման, գնահատման հաշվետվությունների և պայմանագրերի շնորհման երաշխավորագրերի հետ կապված գործընթացների նախապատրաստում,
- պայմանագրերի կնքման գործընթացի ապահովում,
- Օժանդակություն ֆինանսական ղեկավարին բյուջեի պլանավորման նախապատրաստման ժամանակ, առաջարկելով համապատասխան փոփոխություններ ,
- իրականացնել պայմանագրերի ժամկետների նկատմամբ հսկողություն և զեկուցում ՖԳ-ին՝ հնարավոր խախտումների վերաբերյալ,
- ծրագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, ծառայությունների և /կամ կատարված աշխատանքների՝ պայմանագրերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ եզրակացության տրամադրում,
- գնումների առաջընթացի հաշվետվությունների կազմում,
- մասնակցություն ծրագրի աշխատանքային պլանի նախապատրաստմանը:

1.2 Պարտականությունների շրջանակներում կատարում է ղեկավարի այլ հանձնարարականները:

**2. Որակավորման պահանջները**

Գնումների գլխավոր մասնագետը պետք է ունենա

- բարձրագույն տեխնիկական/տնտեսագիտական կրթություն,
- Համաշխարհային բանկի գնումների ընթացակարգերի իմացություն,
- ոչ պակաս 3/երեք/ տարվա աշխատանքային փորձ,
- Համակարգչային տեխնիկայի գերազանց տիրապետում,
- Հայերեն, անգլերեն լեզուների գերազանց իմացությունը պարտադիր է,
- Միջազգային կազմակերպություններում կամ ծրագրերում մասնատիպ աշխատանքի փորձառությունը ցանկալի է,
- ՀԲ ծրագրերում աշխատանքի փորձը գերադասելի է:

**3. Վարչական ենթակառուցվածք**

Գնումների գլխավոր մասնագետը վարչականորեն հաշվետու է հիմնադրամի ֆինանսական ղեկավարին և գտնվում է նրա անմիջական ենթակայության ներքո:

**4. Այլ պարտականություններ**

Գնումների գլխավոր մասնագետը պարտավոր է.

- կատարել կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ, ինչպես նաև ղեկավարի՝ օրենսդրությանը չհակասող և Ծրագրերի իրականացմանն առընչվող այլ հանձնարարություններ,
- առաջարկություններ ներկայացնել իր պաշտոնական պարտականությունների իրականացման և վերահսկման արդյունավետ համակարգերի ներդրման, ինչպես նաև գործող համակարգի բարելավման համար,
- առաջնորդել հաստատված ընթացակարգերով և կանոնակարգերով, պահպանել գործավար էթիկայի նորմերը, աշխատանքային կարգապահությունը, հետևել իրեն հատկացված հիմնադրամի գույքի պահպանությանը,
- չտարածել աշխատանքի ընթացքում ստացած ցանկացած ծառայողական տեղեկատվություն՝ առանց ղեկավարի նախնական համաձայնության:

**Պաշտոնը՝ Գնումների առաջատար մասնագետ**

**1. Հիմնական առաջադրանքները**

1.1 Գնումների առաջատար մասնագետը իրականացնում է .

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

- գնումների պլանի (ըստ գնման մեթոդի, տեսակի, քանակի, զնի, մատակարարման պայմանների, աղբյուրների և այլն) կազմման գործընթացների մասնակցություն,
- Ծրագրի գնումների գործընթացին մասնակցություն , այդ թվում.
  - գնման փաստաթղթերի նախապատրաստում համաձայն ՀԲ-ի Գնումների ուղեցույցի (առաջարկի հրավերք, ստանդարտ առաջարկի փաստաթղթեր, տեխնիկական մասնագրեր, առաջարկի գնահատման հաշվետվություններ և այլն),
  - գնումների գործընթացին առնչվող փաստաթղթերի պատրաստում՝ ՀԲ ներկայացման նպատակով ,
  - գնումներին առնչվող ՀՀ օրենսդրությամբ պահանջվող բոլոր փաստաթղթերի նախապատրաստում,
  - Մրցութային հանձնաժողովների աշխատանքի նախապատրաստում և անհրաժեշտ տեղեկատվության ապահովում,
  - մրցութային հանձնաժողովների արձանագրությունների կազմում,
  - առաջարկների գնահատման, գնահատման հաշվետվությունների և պայմանագրերի շնորհման երաշխավորագրերի հետ կապված գործընթացների նախապատրաստում,
  - պայմանագրերի կնքման գործընթացի նախապատրաստում,
  - իրականացնել պայմանագրերի ժամկետների նկատմամբ հսկողություն և զեկուցում ՖՂ-ին՝ հնարավոր խախտումների վերաբերյալ,
  - գնումների առաջընթացի հաշվետվությունների կազմում,
  - մասնակցություն ծրագրի աշխատանքային պլանի նախապատրաստմանը:

1.2 Պարտականությունների շրջանակներում կատարում է դեկավարի այլ հանձնարարականները:

**2. Որակավորման պահանջները**

Գնումների առաջատար մասնագետը պետք է ունենա

- բարձրագույն կրթություն,
- Համաշխարհային բանկի գնումների ընթացակարգերի իմացություն,
- ոչ պակաս 3/երեք/ տարվա աշխատանքային փորձ,
- Համակարգչային տեխնիկայի գերազանց տիրապետում,
- Հայերեն, անգլերեն լեզուների գերազանց իմացությունը պարտադիր է,
- Միջազգային կազմակերպություններում կամ ծրագրերում մնանատիպ աշխատանքի փորձառությունը ցանկալի է,
- ՀԲ ծրագրերում աշխատանքի փորձը գերադասելի է:

**3. Վարչական ենթակայություն**

Գնումների առաջատար մասնագետը վարչականորեն հաշվետու է հիմնադրամի ֆինանսական ղեկավարին և գտնվում է նրա անմիջական ենթակայության ներքո:

**4. Այլ պարտականություններ**

Գնումների առաջատար մասնագետը պարտավոր է.

- կատարել կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ, ինչպես նաև ղեկավարի՝ օրենսդրությամբ չհակասող և Ծրագրերի իրականացմանն առընչվող այլ հանձնարարություններ,
- առաջարկություններ ներկայացնել իր պաշտոնական պարտականությունների իրականացման և վերահսկման արդյունավետ համակարգերի ներդրման, ինչպես նաև գործող համակարգի բարելավման համար,

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

- առաջնորդվել հաստատված ընթացակարգերով և կանոնակարգերով, պահպանել գործավար էթիկայի նորմերը, աշխատանքային կարգապահությունը, հետևել իրեն հատկացված հիմնադրամի գույքի պահպանությանը,
- չտարածել աշխատանքի ընթացքում ստացած ցանկացած ծառայողական տեղեկատվություն՝ առանց ղեկավարի նախնական համաձայնության:

**Պաշտոնը՝ Գործերի կառավարիչ**

**1. Հիմնական առաջադրանքները**

1.1 Գործերի կառավարիչը իրականացնում է.

- Հիմնադրամի ընթացիկ աշխատանքների համար անհրաժեշտ նյութական միջոցների և սարքերի ու սարքավորումների անխափան աշխատանքների ապահովում,
- Հիմնադրամի գրությունների, այլ նյութերի տրամադրում հասցեատերերին,
- պետական կառավարման մարմիններից նյութերի և փաստաթղթերի ստացում,
- հիմնադրամի նյութական արժեքների հաշվառման, գույքագրման և պահպանման գործընթացների իրականացում,
- սեմինարների, այցելությունների, բանակցությունների և այլ հավաքների հետ կապված աշխատանքների կազմակերպում,
- վարորդների և տեխնիկական աշխատողների աշխատանքի կազմակերպում և վերահսկում,
- Ծրագրերի շրջանակներում գնված ապրանքների մաքսագերծում,
- Ծրագրի շրջանակներում ձեռքբերված ապրանքների ընդունում և համապատասխան ֆիզիկական և իրավաբանական անձանց հանձնում
- Պահեստի ապրանքաշրջանառության, ներառյալ վառելիքի վերահսկողություն,
- Գործառնական նախահաշվի պատրաստում,
- Հաստատված նախահաշվի կատարման վերաբերյալ ամսեկան հաշվետվությունների ներկայացում Ֆինանսական ղեկավարին:

1.2 Պարտականությունների շրջանակներում կատարում է ղեկավարի այլ հանձնարարականները:

**2. Որակավորման պահանջները**

Գործերի կառավարիչը պետք է ունենա

- բարձրագույն կրթություն,
- ոչ պակաս քան 3/երեք/ տարվա աշխատանքային փորձ,
- աշխատանքի ընթացքում առաջացած խնդիրների հաղթահարման կարողություններ և մարդկանց հետ հաղորդակցվելու գերազանց ունակություններ,
- Համակարգչային տեխնիկայի տիրապետում,
- Անգլերենի իմացությունը ցանկալի է:

**3. Վարչական ենթակայություն**

Գործերի կառավարիչը վարչականորեն հաշվետու է ՀՏ-ին և գտնվում է նրա անմիջական ենթակայության ներքո:

**4. Այլ պարտավորություններ**

Գործերի կառավարիչը պարտավոր է.

- կատարել կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ, ինչպես նաև ղեկավարի՝ օրենսդրությանը չհակասող և Ծրագրերի իրականացմանն առընչվող այլ հանձնարարություններ,

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

- առաջարկություններ ներկայացնել իր պաշտոնական պարտականությունների իրականացման և վերահսկման արդյունավետ համակարգերի ներդրման, ինչպես նաև գործող համակարգի բարելավման համար,
- առաջնորդվել հաստատված ընթացակարգերով և կանոնակարգերով, պահպանել գործավար էթիկայի նորմերը, աշխատանքային կարգապահությունը, հետևել իրեն հատկացված հիմնադրամի գույքի պահպանությանը,
- չտարածել աշխատանքի ընթացքում ստացած ցանկացած ծառայողական տեղեկատվություն՝ առանց ղեկավարի նախնական համաձայնության:

**Պաշտոնը՝ Տեղեկատվական պատասխանատու**

**1. Հիմնական առաջադրանքները**

1.1 Տեղեկատվական պատասխանատուն իրականացնում է.

- Հիմնադրամի վեբկայքի վերափոխումներ /աշխատանքի դյուրիմացում, պատկերների և լինքերի վերափոխում/
- վեբկայքի թարմացումներ՝ այդ նպատակով հավաքագրելով անհրաժեշտ տվյալներ և մուտքագրելով դրանք կայք,
- պարբերաբար պատրաստում է Հիմնադրամի կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն ՁԼՄ-ների և համագործակցող կազմակերպությունների համար,
- «Աշխարհագրական տեղեկատվական համակարգ» /ԱՏՀ/ համակարգչային ծրագրի աշխատանքների կազմակերպում, մասնավորապես իրականացնում է տարածակամորեն բաշխված տվյալների մուտքագրում, կառավարում, մանիպուլիացիա,
- ԱՏՀ ծրագրի տվյալների վերլուծություն և մոդելավորում,
- ԱՏՀ ծրագրից օգտվողներին մատուցում է խորհրդատվություն տվյալների բազայի հետ աշխատանքները կազմակերպելու և ուսումնասիրություններ կատարելու նպատակով:

1.2 Պարտականությունների շրջանակներում կատարում է ղեկավարի այլ հանձնարարականները:

**2. Որակավորման պահանջները**

Տեղեկատվական պատասխանատուն պետք է ունենա

- բարձրագույն տեխնիկական կրթություն,
- ոչ պակաս քան 2/երկու/ տարվա աշխատանքային փորձ,
- աշխատանքի ընթացքում առաջացած խնդիրների հաղթահարման կարողություններ և մարդկանց հետ հաղորդակցվելու գերազանց ունակություններ,
- Համակարգչային տեխնիկայի գերազանց տիրապետում,
- Համակարգչային MS Office, Auto DesK Map, Internet, HTML, IDRISI Andes, CartaLinx համակարգչային ծրագրերի իմացություն:
- Անգլերենի իմացությունը ցանկալի է:

**3. Վարչական ենթակայություն**

Տեղեկատվական պատասխանատուն վարչականորեն հաշվետու է ՀՏ-ին և գտնվում է նրա անմիջական ենթակայության ներքո:

**4. Այլ պարտավորություններ**

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

Տեղեկատվական պատասխանատուն պարտավոր է.

- կատարել կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ, ինչպես նաև ղեկավարի՝ օրենսդրությամբ չհակասող և Ծրագրերի իրականացմանն առընչվող այլ հանձնարարություններ,
- առաջարկություններ ներկայացնել իր պաշտոնական պարտականությունների իրականացման և վերահսկման արդյունավետ համակարգերի ներդրման, ինչպես նաև գործող համակարգի բարելավման համար,
- առաջնորդվել հաստատված ընթացակարգերով և կանոնակարգերով, պահպանել գործավար էթիկայի նորմերը, աշխատանքային կարգապահությունը, հետևել իրեն հատկացված հիմնադրամի գույքի պահպանությանը,
- չտարածել աշխատանքի ընթացքում ստացած ցանկացած ծառայողական տեղեկատվություն՝ առանց ղեկավարի նախնական համաձայնության:

**Պաշտոնը՝ Տնօրենի օգնական**

**1. Հիմնական առաջադրանքները**

1.1 Տնօրենի օգնականը իրականացնում է.

- Հիմնադրամի տնօրենի հանձնարարականների կատարման վերահսկողություն,
- Հիմնադրամի փաստաթղթաշրջանառության ապահովում,
- փաստաթղթերի գրանցում և ներկայացում ,
- արձանագրությունների կազմում և գործունեության հետ առընչվող այլ գրագրության նախապատրաստում,
- Հոգաբարձուների խորհրդի, այլ խորհրդակցությունների օրակարգերի պատրաստում և հարցերին առընչվող փաստաթղթերի հավաքում,
- ղեկավարի աշխատաժամանակի, հանդիպումների, խորհրդակցությունների պլանավորում և ժամանակագրում,
- ըստ անհրաժեշտության համագործակցություն գործերի կառավարչի հետ՝ դրանց կազմակերպման նպատակով,
- նամակագրության և փոստով ստացված այլ փաստաթղթերի, պարբերական մամուլի ստացումը, ինչպես նաև գրագրությունների և փաստաթղթերի հասցեատերերին սահմանված ժամկետներում փոխանցումը, փոստային առաքումները:

1.2 Պարտականությունների շրջանակներում կատարում է ղեկավարի այլ հանձնարարականները:

**2. Որակավորման պահանջները**

Տնօրենի օգնականը պետք է ունենա

- բարձրագույն կրթություն,
- աշխատանքի ընթացքում առաջացած խնդիրների հաղթահարման կարողություններ,
- Համակարգչային տեխնիկայի գերազանց տիրապետում,
- Հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուների գերազանց իմացություն,
- Միջազգային մմանատիպ աշխատանքներում մասնակցության փորձառությունը և համապատասխան որակավորման դասընթացներին մասնակցությունը գերադասելի է:

**3. Վարչական ենթակայություն**

Տնօրենի օգնականը վարչականորեն հաշվետու է Հիմնադրամի տնօրենին և գտնվում է անմիջական ենթակայության ներքո:

**4. Այլ պարտականություններ**

Տնօրենի օգնականը պարտավոր է.

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

- կատարել կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ, ինչպես նաև ղեկավարի՝ օրենսդրությանը չհակասող և Ծրագրերի իրականացմանն առընչվող այլ հանձնարարություններ,
- առաջարկություններ ներկայացնել իր պաշտոնական պարտականությունների իրականացման և վերահսկման արդյունավետ համակարգերի ներդրման, ինչպես նաև գործող համակարգի բարելավման համար,
- առաջնորդվել հաստատված ընթացակարգերով և կանոնակարգերով, պահպանել գործավար էթիկայի նորմերը, աշխատանքային կարգապահությունը, հետևել իրեն հատկացված հիմնադրամի գույքի պահպանությանը,
- չտարածել աշխատանքի ընթացքում ստացած ցանկացած ծառայողական տեղեկատվություն՝ առանց ղեկավարի նախնական համաձայնության:

**Պաշտոնը՝ Օգնական-թարգմանիչ**

**1. Հիմնական առաջադրանքները**

1.1 Օգնական-թարգմանիչը իրականացնում է.

- ղեկավարի հանձնարարականների գրանցման, կատարողներին փոխանցման գործընթացները,
- Հոգաբարձուների խորհրդի, այլ խորհրդակցությունների օրակարգերի հարցերին առընչվող փաստաթղթերի հավաքում,
- իրականացվող Ծրագրերի և Հիմնադրամի գործունեությանն առընչվող թարգմանությունները՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով,
- նամակագրության և հաշվետվությունների ստուգումը՝ ձևի և կետադրական սխալների առումով,
- տեքստերի համակարգչային մշակման գործողությունները,
- Ծրագրերին առընչվող անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումը, համակարգումը և ներկայացումը ղեկավարին,
- բանակցությունների, խորհրդակցությունների և այլ հանդիպումների սղագրումները և դրանց արձանագրությունների կազմումը,
- բանակցությունների, խորհրդակցությունների և այլ հանդիպումների ժամանակ բանավոր թարգմանությունները:

1.2 Պարտականությունների շրջանակներում կատարում է ղեկավարի այլ հանձնարարականները:

**2. Որակավորման պահանջները**

Օգնական-թարգմանիչը պետք է ունենա

- բարձրագույն կրթություն,
- ոչ պակաս 2/երկու/ տարվա աշխատանքային փորձ,
- աշխատանքի ընթացքում առաջացած խնդիրների հաղթահարման կարողություններ,
- Համակարգչային տեխնիկայի տիրապետում,
- Հայերենի, անգլերենի և ռուսերենի իմացությունը պարտադիր է, այլ օտար լեզուների իմացությունը գերադասելի է,
- Նմանատիպ աշխատանքներում մասնակցության փորձառությունը և համապատասխան որակավորման դասընթացներին մասնակցությունը գերադասելի է:

**3. Վարչական ենթակայություն**

Օգնական-թարգմանիչը վարչականորեն հաշվետու է հիմնադրամի ջեռուցման ծրագրի համակարգողին և գտնվում է նրա ենթակայության ներքո:

**4. Այլ պարտականություններ**

Օգնական-թարգմանիչը պարտավոր է.

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

- կատարել կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ, ինչպես նաև ղեկավարի՝ օրենսդրությանը չհակասող և Ծրագրերի իրականացմանն առընչվող այլ հանձնարարություններ,
- առաջարկություններ ներկայացնել իր պաշտոնական պարտականությունների իրականացման և վերահսկման արդյունավետ համակարգերի ներդրման, ինչպես նաև գործող համակարգի բարելավման համար,
- առաջնորդվել հաստատված ընթացակարգերով և կանոնակարգերով, պահպանել գործավար էթիկայի նորմերը, աշխատանքային կարգապահությունը, հետևել իրեն հատկացված հիմնադրամի գույքի պահպանությանը,
- չտարածել աշխատանքի ընթացքում ստացած ցանկացած ծառայողական տեղեկատվություն՝ առանց ղեկավարի նախնական համաձայնության:

**Պաշտոնը՝ Թարգմանիչ**

**1. Հիմնական առաջադրանքները**

1.1 Թարգմանիչն իրականացնում է.

- Հիմնադրամի պաշտոնական և աշխատանքային փաստաթղթերի թարգմանություն՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով,
- բանակցությունների, խորհրդակցությունների և այլ հանդիպումների ժամանակ բանավոր թարգմանություն,
- Անհրաժեշտության դեպքում արտասահմանյան և տեղական մասնագետների հետ այցելելություններ տարբեր կազմակերպություններ և սահուն թարգմանության ապահովում:

1.2 Պարտականությունների շրջանակներում կատարում է ղեկավարի այլ հանձնարարականները:

**2. Որակավորման պահանջները**

Թարգմանիչը պետք է ունենա

- բարձրագույն կրթություն,
- ոչ պակաս քան 3/երեք/ տարվա մասնագիտական աշխատանքային փորձ,
- անգլերեն, հայերեն և ռուսերեն լեզուների գերազանց իմացություն,
- բանավոր և գրավոր թարգմանություններ իրականացնելու հմտություններ,
- Համակարգչային տեխնիկայի տիրապետումը,
- Էներգետիկայի և ֆինանսական ոլորտի տերմինաբանության իմացություն:

**3. Վարչական ենթակայություն**

Թարգմանիչը վարչականորեն հաշվետու է հիմնադրամի տնօրենին և գտնվում է նրա անմիջական ենթակայության ներքո:

**4. Այլ պարտականություններ**

Թարգմանիչը պարտավոր է.

- կատարել կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ, ինչպես նաև ղեկավարի՝ օրենսդրությանը չհակասող և Ծրագրերի իրականացմանն առընչվող այլ հանձնարարություններ,
- առաջարկություններ ներկայացնել իր պաշտոնական պարտականությունների իրականացման և վերահսկման արդյունավետ համակարգերի ներդրման, ինչպես նաև գործող համակարգի բարելավման համար,
- առաջնորդվել հաստատված ընթացակարգերով և կանոնակարգերով, պահպանել գործավար էթիկայի նորմերը, աշխատանքային կարգապահությունը, հետևել իրեն հատկացված հիմնադրամի գույքի պահպանությանը,
- չտարածել աշխատանքի ընթացքում ստացած ցանկացած ծառայողական տեղեկատվություն՝ առանց ղեկավարի նախնական համաձայնության:

**Պաշտոնը՝ Օգնական**

**1. Հիմնական առաջադրանքները**

1.1 Օգնականը իրականացնում է.

- ղեկավարի հանձնարարականների գրանցման, կատարողներին փոխանցման գործընթացները,
- Հոգաբարձուների խորհրդի, այլ խորհրդակցությունների օրակարգերի հարցերին առընչվող փաստաթղթերի հավաքում,
- նամակագրության և հաշվետվությունների ստուգումը՝ ձևի և կետադրական սխալների առումով,
- տեքստերի համակարգչային մշակման գործողությունները,
- Ծրագրերին առընչվող անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումը, համակարգումը և ներկայացումը ղեկավարին,
- բանակցությունների, խորհրդակցությունների և այլ հանդիպումների սղագրումները և դրանց արձանագրությունների կազմումը,

1.2 Պարտականությունների շրջանակներում կատարում է ղեկավարի այլ հանձնարարականները:

**2. Որակավորման պահանջները**

Օգնականը պետք է ունենա

- բարձրագույն կրթություն,
- աշխատանքային փորձ,
- աշխատանքի ընթացքում առաջացած խնդիրների հաղթահարման կարողություններ,
- Համակարգչային տեխնիկայի տիրապետում,
- Հայերենի, անգլերենի և ռուսերենի իմացությունը պարտադիր է, այլ օտար լեզուների իմացությունը գերադասելի է,
- Նմանատիպ աշխատանքներում մասնակցության փորձառությունը և համապատասխան որակավորման դասընթացներին մասնակցությունը գերադասելի է:

**3. Վարչական ենթակայություն**

Օգնականը վարչականորեն հաշվետու է հիմնադրամի ՏԱ/ԽԾ համակարգողին և գտնվում է նրա ենթակայության ներքո:

**4. Այլ պարտականություններ**

Օգնականը պարտավոր է.

- կատարել կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ, ինչպես նաև ղեկավարի՝ օրենսդրությանը չհակասող և Ծրագրերի իրականացմանն առընչվող այլ հանձնարարություններ,
- առաջարկություններ ներկայացնել իր պաշտոնական պարտականությունների իրականացման և վերահսկման արդյունավետ համակարգերի ներդրման, ինչպես նաև գործող համակարգի բարելավման համար,
- առաջնորդվել հաստատված ընթացակարգերով և կանոնակարգերով, պահպանել գործարար էթիկայի նորմերը, աշխատանքային կարգապահությունը, հետևել իրեն հատկացված հիմնադրամի գույքի պահպանությանը,
- չտարածել աշխատանքի ընթացքում ստացած ցանկացած ծառայողական տեղեկատվություն՝ առանց ղեկավարի նախնական համաձայնության:

**Հավելված 8 - Գործակալական պայմանագիր**

**Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Լ ՈՒ Թ Յ Ա Ն Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Բ**

Սույն պայմանագիրը կնքվել է 2006թ. հունվարի 16-ին Երևան քաղաքում, Հայաստանի Հանրապետության, (այսուհետ՝ Պրինցիպալ) ի դեմս Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, մի կողմից և Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի /այսուհետ՝ Հիմնադրամ կամ Գործակալ/ միջև մյուս կողմից, միասին նաև Կողմեր:

Կողմերը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Միջազգային զարգացման ընկերակցության (ՄՁԸ) և Հայաստանի Հանրապետության միջև 2005թվականի հուլիսի 20-ին կնքված «Զարգացման վարկի համաձայնագրով» (ՉՎՀ) ՄՁԸ-ն Հայաստանի Հանրապետությանը որպես փոխառություն տրամադրել է 10 (տասը) միլիոն Փոխառության հատուկ իրավունքին համարժեք գումար Զարգացման ջեռուցման ծրագրի (այսուհետ տեքստում՝ Ծրագիր) իրականացմանն աջակցելու համար, որը պետք է ապահովվի Հիմնադրամի կողմից ՀՀ և Հիմնադրամի միջև կնքված գործակալության պայմանագրի համաձայն, և

դեկավարվելով ՀՀ կառավարության 28 ապրիլի 2005 թվականի թիվ 799-Ն որոշման պահանջներով, կնքեցին սույն գործակալության պայմանագիրը ներքոգրյալ պայմանների մասին:

**1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ**

Կողմերը պայմանավորվում են, որ սույն պայմանագրում օգտագործվող տերմինները մեկնաբանվում են ՉՎՀ-ով սահմանված իմաստով, բովանդակությամբ և մեկնաբանություններով:

**2 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ**

- 2.1 Հիմնադրամը որպես գործակալ պարտավորվում է վարձատրությամբ Պրինցիպալի հանձնարարությամբ և նրա հաշվին, Պրինցիպալի անունից իրականացնել իրավաբանական և այլ գործողություններ կապված Ծրագրի նպատակների իրականացման հետ:
- 2.2 Գործակալը պարտավորվում է Ծրագրի շրջանակներում ապահովել ՉՎՀ-ի Հավելված 2-ով սահմանված Ծրագրի Ա, Բ2, Գ բաղադրիչներով նախատեսված գործողությունների /այսուհետ՝ Գործողություններ/ իրականացումը:
- 2.3 Պրինցիպալը սույն պայմանագրով հանձնարարում է Գործակալին իրականացնել նաև Հայաստանի Հանրապետության և ՄՁԸ-ի միջև կնքված և 2003թ ապրիլի 3-ին ուժի մեջ մտած «Կանխավճար քաղաքային ջերմամատակարարման առաջարկված ծրագրի նախապատրաստման համար No PPF Q 353-0-AM» Նամակ-համաձայնագրի շրջանակներում «Ջերմամատակարարման և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին աջակցության ծրագրեր ԾԻԳ»ՊՀ-ի կողմից կնքված և գործողության մեջ գտնվող քաղաքացիաիրավական պայմանագրերով /պայմանագրերի ցանկը համաձայն հավելված 1-ի/ պարտատիրոջ իրավունքների իրականացումը:

**3 ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

- 3.1 Սույն պայմանագրով նախատեսված Գործողությունների իրականացման համար Պրինցիպալը Գործակալին տրամադրում է միջոցներ հետևյալ չափերով՝

<b>Գործողությունների կատեգորիան</b>	<b>Միջոցների չափը (արտահայտված ՓՀԻ-ի համարժեքով)</b>
1. Ապրանքներ և աշխատանքներ	
1.1 դպրոցների ջեռուցման համակարգերի համար	3,330,000
1.2 այլնի համար	1,400,000
2. Խորհրդատվական ծառայություններ, ներառյալ աուդիտ	560,000
3. Վերապատրաստում	30,000
4. Դրամաշնորհներ	660,000

Միջոցները տրամադրվում են ՉՎՀ-ով սահմանված արժույթներով:

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

- 3.2 Պրինցիպալը միջոցները տրամադրում է Ծրագրի առանձին բաղադրիչների համար Ծրագրի կառավարման խորհրդի սահմանված չափերով, տվյալ ֆինանսական տարվա հաստատված նախահաշվի համաձայն, ՄՁԸ-ի կողմից սահմանված ձևի առհանձն հայտերի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ հատկացման համար հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի հիման վրա:
- 3.3 Ֆինանսավորման հայտերով պահանջվող գումարը չի կարող ավել լինել ըստ կատեգորիաների ՉՎՀ-ով սահմանված չափերից, եթե այլ բան չի որոշվի հետագայում ՀՀ-ի և ՄՁԸ-ի միջև:

**4 ԳՈՐԾԱԿԱԼԱԿԱՆ ՎԱՐՃԱՏՐՈՒԹՅՈՒՆ : ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՆ ԵՎ ՆԱԽԱՀԱՇՎԸ**

- 4.1 Գործակալական ծառայության համար Պրինցիպալը Գործակալին վճարում է գործակալական վճար մինչև 530,000 ՓՀԻ-ին համարժեք գումարի չափով, որը ներառում է ծառայության մատուցման համար Հիմնադրամի կատարած ծախսերի փոխհատուցումը, եկամուտը և ԱԱՀ-ն:
- 4.2 Գործակալական վարձատրությունը հատկացվում է ամսական մասերով՝ Ծրագրի տարեկան բյուջեի և ծախսերի նախահաշվի համաձայն, որը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատվում է Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի կողմից: Տվյալ ֆինանսական տարվա համար հաստատված նախահաշվի բացակայության դեպքում՝ մինչև նախահաշվի հաստատումը, տվյալ տարվա հատկացումները կատարվում են նախորդ տարվա նախահաշվի համամասնություններով:
- 4.3 Տվյալ տարվա ծախսերի արդյունքով տնտեսված գործակալական վարձատրության գումարները հանդիսանում են Գործակալի սեփականությունը և Պրինցիպալին ետ չեն վերադարձվում: Տնտեսված գործակալական վարձատրության գումարների ծախսման ուղղությունները համաձայնեցվում են Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի հետ:

**5 ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ: ԳՈՐԾԱԿԱԼԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- 5.1 Գործակալը Գործողություններ իրականացնելիս գործում է Ծրագրի շրջանակներում և հանդես է գալիս որպես արտաքին ֆինանսավորման ծրագրերով Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող միջոցների հաշվին ծրագրեր իրականացնող գրասենյակ՝ իրականացնելով գրասենյակներին ՀՀ օրենսդրությամբ վերապահված գործառնականություններ:
- 5.2 Ծրագրի իրականացման կապակցությամբ Գործակալի գործողությունների համակարգումն իրականացվում է Հիմնադրամի կառավարման բարձրագույն մարմնի՝ Հոգաբարձուների խորհրդի կողմից, որը հանդես է գալիս որպես ծրագրի կառավարման խորհուրդ:
- 5.3 Ծրագրի ընթացքի վերաբերյալ Գործակալը պարտավոր է Պրինցիպալին ներկայացնել սահմանված ձևով հաշվետվություններ որը դիտվում է որպես սույն պայմանագրի շրջանակներում հանձնարարության կատարման վերաբերյալ Գործակալի հաշվետվություն:
- 5.4 Հիմնադրամի գործառնականություններն են.

5.4.1 որպես Հայաստանի Հանրապետության գործակալ, միջազգային պայմանագրերով սահմանված գնումների ընթացակարգերին համապատասխան Հայաստանի Հանրապետության անունից և Հայաստանի Հանրապետության հաշվին կնքում է գործարքներ և կատարում դրանցից բխող պատվիրատուի իրավունքներն ու պարտավորությունները,

5.4.2 ծրագրի շրջանակներում աշխատանքների իրականացման ժամանակացույցի և նախահաշվի կազմումը ,

5.4.3 ծրագրի շրջանակներում ապրանքների, աշխատանքների և ծառայությունների տարեկան գնումների պլանի կազմումը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանն ու ծրագրի ընդգրկման բնագավառի պետական կառավարման մարմնին ներկայացնելը.

5.4.4 ծրագրի շրջանակներում ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման (գնումների) նպատակով մրցույթային փաստաթղթերի (ներառյալ տեխնիկական առաջադրանքը) պատրաստումը և մրցույթների անցկացումը, մրցույթային առաջարկների վերլուծումն ու գնահատումը,

5.4.5 ծրագրի շրջանակներում ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ձեռք բերման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության անունից պայմանագրերի կնքումը՝ մեկ միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք գումար (հայտերի գնահատման հանձնաժողովի կողմից հաղթողին առաջարկելու ամսաթվի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի սահմանած հաշվարկային փոխարժեքով) և ավելի գին ունեցող պայմանագրերը կնքելով բացառապես ՀՀ կառավարության կողմից պայմանագրի մյուս կողմին և գինն հավանություն տալու դեպքում, իսկ հիսուն հազար ԱՄՆ դոլարից մինչև մեկ մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար (հայտերի

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

գնահատման հանձնաժողովի կողմից հաղթողին առաջարկելու ամսաթվի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի սահմանած հաշվարկային փոխարժեքով) գին ունեցող պայմանագրերը կնքելով բացառապես պայմանագրի մյուս կողմին և գնին խորհրդի կողմից նախնական հավանության դեպքում,

5.4.6 ծրագրի իրականացման դիտարկումը (մոնիտորինգը), ներառյալ ֆինանսավորող կազմակերպության կողմից պահանջվող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ ծրագրի կատարման վիճակի վերաբերյալ հաշվետվություններ կազմելը և ներկայացնելը,

5.4.7 ծրագրով դրամական միջոցների մասհանումների համար անհրաժեշտ դիմումներ կազմելը և գանձապետարանի իրավասու պաշտոնատար անձանց ստորագրումից հետո դրանք ֆինանսավորող կազմակերպությանը ներկայացնելը,

5.4.8 կապալառուների և մատակարարների կողմից ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման նկատմամբ հսկողությունը, ներառյալ կատարված աշխատանքի արդյունքը տեխնիկական առաջադրանքին համապատասխանության ստուգումը, պարտավորության ոչ պատշաճ կատարման կամ չկատարման դեպքերում պարտքի, երաշխիքի, պատճառած վնասի բռնագանձման, աշխատանքների, ապրանքների ընդունումից հետո բացահայտված թերությունների վերացման կամ պարտավորության կատարման հարկադրելու պահանջներով պրինցիպալի անունից դատական պահանջների ներկայացումը և դատավարական բոլոր լիազորություններով դատարաններում հանդես գալը, հայցի հիմքը, առարկան, հայցապահանջի ծավալը և հայցից հրաժարվելու կամ հաշտություն կնքելու հարցերը նախապես համաձայնեցնելով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հետ, կամ հայցադիմումի ներկայացման համար համապատասխան նյութերի հանձնումը ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը,

5.4.9 անհրաժեշտ նախագծային աշխատանքների, փորձագիտական գնահատումների պատվիրումը ,

5.4.10 ծրագրի իրականացման հետ կապված վճարումների կատարումը, ՀՀ պետական բյուջեից տրամադրման ենթակա համաֆինանսավորման գումարների հատկացման համար բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչին հայտերի ներկայացումը,

5.4.11 ծրագրի շրջանակներում Հիմնադրամի կողմից ձեռք բերված ապրանքը, աշխատանքը և ծառայությունը միջազգային պայմանագրով կամ ՀՀ կառավարության կողմից որոշված շահառուին (պետական կառավարչական հիմնարկներ, համայնքներ, իրավաբանական կամ ֆիզիկական անձինք) հանձնման աշխատանքների իրականացումը կամ կազմակերպումը, ներառյալ Հայաստանի Հանրապետության անունից շահառուների հետ պետական գույքի ամրացման կամ նվիրաբերության պայմանագրերի կնքումը, եթե շահառուն Հայաստանի Հանրապետությունը չէ, ինչպես նաև այդ պայմանագրերով շահառուների պարտավորությունների կատարման հսկողությունը,

5.4.12 ՀՀ կառավարության սահմանված կարգով ամսական, եռամսյակային, տարեկան հաշվետվությունների ներկայացումը, ինչպես նաև ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ վերլուծական հաշվետվության ներկայացումը Հայաստանի Հանրապետության կառավարություն:

5.5 Մրցութային առաջարկների գնահատման համար ծրագրի շրջանակներում գործող գնահատման հանձնաժողովները ձևավորվում են ծրագրի կառավարման խորհրդի կողմից:

5.6 Ծրագրի շրջանակներում կատարված գնումների արդյունքը տեխնիկական առաջադրանքին չհամապատասխանելու պարագայում պայմանագրի մյուս կողմին վճարում կատարելու դեպքում պետական միջոցների ոչ արդյունավետ օգտագործման գույքային պատասխանատվությունը կրում է Հիմնադրամը՝ իր սեփականությունը հանդիսացող գույքով, թեկուզ ծրագրի շահառուն ընդունած լինի գնման արդյունքն առանց վերապահումների: Հիմնադրամն ազատվում է գույքային պատասխանատվությունից, եթե վճարումը կատարել է կապալառուի կողմից թերությունները վերացնելուց հետո, կամ ծրագրի կառավարման խորհրդի կողմից տվյալ գնման արդյունքին հավանություն տալուց հետո:

Մույն կետի իմաստով գնման արդյունքը համարվում է տեխնիկական առաջադրանքին չհամապատասխանող, եթե

ա) ապրանքների դեպքում՝ վաճառողի (մատակարարի) հանձնած ապրանքի տեսականին, պատկանելիքները, որակը կամ նկարագիրը չի համապատասխանում պայմանագրով որոշված տեսականուն, պատկանելիքներին, որակին կամ նկարագրին,

բ) աշխատանքների դեպքում՝ շինարարական աշխատանքի իրականացման համար օգտագործված նյութերի և/կամ սարքավորումների որակական հատկանիշները չեն համապատասխանում պայմանագրով որոշված որակական հատկանիշներին, ինչպես նաև կապալառուի (նախագծողի,

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

- հետագոտողի) աշխատանքի արդյունքը կամ դրա ցուցանիշները չեն համապատասխանում նախագծային փաստաթղթերին կամ դրանցում նշված ցուցանիշներին,
- գ) ծառայությունների դեպքում՝ կատարողի կողմից ներկայացված արդյունքը բովանդակային առումով չի համապատասխանում պայմանագրով սահմանված բովանդակությանը:
- 5.7 Գործակալը պարտավոր է՝
- ա) սույն պայմանագրի 2-րդ բաժնում նախատեսված միջոցներն օգտագործել բացառապես Ծրագրի իրականացման նպատակով,
  - բ) Պրինցիպալին անհապաղ տեղյակ պահել այնպիսի իրադրությունների վերաբերյալ, որոնք խոչընդոտում են կամ սպառնում են խոչընդոտել Ծրագրի շրջանակներում իրականացվող գործընթացին,
  - գ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել գործակալական պայմանագրով հատկացվող միջոցների հաշվառում և հաշվապահական վարում,
  - դ) իրականացնել ՄՁՎ-ով սահմանված Ծրագրի տարեկան աուդիտ՝ այդ նպատակով ընտրված անկախ աուդիտորական կազմակերպության կողմից, որը նաև համարվում է սույն պայմանագրով նախատեսված գործողությունների կատարման ընթացքի աուդիտ: Աուդիտի ընտրությունը կատարվում է ՁՎՀ-ով սահմանված կարգով: Ոչ ուշ, քան հարկային տարվա ավարտից վեց ամիս հետո Գործակալը պարտավոր է Պրինցիպալին ներկայացնել տվյալ ֆինանսական տարվա աուդիտի հաշվետվությունները:
- Սույն պայմանագրի շրջանակներում իրականացված գործողությունների ստուգման կամ առանձին աուդիտ անցկացնելու Պրինցիպալի պահանջի դեպքում աուդիտորական կազմակերպությունը ընտրվում և վճարումները կատարվում են Պրինցիպալի կողմից և հաշվին: Պրինցիպալի իրավասու ստորաբաժանման կողմից իրականացվող ստուգման ծախսերը ևս կատարվում են Պրինցիպալի հաշվին,
- ե) Պրինցիպալի աուդիտորների և վերստուգողների համար մատչելի դարձնել ծրագրի իրականացման կապակցությամբ իր հաշվապահական գրառումները և այլ տեղեկատվությունը:
- 5.8 Պրինցիպալի հետ համաձայնեցնելուց հետո Գործակալը կարող է սույն պայմանագրով նախատեսված գործողությունների կամ դրանց մի մասի կատարումը լիազորել երրորդ անձի՝ ենթագործակալության պայմանագրի համաձայն:
- 5.9 Հոգաբարձուների խորհրդի որոշումները պարտադիր են Հիմնադրամի համար, որպես Պրինցիպալի կողմից Գործակալին տրված ցուցում, որից սակայն Գործակալը կարող է շեղվել, եթե ապացուցում է, որ գործի հանգամանքներից ելնելով դա անհրաժեշտ է ի շահ Պրինցիպալի: Այդ դեպքում Հիմնադրամը պետք է նախաձեռնի խորհրդի արտահերթ նիստի հրավիրում և խորհրդի կողմից նախկին որոշումը չփոխելու դեպքում Հիմնադրամը պարտավոր է կատարել այն, առանց կրելու դրանից բխող ՀՀ պատճառվող հնարավոր վնասների գծով գույքային պատասխանատվության ռիսկը:

**6 ԾՐԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՆՅՈՒՑԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ: ԳՈՐԾԱԿԱԼԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎՆԵՐԸ**

- 6.1 Գործակալական պայմանագրի շրջանակներում Գործակալի կողմից կառավարվող միջոցները համարվում են պետական միջոցներ, որոնց ծախսման իրավասությունը սույն գործակալության պայմանագրի հիման վրա վերապահվում է Գործակալին:
- 6.2 Գործակալական միջոցների հաշվին ձեռքբերված (զնված) նյութական ու ոչ նյութական արժեքները համարվում են պետական սեփականություն, քանի դեռ դրանք չեն հանձնվել Ծրագրի շահառուներին, իսկ վերջիններիս՝ օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնելու դեպքում, համարվում են նրանց սեփականությունը:
- 6.3 Ծրագրի շրջանակներում վճարումների հետ կապված գործառնությունների սպասարկման համար առևտրային բանկերում բացվում է առանձին բանկային հաշիվ (հաշիվներ) (այսուհետ՝ Ծրագրի բանկային հաշիվ), որում առկա գումարների սեփականատերը Հայաստանի Հանրապետությունն է, որը գործակալության պայմանագրով լիազորել է Հիմնադրամին հաշվից վճարումներ կատարել Ծրագրի իրականացման նպատակով:
- 6.4 Հիմնադրամի պահպանման ծախսերի սպասարկման համար բացվում է առանձին բանկային հաշիվ (հաշիվներ) (այսուհետ՝ Հիմնադրամի բանկային հաշիվ), որում առկա գումարների սեփականատերը

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

- Հիմնադրամն է: Հիմնադրամի բանկային հաշվով չեն կարող իրականացվել Ծրագրի իրականացման հետ կապված վճարային գործառնությունները և հակառակը:
- 6.5 Հիմնադրամի կողմից Ծրագրի բանկային հաշիվների բացումը և դրա հետ կապված համաձայնեցումները կատարվում են ՉՎՀ-ով սահմանված կարգով:
- 6.6 Գործակալը պարտավոր է եռամսյակը մեկ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը ծանուցել Ծրագրի բանկային հաշիվների վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝ սպասարկող բանկը, դրա գտնվելու վայրը, հաշվեհամարը, արժույթի տեսակը, մնացորդի նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույքը, հաշվից միջոցներ ելքագրելու լիազորություն ունեցող անձանց անուն ազգանունը, բնակության վայրը, անձնագրային տվյալները, կամ ներկայացնել հավաստում, որ նախորդ եռամսյակում ներկայացված տեղեկատվությունը չի փոխվել:
- 6.7 Հիմնադրամի պարտավորություններով կալանք, արգելանք կարող է կիրառվել և բռնագանձում տարածվել միայն Հիմնադրամի բանկային հաշվի և գույքի վրա:
- 6.8 ՉՎՀ-ի դրույթների համաձայն Ծրագրի բանկային հաշիվների նկատմամբ երրորդ անձանց որևէ պահանջատիրական գործողություններով որպես հիմնական պատասխանող դատական մարմիններում հանդես է գալիս բացառապես Պրինցիպալը:
- 6.9 Հիմնադրամը պարտավոր է Ծրագրի բանկային հաշիվը սպասարկող բանկին տալ հրահանգ այն մասին, որ Ծրագրի բանկային հաշվի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը, որպես Պրինցիպալի ներկայացուցչի, չի կարող որակվել որպես Հիմնադրամի բանկային գաղտնիքի հրապարակում:
- 6.10 Մույն պայմանագրի 2.3 կետով նախատեսված Գործողությունների կատարման ընթացքում շահառուների հետ կնքված ապրանքային կամ դրամական փոխառությունների վերադարձից ստացվող գումարները (մայր գումար, տոկոս և տույժ) մուտքագրվում են այդ նպատակի համար առևտրային բանկում բացված Հիմնադրամի առանձին բանկային հաշվին: Հավաքագրվող գումարները յուրաքանչյուր տարվա վերջում առանձնացվում են փոխառությունների հիմնական գումարի և տոկոսների /տույժեր/ գումարների, ընդ որում տոկոսների /տույժեր/ գումարների սեփականատերը հանդիսանում է Հիմնադրամը, որը տնօրինում է դրանք և կարող է ծախսել Հիմնադրամի կանոնադրությամբ սահմանված նպատակներով Հոգաբարձուների խորհրդի որոշմամբ սահմանված ուղղություններով: Իսկ հիմնական գումարի սեփականատերը հանդիսանում է Պրինցիպալը: Հիմնական գումարը ուղղվում է լրացուցիչ վարկի համաձայնագրով սահմանված ենթավարկային ռեսուրսների համարմանը:
- 6.11 Գործակալության պայմանագրի շրջանակներում ծրագրի հաշվառումը (ծրագրի միջոցների ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը և ծրագրի ընթացքի վերաբերյալ տրամադրվող հաշվետվությունները) Հիմնադրամը պարտավոր է վարել նաև ծրագրի արժույթով:
- 6.12 Գործակալը Գործողությունների համար հատկացված միջոցները, ինչպես նաև սույն պայմանագրի 2.3 կետով նախատեսված գործողությունների կատարման արդյունքում հավաքագրված միջոցները, որոնք ժամանակավորապես ազատ են և չեն տեղաբաշխվել, կարող են Գործակալի կողմից որպես ավանդ ներդրվել Պրինցիպալի կողմից ընդունելի բանկերում. ընդ որում Գործակալը ստանձնում է դրանց կորստի ռիսկը: Ավանդի տոկոսները համարվում են Հիմնադրամի սեփականությունը և կարող են ծախսվել Հիմնադրամի կանոնադրությամբ սահմանված նպատակներով Հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

**7 ԳՈՐԾԱԿԱԼԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԱՍՎՈՒԹՅՈՒՆ**

- 7.1 Ծրագրի կատարման ընթացքում Գործակալի գործողություններով (անգործությամբ) և Գործակալի կողմից օգտագործվող առավել վտանգի աղբյուր հանդիսացող գույքով երրորդ անձանց պատճառված վնասի համար գույքային պատասխանատվությունը կրում է Գործակալը:

**8 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՍԵՅՈՒՄ**

- 8.1 Պրինցիպալն իրավունք ունի սույն պայմանագրի շրջանակներում Գործողությունների կատարումը կասեցնել, եթե համարի, որ առկա են հետևյալ հանգամանքները.
- 8.1.1 առաջացել է այնպիսի արտակարգ իրադրություն, որի հետևանքով հիմնավոր տարակուսանք է առաջացել Գործակալի կողմից համաձայնագրով ստանձնած պարտականությունները կատարելու կապակցությամբ,
- 8.1.2 Հայաստանի Հանրապետության՝ ՄՁԸ վարկից միջոցներ ստանալու իրավունքն ամբողջությամբ կամ մասնակիորեն կասեցված, չեղյալ հայտարարված կամ դադարեցված

**Հայաստանի Վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայողության Հիմնադրամ  
Գործառնական ձեռնարկ**

լինելու, կամ ՁՎՀ-ի պայմանների համաձայն ժամկետից շուտ վարկը մարելու պարտավորություն ծագած լինելու դեպքում:

- 8.2 Անկախ չեղյալ հայտարարելու կամ կասեցնելու հանգամանքներից, սույն պայմանագրի բոլոր դրույթները մնում են ուժի մեջ այնքանով, որքանով դրանք կարգավորում են Հիմնադրամի և Պրինցիպալի միջև առկա հարաբերությունները:
- 8.3 Կասեցումը, պետք է դադարեցվի Պրինցիպալի որոշմամբ, եթե վերացած լինեն այն հանգամանքները, որոնք կասեցման հիմք են հանդիսացել:

**9 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ**

9.1 Պրինցիպալն իրավունք ունի պայմանագրի վաղաժամկետ դադարեցման պահանջ ներկայացնել Գործակալին ներքոգրյալ իրադարձություններից որևէ մեկը առանձին կամ միասին վրա հասնելու դեպքում (որոնք որակվում են որպես **էական խախտման կամ հանգամանքների էական փոփոխության դեպք**).

- 9.1.1 Դատարանը սկսել է Գործակալի նկատմամբ սնանկության իրավական վարույթ,
- 9.1.2 Գործակալի ֆինանսական վիճակի վատթարացումը, որը հավաստվում է ներկայացված ֆինանսական հաշվետվություններով և/կամ աուդիտի եզրակացությամբ,
- 9.1.3 Գործակալության պայմանագրով տրամադրված միջոցների ոչ ծրագրային նպատակներով օգտագործման, կամ սույն պայմանագրի 4.4 կետում նշված հաշվետվություններում ոչ ճիշտ տեղեկատվություն ներկայացնելը, որը նպատակ է հետապնդել ապակողմնորոշել Պրինցիպալին,
- 9.1.4 Եթե ՁՎՀ-ում նախատեսված իրադարձությունների առաջ գալուն պես ՄՁԸ-ն Հայաստանի Հանրապետությունից պահանջի, որ վարկի հիմնական գումարն անհապաղ վճարվի: Տվյալ դեպքը հիմք չէ Հիմնադրամի կողմից Պրինցիպալի դեմ վնասի հայց հարուցելու համար:

9.2 Վաղաժամկետ դադարեցման պահանջը Պրինցիպալը Հիմնադրամին պետք է ներկայացնի գրավոր, ՄՁԸ-ի հետ համաձայնեցնելուց հետո, բացառությամբ 9.1.1 կետով նախատեսված դեպքի: Կողմերը պարտավորվում են իրականացնել միմյանց նկատմամբ իրենց բոլոր պարտավորությունները, այդ թվում վճարային, պահանջը ստանալուց երկու շաբաթվա ընթացքում:

**10 ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**10.1 Կիրառվող օրենսդրություն և վեճերի լուծում**

Սույն պայմանագիրը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ: Սույն պայմանագրի առնչությամբ ծագած վիճելի հարցերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում դատական կարգով:

**10.2 Ծանուցումներ**

Սույն պայմանագրի շրջանակներում բոլոր ծանուցումները և այլ հաղորդակցությունները պետք է լինեն գրավոր և հանձնվեն անձամբ (գրավոր ստացականով) կամ ուղղարկվեն ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով ներքոհիշյալ համապատասխան ֆաքսի համարով կամ էլեկտրոնային փոստի հասցեով կամ պատվիրված նամակով՝ կողմի հասցեով:

**10.3 Լրացումներ**

Սույն պայմանագիրը կարող է լրացվել և փոփոխվել միայն Կողմերի գրավոր համաձայնությամբ՝ երկկողմանի ստորագրված մեկ փաստաթուղթ կազմելու ձևով: Յանկացած միակողմանի գրություն և դրան տրված գրավոր պատասխան կամ լռություն չի կարող մեկնաբանվել որպես սույն պայմանագրի փոփոխություն կամ լրացում:

**10.4 Փոխանցում և գրավադրում**

10.4.1 Հիմնադրամն իրավունք չունի փոխանցելու սույն պայմանագրից ծագող իր իրավունքներն ու պարտականություններն այլ անձի առանց Պրինցիպալի նախնական գրավոր համաձայնության:

10.4.2 Պրինցիպալը սույն պայմանագրի գործողության ցանկացած պահի սույն պայմանագրից ծագած իր պահանջի իրավունքը կարող է փոխանցել ՀՀ տարածքում գործող որևէ այլ անձի՝ ՄՁԸ-ի հետ համաձայնեցնելուց հետո: Նման փոխանցման դեպքում Հիմնադրամը պարտավոր է կատարել սույն